



Ա Ի Ե Տ Ի Ք

ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐԲՈՒԹԵԱՆ



Հայր Մեսրոպի յիշատակին՝

*«Կը յորդորեմ ձեզ,
 ես Տիրոջ կալանաւորը,
 ապրեցէ՛ք ձեր ընդունած
 կոչումին արժանի կեանքով՝
 ամենայն խոնարհութեամբ,
 հեզութեամբ եւ համբերութեամբ:
 Հանդուրժեցէ՛ք իրարու՝ սիրով.
 պահպանեցէ՛ք Հոգիին միաբանութիւնը
 խաղաղութեան գօղով:
 Մէկ է Մարմինը եւ մէկ՝ Հոգին,
 ինչպէս նաեւ մէկ է
 յոյսը ձեր կոչումին:
 Մէկ է Տէրը, մէկ է հաւատքը,
 մէկ է մկրտութիւնը,
 եւ մէկ է Աստուած՝ հայր ամենուն,
 ամենէն վեր, ամենուն հետ եւ ամենուն մէջ»:*

(Եփես 4, 1-6)

Հայր Մեսրոպ Մ. Վարդապետ Ճուրեանի (1931-2008) յիշատակին, անոր մահուան քառասունքին, «Աւետիք» յատուկ գրքոյկ մը հրատարակեց, որպէս յաւելուած թիւ 1, որուն ընդմէջէն կ'արտայայտէ յարգանք, երախտագիտութիւն, շնորհակալութիւն եւ սէր պարբերաթերթիս խմբագրապետ վարդապետին հանդէպ:

Յարգանք՝ անձին հանդէպ, որպէս կրօնաւոր հայ մարդ, որուն մարդկային, ազգային եւ հոգեւոր յատկութիւններուն մասին կը վկայեն բոլոր անոնք, որոնք ճանչցան վարդապետը ու ապրեցան իր հետ:

Երախտագիտութիւն՝ երկարամեայ կրթական եւ հրատարակչական մարզերուն ընդմէջէն իր դաստիարակչական նպաստին հանդէպ, որմէ օգտուեցան բոլոր անոնք որոնք աշակերտեցան իրեն եւ կամ կարգացին անոր գրութիւնները:

Շնորհակալութիւն՝ գիտական աշխատանքին համար, որ նուաճումներ արձանագրեց, թերեւս համեստ, սակայն ճամբայ բացաւ մտածողութեան արժեւորման դիմաց, եւ յատկապէս ծիսական աշխարհը մերձեցուց արդի աշխարհի պահանջներուն: Հայ Կաթողիկէ Պատրիարքութեան «Աւետիք» պաշտօնաթերթի էջերը լաւագոյնս կը վկայեն:

Եւ սէր: Հայր Մեսրոպին կեանքին մէջ քաջարեցեան այս տողերը լաւագոյնս կ'արտայայտեն թէ հայր Մեսրոպի սիրտը ուր էր եւ է, եւ թէ ան զինք սիրողները դէպի ուր կ'առաջնորդեր եւ կ'առաջնորդէ:

«Սէրըս ուղղած եմ իսկապէս իրեն,
Այդ սէրը երբէք չի ճանչնար վախճան
Վեր է այս կեանքէն, վեր է եւ շիրմէն,
Կը կրէ կընիքն ան՝ յաւերժութեան»:

(Հ. Քաջարեանց, «Մատեան Խորհուրդի», Պէյրութ 1980, էջ 137):

«Աւետիք» պաշտօնաթերթը յաջորդաբար ի լոյս պիտի ընծայէ գիտական մատենագիտութիւնը հայր Մեսրոպին բոլոր յօդուածներուն:

Ամենապատիւ Հոգեւոր Տիրոջ անմիջական խնդրանքով պիտի վերահրատարակուին անոր յօդուածները, մէկ կամ աւելի հատորներու մէջ:

Թ Ո Ւ Ղ Թ Շ Ր Ջ Ա Բ Ե Ր Ա Կ Ա Ն

ՔԱՀԱՆԱՆԵՐՈՒ ՍՐԲՈՒԹԵԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՂՕԹՔԻ ՕՐՈՒԱՆ ԱՌԹԻՒ



ՈՂՁՈՅՆ ԵՒ ԱՍՏՈՒԱԾԱԻԱՆԴ ՕՐՅՆՈՒԹԻՒՆ

*Պատուական Արհի- Արքեպիսկոպոսներուն, Եպիսկոպոսներուն, Գեր-
յարգելի եւ Գերապատիւ Վարդապետներուն եւ Արժանապատիւ Քահա-
նաներուն:*

ՔԱՅԱՆԱՅԱԿԱՆ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ

*Երջանկայիշատակ Յովհաննէս Պօղոս Բ. Սրբազան Քահանայապետը,
Յիսուսի Ամենասուրբ Սրտի տօնին առիթով, Քահանաներու Սրբութեան
Միջազգային Աղօթքի Օրը հաստատեց: Անցեալ տարի, մենք եւս մեր
Պատրիարքական Աթոռին՝ Զմմառու Վանքին մէջ գումարեցինք Քահա-
նայից Վերանորոգումի Համաժողով մը, զիտակից ըլլալով որ մեզի
յանձնուած ժողովուրդը հոգեպէս վերանորոգելու եւ սրբացնելու համար՝
հարկ է որ նախապէս մենք սրբանանք եւ վերանորոգուինք: Ամէն օր,
սուրբ Պատարագին սկիզբը՝ հաւատացեալներուն առջեւ կ'ընդունինք մեր
մեղաւոր ըլլալը եւ կը խոստովանինք, ըսելով՝ «Ոոստովանիմ առաջի Աս-*

տուժոյ եւ սրբուհւոյ Աստուածածնի եւ առաջի ամենայն սրբոց՝ զամենայն մեղս գոր գործեալ եմ: Քանզի մեղայ խորհրդով, բանիւ եւ գործով... մեղա՛յ մեղա՛յ: Աղաչեմ զձեզ, խնդրեցէ՛ք վասն իմ յԱստուծոյ զթողութիւն»: Այս աղօթքը կը յիշեցնէ մեզի մեր մեղքերու վրայ խորհրդածելու կարեւորութիւնը եւ սուրբ Հոգիին օգնութեամբ նոր արահետներ որոնելու, հանդիպելու համար ամէն օր Յարուցեալ Քրիստոսի դէմքին:

ԱՂՕԹՔ ԵՒ ԳՈՐԾՈՒՆԵՌՈՒԹԻՒՆ

Հարկ է շեշտել, թէ քահանային աղօթքը անոր կատարած գործին մէջ գերադասելի եւ գերակշիռ դեր ունի, որովհետեւ քահանային ստանձնած առաքելութեան ու հովուական գործունէութեան արդիւնքը կախեալ է անոր աղօթքի կեանքէն, կախեալ է Յիսուսի հետ անոր անձնական յարաբերութենէն: Հովուական առաքելութեան անհրաժեշտ սնունդը՝ աղօթքն է: Բենեդիկտոս ԺԶ. Սրբազան Քահանայապետը, «Աստուած Սէր է» իր առաջին Շրջաբերական Թուղթին մէջ, կը գրէ. «Ատենը հասած է վերարժեւորելու աղօթքին կարեւորութիւնը ի դիմաց աքթիվիզմի եւ հետզհետէ ծաւալող աշխարհականացումի» (թիւ 37):

Յարգելի եղբայրներ, մենք կանչուած ենք ըլլալու Աստուծոյ Գթութեան փորձագէտները, համոզուած ըլլալով որ աստուածային գթութիւնը կը գերազանցէ մեր մարդկային սահմանափակումները եւ մեզի կ'ոսուցանէ ներել իրարու: Այս ձեւով, մենք կը դառնանք Աստուծոյ Գթութիւնը սփռող միջնորդներ՝ վիրաւոր մարդկութիւնը դարմանելու համար:

Մենք կանչուած ենք մեր քահանայական կոչումը ապրելու հաւատքով եւ խնդրութեամբ, քանի որ մեր քահանայական կեանքը կ'արժեւորուի ո՛չ թէ մեր գործունէութիւններով, այլ՝ Քրիստոսի փրկչագործութեան ծրագրին մեր մասնակցութեամբ: Ասոր համար՝ մենք չենք երկնջիր Քրիստոսին նմանելու ամէն բանի մէջ, ցմահ: Մեր տիպարը Քրիստոսն է: Ան մեզմէ կը խնդրէ որ իրեն հետեւինք եւ ըլլանք բոլոր տնեցիները լուսաւորող աշտանակի վրայ դրուած ճրագներ (տես Մտթ 5, 15): Այս նպատակին հասնելու համար, եղբայրներ, պարտինք ներթափանցել մեր կեանքը, քանի որ Յիսուս աւելի կարեւորութիւն կ'ընծայէ մեր իսկութեան, քան թէ մեր գործունէութեան: Մեր առաջնահերթ մտահոգութիւնը պիտի ըլլայ աղօթքի կեանքը, որուն հոգեւոր պտուղները պիտի քաղենք մեր հովուական գործունէութիւնները կատարելու ատեն, յատկապէս աղքատներուն, տառապեալներուն ու մանաւանդ Աստուծոյ խօսքին ծարաւ հոգիներուն մօտ:

Հովիւին պարտականութիւնն է աղօթել իրեն յանձնուած հաւատացեալներուն համար, աղօթել անոնց համար, որոնք աղօթել չեն գիտեր կամ չեն ուզեր եւ կամ աղօթելու ժամանակ չունին: Հովիւին համար Աստուծոյ աղօթելը՝ անոր հովուական առաջնահերթ զբաղումն ըլլալու է: Սաղմոսերգուն կ'ըսէ. «Քու խօսքդ իմ ոտքերուս ճրագ է եւ իմ շաւիղներուս՝

լոյս» (Մղ 119, 105):

Մեր բազմազբազդու թիւնը դժբախտաբար քահանաներս կը մղէ շատ անգամ գոհելու մեր հոգեւոր կեանքը, հակառակ որ գիտակից ենք թէ մտածական աղօթքով եւ ամփոփումով պատրաստուած սուրբ Պատարագը կրնայ մեծապէս լուսաւորել մեր առօրեայ գործունէութիւնը եւ մեր մարդկային փոխ յարաբերութիւնները: Իսկ ժամասացութիւնը կ'օժանդակէ մեզի աւելի ընտելանալու Աստուծոյ խօսքին հետ, Յիսուս աւելի լաւ ճանչնալու եւ անոր հետ մտերմանալու: Ժամասացութեան յատկացուած պահը՝ ո՛չ թէ կորսուած ժամանակ է, այլ հովուական գործին մաս կազմող թանկագին օժանդակութիւն մըն է:

ՄԵՐ ՆՕՐԱՑՈՂ ՇԱՐՔԵՐԸ

Մեր կղերական նօրացող շարքերը մեզ անբաւարար դարձուցած են մեզի յանձնուած պարտականութիւնները կատարելու եւ նորանոր առաքելավայրերը հոգալու, յատկապէս Արեւելեան Եւրոպայի անհամար կարիքներուն պարագային: Այս իրավիճակը սակայն պէտք չէ մեզ յուսահատութեան մատնէ, այլ մեզ աւելի խթանէ եւ աւելի յանձնառու եւ համոզկեր քարոզիչներ դարձնէ, որպէսզի կրկնապատկուած եռանդով Աւետարանին հարազատ վկաները հանդիսանանք: Եւ որովհետեւ մեր թիւը նօրացած է, Յիսուս մեզ կը հրաւիրէ՝ բարձր դրուած աշտանակի վրայ աւելի շողոզողուն ճրագներ ըլլալու, որպէսզի մեզ դիտողները ա՛լ աւելի լուսաւորուին:

Քահանայական կոչումներուն առատութեան կամ սակաւութեան հարցը մեծ մասամբ կախեալ է քահանաներու կեանքէն ու վարքէն: Հոն ուր քահանաները վերանորոգ ներքին կեանք մը կ'ապրին, այնտեղ անպատճառ կոչումներ կը ծաղկին: Քահանայական նոր կոչումներուն ծաղկումը՝ մեր յոյսի աղբիւրն է: Սակայն կոչումներ որոնելու համար՝ հարկ է նաեւ յղանալ հովուական յատուկ ծրագրեր ու չվարանիլ երիտասարդները յորդորել որ Յիսուսի հետեւին՝ միակը որ կարող է գոհացում տալ անոնց սիրոյ անձկութեան եւ երջանկութեան պապակին:

ԻՆՉՊԵՍ ՎԱՐՈՒԻԼ

Մեր հովուական բազմաթիւ կարիքներուն դիմաց՝ մեր ներկայ կղերին թիւով անբաւարարութիւնը կրնայ ոմանց յուսալքումի առաջնորդել: Բենեդիկտոս Ժ.Չ. Սրբազան Քահանայապետը այս լուրջ հարցին շուրջ Ալպանոյի քահանաներուն շնորհած տեսակցութեան մը ընթացքին այսպէս կ'արտայայտուէր. «Ամէն օր ինծի բազմապիսի իրադարձութիւններ կը ներկայանան, որոնց բոլորին պատասխան տալ եւ կարող չեմ: Կրցածս կը կատարեմ, ջանալով անոնց մէջէն առաջնահերթութիւնները զատորոշել: Ժողովրդապետը իր բազմատեսակ գործերուն դիմաց՝ ան եւս ինք-

զինք առանձին կը զգայ: Անոր կ'ըսեմ թէ իր առաջին գործը պիտի ըլլայ՝ խոնարհաբար ճանչնալ իր սահմանափակութիւնը եւ յօժարիլ իր գործին մեծ բաժինը յանձնելու Տիրոջ»: Ապա Սրբազան Պապը իբր օրինակ կը բերէ Աւետարանին հաւատարիմ ծառային առակը, «որ Տէրը պատասխանատու կարգեց տնեցիներուն վրայ, որպէսզի իր «ատենին» կերակուր տայ անոնց» (Մատթ 24, 45): Այս խոհեմ եւ իմաստուն ծառան գիտէ իր գործերը յարմար ատենին եւ այլազան ժամանակին մէջ խոնարհութեամբ կատարել, ապահով ըլլալով որ կը վայելէ իր տիրոջ վստահութիւնը:

Բենեդիկտոս ԺԶ. Սրբազան Պապը կը խրախուսէ քահանաները, որ «իրենց ոտքերը գետին ամրացուած եւ իրենց աչքերը երկինք սեւեռած պահեն» եւ կ'աւելցնէ. «Քրիստոնէութեան էութիւնը չի կայանար միայն ճշմարտութիւններ դիզելու մէջ: Աւետարանացումի լաւագոյն ձեւը՝ կը մնայ սիրոյ կեանքը»:

Անհրաժեշտ կը նկատեմ որ Սրբազան Քահանայապետին քարոզները եւ ճառերը կարդանք, որպէսզի մօտէն հետեւինք Եկեղեցւոյ կեանքի իրադարձութիւններուն, ինչպէս նաեւ կաթողիկէ վարդապետութեան մեկնաբանութիւններուն՝ պատասխան տալու համար նորերուկ եւ թիւր ուսուցումներուն, որոնք կը վխտան ամենուրեք: Որքա՛ն հոգեւոր է նաեւ կարդալ մեզի ժամանակակից սուրբերուն եւ երանելիներուն վարքը, իրազեկ դառնալու համար այս հարազատ քրիստոնեաներու կեանքին եւ նեղութիւններուն կամ հալածանքներուն ատեն իրենց վարուելակերպին:

Քահանային համար հարկաւոր է նաեւ ապաշխարանքի սուրբ խորհուրդին մերձենալ, որպէսզի ըմբռնէ եւ վայելէ Աստուծոյ սէրը եւ ողորմութիւնը, ապա իր հերթին՝ համոզիչ յորդորներով քաջալերէ յատկապէս կարծրասիրտ հաւատացեալները, որ մերձենան այս սրբարար խորհուրդին:

ՅՈՒԿԻՆ ԵՒ ՀՕՏԸ

Երբեմն կարգ մը քահանաներ կը գանգատին, թէ ի՛նչ ալ ընեն՝ ապարդիւն է, որովհետեւ մարդիկ իրենց մտիկ չեն ըներ, այլ աշխարհի քարոզչութեան աւելի կը հաւատան եւ անոր կը հետեւին: Այս պատճառով, կը խորհին թէ իրենց ուժերը ընդունայն կը սպառեն: Ճիշդ է թէ աշխարհի քարոզչութիւնը յաճախ հրապուրիչ կերպարանք ունի, որովհետեւ անոր գործածած քարոզչական միջոցները՝ գիտութիւն դարձած են: Բայց եւ այնպէս, Եկեղեցւոյ հովիւները ընդհանրապէս կը շարունակեն ժողովուրդին անժխտելի վստահութիւնը վայելել երբ իրենց անբասիր կեանքով կը ցոլացնեն Քրիստոսի բարեգութ եւ քաղցր դէմքը եւ հաւատարմութեամբ կը կատարեն իրենց հովուական պարտականութիւնները: Սուրբ Պետրոս կ'ըսէ. «Հովուեցէ՛ք ձեզի յանձնուած Աստուծոյ Հօտը, Աստուծոյ կամքին համաձայն անոր վրայ հսկեցէ՛ք, ո՛չ թէ ստիպումով, այլ սիրով, ո՛չ թէ գձուձ ակնկալութեամբ, այլ յօժարութեամբ» (Ա. Պետ 5,2): Վարձ-

կանը կը տարբերի հովիւէն, որովհետեւ ան «հոգ չընէր ոչխարներուն վրայ» (Յովհ 10, 13): Վարձկանին համար կարեւորը՝ շա՛հն է, մինչդեռ «բարի հովիւը իր կեանքը կը զոհէ ոչխարներուն համար» (Յովհ 10, 11):

Եկեղեցականը իր ժողովուրդէն ընդունուելու համար՝ անոր հետ պարտի վարուել իբր հայր, դաստիարակ եւ մխիթարիչ, եւ «ո՛չ թէ իրեն բաժին յանձնուած հօտին վրայ տիրելով, այլ անոր օրինակ հանդիսանալով» (Ա. Պետ 5, 3): Զմոռնանք որ հօտին գլուխը մենք՝ հովիւներս չենք, մեր հօտը Աստուծո՛յ կը պատկանի:

Յիսուս իր բարեգուծ սիրտը կը փոխանցէ մեզի՝ քահանաներուս, որ պէսզի մենք ալ մեր կարգին մեր սրտերը տանք ժողովուրդին: Մէրն ու զթուլթիւնը Աստուծո՛մէ առնե՛նք եւ զանոնք մարդոց բաշխե՛նք:

ՔԱՅԱՆԱՅԱԿԱՆ ՈԳԻՆ

Հարկ է վերադառնալ Յիսուսի քահանայական խոնարհութեան եւ սրտակցութեան օրինակին, կ'ըսէ Սրբազան Պապը, որպէսզի կարենանք իրապէս մասնակից դառնալ անոր փրկարար գործին: Քրիստոսի իր առաքեալներու կատարած ոտնյուրան՝ նորութիւն կը հանդիսանայ Նոր Ուխտի Քահանայութեան համար: Այս խորապէս խոնարհ կեցուածքին մէջն է, որ կ'իրագործուի Նոր Քահանայութիւնը, Քրիստոս սրտակցելով մեզի մեր տկարութիւններուն, մեր վիշտերուն, մեր փորձութիւններուն՝ անդադար կերպով:

Ուստի, քահանայական ոգին հակառակ է ասպարէզ փնտրելու ցանկութեան եւ յաջողելու մարմաջին: Քահանայական հոգին հակառակ է եկեղեցական բարձր պաշտօններու հետապնդումին, որ փոխանակ ուրիշին ծառայութիւն մատուցանելու՝ կը ձգտի ծառայութիւնները իբր առիթ գործածել, կարեւոր անձնաւորութիւն մը դառնալու համար: Այսպէս վարուեցան Զեբեդէոսի որդիները՝ Յակոբոս եւ Յովհաննէս, որոնք խնդրեցին լաւագոյն տեղերը ունենալ երկինքի արքայութեան մէջ, այսինքն՝ Յիսուսի աջ ու ձախ կողմը բազմիլ: Քրիստոսի հարազատ աշակերտը ձգտելու է մէ՛կ նպատակի, որ է մասնակցիլ Յիսուսի առաքելութեան եւ չարչարանքներուն, առանց որեւէ վարձատրութիւն ակնկալելու:

Քրիստոնեան - որքա՛ն աւելի՞ քահանան - կանչուած է հետեւելու Քրիստոսի ծառայական կերպին, իր կեանքը ուրիշներու համար անսակարկ զոհելով: Ասիկա է «նեղ դուռը», որմէ քահանան պէտք է անցնի, որպէսզի Աստուծոյ արքայութիւնը նախ ի՛նք մտնէ եւ ապա աշխատի իր հոգածութեան յանձնուած ժողովուրդը մտցնել: Եկեղեցականը պէտք չէ փնտռէ իր «ես»ը, իշխանութիւնը եւ յաջողութիւնը, այլ պարտի ապրիլ խոնարհաբար, Քրիստոսի նման՝ ինքզինք նուիրելով Եկեղեցոյ եւ իր հօտին, որովհետեւ մարդուն իսկական մեծութիւնը կը կայանայ ծառայելու եւ ո՛չ թէ տիրելու մէջ:

Եկեղեցականներս, երիտասարդ ըլլանք թէ տարիքով յառաջացած, լաւ

ըմբռնելու ենք տառապանքին եւ փորձութիւններուն անհրաժեշտութիւնն ու նշանակութիւնը մեր կեանքին մէջ, ինչպէս նաեւ զանոնք կրելու եւ գերազանցելու կերպը: Այսպէս՝ մեր կեանքը կ'ամրապնդուի եւ կը ճոխանայ: Սեւեռելով մեր աչքերը դէպի Յիսուսի վէրքերը, աւելի լաւ պիտի ըմբռնենք անոր կրած չարչարանքներուն ու մահուան անողոք վայրագութիւնը: Պիտի հասկնանք նաեւ թէ անո՛նք եղան Քրիստոսի յաղթանակին կնիքը, եղան անոր սիրոյն նշանը մեզի հանդէպ: Հետեւաբար մենք ալ պէտք է սիրով տանինք ամէն տագնապ եւ նեղութիւն, որոնք յառաջ կու գան կեանքէն կամ ուրիշի հետ ապրելու դժուարութեան: Տառապանքի երկար ուղեւորութեան ընթացքին է, որ կը զարգանայ մեր սէրը: Այսպէս՝ աւելի լաւ պիտի հասկնանք ու գնահատենք Խաչին եւ Յարութեան միջեւ գոյութիւն ունեցող անքակտելի զօրը:

ԵԿԵՂԵՑԻՆ ՅԱՂԹԱԿԱՆ

Սուրբ Յովհաննէս իր առաջին թուղթին մէջ կը գրէ. «Ով որ Աստուծո՛ւմէ ծնած է, կը յաղթէ աշխարհին: Եւ այս է յաղթանակը, որ տարուեցաւ աշխարհի դէմ. մեր հաւատքը» (Ա. Յովհ 5, 4):

Բողոքականութեան հիմնուելուն եւ Եւրոպայի մէջ արագ տարածումին դիմաց՝ մարդիկ կարծեցին թէ Կաթողիկէ Եկեղեցին իր վերջին տարիները կ'ապրի: Եւ ահա Տրիդենտեան Ժողովը գումարուեցաւ եւ ան Եկեղեցին վերաշխուժացուց ու զայն մեծապէս կենսունակ դարձուց, մանաւանդ երբ որ նոյն շրջանին մեծանուն սուրբեր հրապարակ եկան:

Հիթլեր օր մը գոչեց. «Նախախնամութիւնը զիս, կաթողիկէս՝ ընտրեց, որպէսզի վերջ տամ կաթողիկէ կրօնքին: Մի միայն կաթողիկէ մը կրնայ քանդել կաթողիկէութիւնը»: Խեղճ մարդը կը կարծէր թէ ինք Կաթողիկէութիւնը քանդելու կարողութիւնը ունէր:

Քարլ Մարքս եւ ուրիշներ եւս նոյնը մտածեցին: Պատմութիւնը փաստեց Եկեղեցիին ինչ աստիճան զօրաւոր ըլլալը եւ թէ Եկեղեցին միշտ յաղթական պիտի մնայ՝ Քրիստոսի իրեն հաղորդած կեանքով ու կենսունակութեամբ:

Եկեղեցւոյ նոր դարաշրջանի մարտահրաւէրները դիմագրաւելու կարողութեան մեծագոյն փաստը եղաւ Վատիկանեան Բ. Տրիդենտեան Ժողովը եւ անոր բերած նոր ոգին, նոր ըմբռնումները եւ նոր լոյսը: Ապա Քրիստոսի Յարութեան փաստն են նաեւ մեր ժամանակներուն անհամար սուրբերը եւ երանելիները, որոնք խորաններու վրայ բարձրացան Յովհաննէս Պողոս Բ. Պապի կողմէ, որոնցմէ էր հայագրի Երանելի Իգնատիոս Մալոյեանը:

ՍՈՒՐԲԵՐԸ

Այս տուեալները մեզի անգամ մը եւս կը յիշեցնեն, թէ ո՛վ որ իր կեան-

քը եւ իր գործը Աստուծոյ Խօսքին վրայ կը կառուցանէ՝ զանոնք ժայռա-
նրման հիմերու վրայ կը կանգնէ: Այս պատճառով՝ մեր վստահութիւնը
Աստուծոյ հանդէպ միշտ անսասան պիտի մնայ:

Աստուած է միակ կերտողը սուրբերուն: Անոնք Աստուծոյ գլուխ գոր-
ծոցները կը հանդիսանան մահկանացուներու մէջ: Սակայն Ամենակա-
րողն Աստուած, սրբացումի այս գործին համար, քահանաներու կը կարօ-
տի: Սուրբերու կեանքը երբ կը կարդանք, հոն յաճախ կը հանդիպինք խոս-
տովանահայրերու կամ քահանաներու, որոնց խրատին հետեւելով՝ հաւա-
տացեալներ գտած են սրբութեան ճամբան: Եւ քանիներ իրենց կեանքը
փոխած են, հետեւելով իրենց հոգեւոր հօր ցուցմունքներուն:

Խօսքս անպայման չի վերաբերիր Եկեղեցւոյ կողմէ պաշտօնապէս
հռչակուած սուրբերուն կամ երանելիներուն, այլ սուրբ Պօղոսին կողմէ
«սուրբ» կոչուած այն քրիստոնեաներուն, որոնք իրենց կեանքի սրբա-
ցումը իբր հաստատ կոչում ընտրեցին: Անոնք այն այրերը եւ կիներն են,
զորս ամէն օր կը տեսնենք, որոնք մեր մէջ անշուք կերպով կ'ապրին,
առանց հասարակութեան ուշադրութիւնը գրաւելու: Ծնողներ, որոնք գի-
շեր ցերեկ լուռումունջ կը կատարեն իրենց պարտականութիւնները՝ մար-
դիկ, որոնք կը պայքարին բարոյական արժէքներու պաշտպանութեան
համար՝ քահանաներ, որոնք խոնարհութեամբ եւ եղբայրասիրութեամբ
կը նուիրուին Աստուծոյ սէրը իրենց շուրջ տարածելու գործին: Վերջա-
պէս՝ բազմաթիւ ուրիշներ, որոնց ծանօթ ենք մեր հովուական գործին
բերումով: Մենք քահանայ ձեռնադրուեցանք՝ նման սուրբեր կերտելու
համար:

ՓԱԿՈՒՄ

Այս հայրական խորհրդածութիւնները փակելէ առաջ, կը ցանկամ վեր-
ջիշեցնել թէ քահանային սրբութիւնը կը մնայ արդիւնաշատ աւետարա-
նացումին լաւագոյն երաշխաւորութիւնը: Որովհետեւ մեր բոլոր գործու-
նէութիւններուն մէջէն՝ մեր սրբութիւնն է ամենակարեւոր եւ ամէնէն
ազդեցիկ վկայութիւնը՝ մեզի յանձնուած հաւատացեալներուն եւ յատուկ
կերպով երիտասարդներուն մօտ: Սրբութիւնը մեզմէ կը պահանջէ նկա-
տառելի ուսում մը կատարել մեր հոգեւոր կեանքին մէջ եւ հովուական
քաջարի գործունէութիւնը ստանձնել, հեռու՝ մակերեսութենէն: Առ այս՝
հարկաւոր է տեւական կերպով մերձենալ սուրբ Հաղորդութեան եւ
Ապաշխարութեան սուրբ Խորհուրդներուն:

Այս Շրջաբերականը կը փակեմ սուրբ Պօղոսի կողոսացիներուն ուղ-
ղած հետեւեալ յորդորով. «Դուք ուրեմն՝ իբրեւ Աստուծոյ ընտրեալները,
«սուրբերը» եւ սիրելիները, լեցուեցէ՛ք գութով, ողորմութեամբ, քաղց-
րութեամբ, խոնարհութեամբ, հեզութեամբ եւ համբերութեամբ: Հան-
դուրժեցէ՛ք իրարու՝ փոխադարձ ներողամտութեամբ: Եթէ մէկը միւսին

դէմ գանգատ ունի, իրարու ներեցէ՛ք, ինչպէս որ Տէրը ձեզի ներեց Քրիստոսի միջոցաւ: Ամէն բանէ վեր՝ սիրո՛վ լեցուեցէ՛ք: Մէրը կատարելութեան զօղն է: Ասով՝ Քրիստոսի խաղաղութիւնը պիտի հաստատուի ձեր սրտերուն մէջ: Ա՛յս է նպատակը կոչին, որ ձեզ համախմբեց նոյն Մարմինին մէջ» (Կող 3, 12-15). Ամէն:

Սուրբ Կոյս Աստուածամայրը եւ քահանաներու մայրը թո՛ղ ըլլայ բոլորիս համար օրինակ խոնարհութեան եւ հովանի սրբութեան:

Հայրական սիրով եւ աղօթքով՝

✠ ՆԵՐՍԷՍ ՊԵՏՐՈՍ ԺԹ.

Կաթողիկոս Պատրիարք

Տանն Կիլիկիոյ Կաթողիկէ Հայոց

Տուեալ ի Կաթողիկոսական Աթոռոյս, որ ի Զմմառ,
յաւուր երեսներորդի, ամսեանն Մայիսի, յամի Տեառն 2008,
իններորդում ամի Հայրապետութեան Մերոյ
Ի Համաշխարհական Աւուրն Աղօթից վասն Սրբութեան Քահանայից

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՏԳԱՄ

ՄԱՅԻՍ ԱՄՍՈՒԱՆ ՈՒԽՏԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ՕՐՈՒԱՆ ԱՌԹԻՒ

ՉՄՍԱՌՈՒ ՏԵՐԱՄՕՐ ՎԱՆՔ
25 ՄԱՅԻՍ 2008

25 Մայիս 2008-ին, Զմմառու Տիրամօր վանքի ուխտագնացութեան օրը նշուեցաւ Մայիս ամսուայ վերջին Կիրակին: Հայրապետական սուրբ Պատարագի ընթացքին, տեղի ունեցաւ փոքր կարգերու տուչութիւն, որուն առթիւ, Հոգեւոր Տէրը տուաւ հետեւեալ պատգամը.

Յոյժ սիրելի եղբայրներ, քոյրեր եւ ուխտաւորներ,

Սիրեցեալ ապագայ քահանաներ,

Ամէն տարի, Մայիս ամսուայ վերջին Կիրակին, կը կատարենք այս արարողութիւնը ի պատիւ Աստուածամօր: Այսօր է նաեւ տարեկան Ուխտագնացութեան Օրը Զմմառու Վերափոխման Վանքին՝ մեր համայնքի գաւակներուն համար:

Ինչպէս գիտէք ուխտագնացութիւնը նուիրական օր մըն է պատասխանելու համար Յիսուսի հետեւեալ հարցումին. «Ի՞նչ կ'ուզես կատարել քու կեանքիդ մէջ»: Իրենց ապագային իմաստ տալու դիտումով, ոմանք կը պատասխանեն Յիսուսի կոչին քահանայութեան կամ կրօնաւորական կոչումով, ոմանք ընկերային ծառայութեան մէջ եւ կամ ալ իրենց քրիստոնեայ հաւատքին մասին քաջ վկայութիւն տալով: Այն երիտասարդներն ու երիտասարդուհիները, որոնք լրջօրէն կ'ապրին այսօրուայ ուխտագնացութեան խորհուրդը՝ Յիսուսին ձայնը լսելէ ետք, նոր համոզումներով ետ տուն կը դառնան, եւ իրենք գիրենք կը տրամադրեն անոր ծառայութեան՝ վկայութիւն տալով սուրբ Աւետարանին իրենց կենցաղով եւ գործերով: Անոնք ընդհանրապէս պատրաստ կ'ըլլան նուիրուելու Եկեղեցոյ եւ իրենց եղբայրներուն ծառայութեան, մանաւանդ՝ յուսալքուածնե-

րուն, մոռցուածներուն եւ տառապեալներուն:

Երբ դեռատի Մարիամ իր «Այո»ն ըսաւ Աստուծոյ կոչին՝ հրեշտակին բերնով, Յիսուսը յղացաւ իր արգանդին մէջ, այդ օրէն ի վեր մարդկային պատմութիւնը նոր հանգրուան մը թեւակոխեց, որովհետեւ Յիսուսի գալուստով կեանքը նոր իմաստ ստացաւ, ուր սէրը կը գերակշռէ: Նկատի առէք, որ սուրբ Կոյս Մարիամին «Այո»ն կը կրկնուի ամէն օր Եկեղեցւոյ զաւակներուն կողմէ նոր «Այո»ներով՝ արտասանուած Յիսուսի կոչին, ոչ անպայման եկեղեցականներու եւ կրօնաւորներու կողմէ, այլ ձեզի նման՝ համոզուած քրիստոնեաներէ, որոնք կ'ուզեն յանձնառու կերպով ապրիլ իրենց քրիստոնէի կոչումը ամէն ատեն եւ ամէն տեղ՝ տան մէջ, գործին մէջ, սրահին մէջ, եւ ամենուրեք ընկերութեան մէջ: Նման Աւետարանի վկաներ, բոլորիս ուրախութիւն կը պատճառեն՝ ներկայ տխուր եւ յուստեսութեան տանող աշխարհին մէջ: Անոնք իրենց քրիստոնէական սկզբունքներով եւ կեանքի ապրելակերպով կը վկայեն, թէ Քրիստոս՝ դրամէն, փայլուն դիրքէն եւ անձնասիրութենէն շատ աւելի կարեւոր է եւ աւելի շահաւոր՝ թէ՛ իրենց եւ թէ՛ ուրիշներուն համար: Որովհետեւ Քրիստոս ճշմարիտ երջանկութիւն կը շնորհէ բոլոր անոնց, որոնք խոնարհ հոգիով կ'ուզեն նոր բան մը սորվիլ եւ կը ձգտին յուսատու կեանք մը ապրիլ:

Այսօր պիտի կատարենք նաեւ երեք նուիրեալներու փոքր կարգերու տուչութիւնը: Այս ուրախ առիթը, այսինքն նոր կոչումներուն ընդունումը, կը նշանակէ նոր ոյժ մը հայթայթել թէ՛ Եկեղեցւոյ եւ թէ՛ քրիստոնեայ հասարակութեան: Անոնք կոչուած են իրենց միջավայրին մէջ սուրբ Աւետարանի ուրախութիւնը տարածելու, քանի որ ուր Քրիստոս կը քարոզուի՝ հոն կը ստեղծուի երջանիկ միջնորդութիւնները, նոյնիսկ երբ դժուարութիւնները չեն պակսիր: Այսպիսի պարագաներուն՝ յայտնի կ'ըլլայ, թէ ով հաւատք ունի: Հաւատացեալը այն անձն է, որ դժուար կացութեան ատեն իր աչքերը Աստուծոյ վրայ սեւեռած կը պահէ, եւ ան՝ որուն յոյսը չի ցնցուիր: Փորձութիւններու ժամանակ կը յայտնուի հաւատաւոր մարդը, կ'ըսէ սուրբ Պօղոս:

Այս ապագայ առաքեալները, ուր ալ դրկուին, պիտի ճանչցնեն Քրիստոսը, որովհետեւ նախ՝ անոնք տարիներու ընթացքին զայն ճանչցած են եւ դեռ կը ջանան աւելի լաւ ճանչնալ, ապա՝ համոզուած են անոր պատգամին: Անոնք նախ՝ իրենց ապրելակերպով, անկէ ետք՝ իրենց խօսքով, պիտի վկայեն, թէ Յիսուս իրենց սիրտը գոհացուցած է, որովհետեւ Յիսուս եղած է իրենց կեանքին տեւական ընկերը: Արդեօք կա՞յ աւելի վսեմ եւ աւելի խանդավառիչ բան մը, քան թէ կեանքին խօսքը, այսինքն Յիսուսի խօսքը սփռել մարդոց մէջ, խօսք մը, որ ըստ սուրբ Յովհաննէս Աւետարանիչին, սուրբ Հոգիին կենդանի ջուրն է:

Հայ Կաթողիկէ Եկեղեցին իր աշխարհասփիւռ տարածութեամբ կը տառապի առաքեալներու պակասէն եւ կարողութիւնը չունի տակաւին աւետարանումի գործը գոհացուցիչ կերպով կատարելու եւ պէտք եղած

ծառայութիւնները մատուցանելու մեր ցիրուցան հաւատացեալներուն: Աւետարանումի գործը կախեալ է առաւելաբար քահանաներու թէ՛ քանակէն եւ թէ՛ որակէն: Մեր ներկայ դժուար պայմաններուն մէջ, պէտք է խոստովանինք սակայն, որ մեր եկեղեցականներէն շատեր՝ եպիսկոպոս թէ՛ քահանայ, մեծ եռանդով եւ անկուն կամքով կը նուիրուին իրենց պարտականութիւններուն: Անոնք յաճախ մէկէ աւելի պաշտօնով ծանրաբեռնուած են: Ասոր համար, այս պատեհ առիթէն կ'ուզեմ օգտուիլ անոնց ներկայացնելու համար պատրիարքութեան անունով իմ հայրական ջերմ գնահատութեան եւ երախտագիտութեան զգացումներս իրենց հաւատարմութեան եւ պարտաճանաչութեան համար: Ամենակալն Աստուած, որ իրենց բոլոր զոհողութիւնները կը ճանչնայ, եւ որ ծածուկն ալ կը տեսնէ, զիրենք պիտի վարձատրէ յայտնապէս:

Յուսալից եմ, որ Յաւիտենական Քահանան, Յիսուս Քրիստոս, մեր եկեղեցւոյ համար նորանոր կոչումներ պիտի յարուցանէ, նաեւ ձեր շարքերէն, որպէսզի կարողանանք Քրիստոսի սէրը եւ ուրախութիւնը լաւագոյնս սփռել մեր հաւատացեալներուն մօտ ամենուրեք: Յատուկ կերպով ձեզմէ կը խնդրեմ որ ձեր աղօթքներուն մէջ յիշէք եկեղեցական դասը, մանաւանդ անոնք, որ ձեր հոգ հոգւոցովը կը զբաղին: Եւ Յիսուսի պատուէրին անսալով, յարատեւօրէն «աղօթեցէ՛ք հունձքի Տիրոջ, որ մշակներ զրկէ իր հունձքին համար» (Մատթ 9, 37):

Սիրելի նուիրեալներ, այս է ձեր առաքելութեան կեդրոնական բնաբանը՝ Քրիստոսը վկայել եւ ուրախութիւն սփռել, որպէսզի շատեր մասնակից դարձնէք ձեր ուրախութեան: Այս այեկոծեալ աշխարհին մէջ, պէտք է որ սուրբ ըլլաք եւ Աւետարանին լոյսը ճառագայթէք ձեր կեանքով, ձեր խօսքով, ձեր ապրումով, որպէսզի Յիսուսի ուրախութիւնը լեցնէ բոլորին սիրտերը: Միայն այս ձեռով է, որ պիտի կարենաք ամէնուն փոխանցել հարազատ երջանկութիւնը, մանաւանդ՝ տխուր, մռայլ ու յուսալքուած հոգիներուն, եւ որքան բազմաթիւ են անոնք ձեր շուրջ:

Սիրելիներ, եղէ՛ք Աւետարանի ուսուցման առաքեալներ, որովհետեւ Քրիստոս՝ բոլոր դժուար եւ յուսահատ պարագաներուն պատասխանը տուած է իր յարութեամբը, եւ քանիներ արդէն կ'ապրին այս համոզումով՝ խաղաղ եւ երջանիկ: Այս է մաղթանքս որ կը կատարեմ ապագայ քահանաներուդ, որոնց համար, ձեզմէ՝ սիրելի եղբայրներ եւ քոյրեր, կը խնդրեմ որ իրենց թիկունք հանդիսանաք, որպէսզի կարողանան սուրբ Աւետարանին ուրախութիւնը եւ յոյսը սփռել ուր որ ըլլան: Ամէն:

✠ ՆԵՐՍԷՍ ՊԵՏՐՈՍ ԺԹ.
Կաթողիկոս Պատրիարք
Տանն Կիլիկիոյ Կաթողիկէ Հայոց

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՏԳԱՄ

ՊԱՅԾԱՌԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ ՏՕՆԻՆ ԲԱՐԵՐԱՐՆԵՐՈՒՆ ԵՒ ՀԱՄԱՅՆ ԺՈՂՈՎՈՒՐԳԻՆ ԴԻՏԱՒՈՐՈՒԹԵԱՆ

Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱԽՈՐԻՉ - Ս. ԵՂԻԱ ԱԹՈՌԱՆԻՍՏ ԵԿԵՂԵՑԻ
29 ՅՈՒՆԻՍ 2008

Քրիստոսի Պայծառակերպութեան տօնին առթիւ, սուրբ Գրիգոր Լուսաւորիչ - սուրբ Նդիա աթոռանիստ եկեղեցւոյ մէջ, բարերարներուն եւ համայն ժողովուրդին դիտաւորութեան մատուցուած հայրապետական սուրբ Պատարագի ընթացքին, Հոգեւոր Տէրը յոյս հետեւեալ պատգամը.

Յոյժ սիրելի եղբայրներ եւ քոյրեր,

Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ՝ մեր այս Աթոռանիստ Եկեղեցւոյ պաշտպան սուրբը, Հայ ժողովուրդին մօտ ամէնէն աւելի համբաւ վայելող Սուրբն է: Բազմաթիւ եկեղեցիներ իր անունը կը կրեն, ինչպէս նաեւ վարժարաններ, ակումբներ եւ միութիւններ: Դարերու ընթացքին, Գրիգոր անունը այժմէական մնացած է եւ մինչեւ օրս բազմաթիւ ընտանիքներ իրենց զաւակները Գրիգոր կամ Կրէկուար կ'անուանեն: Ան է Հայ ժողովուրդին Լուսաւորիչը եւ բոլոր հայորդիներուն հայրը:

Թէեւ սուրբ Գրիգորի կեանքին մասին պատմական տուեալները մոռցնեն, եւ ինչ որ գիտենք անոր մասին աւանդութենէն մեզի հասած է, այսուհանդերձ պատմական որոշ ստոյգ տուեալներ ունինք: Գրիգոր դարձի բերաւ Տրդատ թագաւորը, եւ անոր հետ կարողացաւ քրիստոնեայ դարձնել ամբողջ Հայ ազգը: Ան ձեռնադրուեցաւ Կեսարիա՝ Ղեւոնդիոս մետրապոլիտին կողմէ եւ նշանակուեցաւ եպիսկոպոսապետ Հայաստանի: Իր որդին եւ աջակիցը՝ Արիստակէս եպիսկոպոսը, իրեն փոխարէն առաքեց մասնակցելու համար Նիկիոյ առաջին Տիեզերական ժողովին՝ 325-ին, որուն վճիռները ստորագրեց եւ զանոնք Հայաստան բերաւ:

Նոյնիսկ եթէ քրիստոնէութիւնը Հայաստան մուտք գործած էր առաջին դարերուն, մանաւանդ սուրբ Թադէոս առաքեալի քարոզութեամբ, այսուհանդերձ սուրբ Գրիգոր՝ Լուսաւորիչ անուանուեցաւ, որովհետեւ

ան եղաւ գերազանցօրէն հայ ժողովուրդին առաքեալը: Արդարեւ, ան քրիստոնեայ հաւատքը տարածեց ամբողջ Հայաստան երկրին մէջ, կազմակերպեց նորահիմն Եկեղեցիին եւ մանաւանդ՝ հռչակել տուաւ քրիստոնէութիւնը որպէս պետական կրօնք: Այս ձեւով, Հայաստան դարձաւ աշխարհի առաջին քրիստոնեայ երկիրը: Յիրաւի, սուրբ Գրիգոր Լուսաւորիչը Աստուծոյ պարգեւ մը եղաւ Հայ Ազգին համար:

Միրելիներ, մեր գոհաբանական աղօթքը բարձրացնենք առ Աստուած, որ իր անհուն բարերարութեամբը հաճեցաւ առաջին դարերէն իսկ մեզի շնորհել սուրբ Աւետարանի լոյսը, որ դարերու ընթացքին, մեր ժողովուրդին համար հանդիսացաւ «ճանապարհ, ճշմարտութիւն եւ կեանք» (Յովհ 14, 6):

Այդ փառաւոր օրէն ի վեր, հայ ժողովուրդը օրէ օր կը յառաջանայ՝ ունենալով իր հոգիին մէջ Աստուած, իր ձեռքին մէջ՝ սուրբ Աւետարանը, իր բերնին մէջ՝ սրբահիւս շարականները, իր սրտին մէջ՝ սուրբ Գրիգոր Լուսաւորիչը, եւ իր աչքերը սեւեռած դէպի երկինք՝ իր վերջին նաւահանգիստը:

«Անոր մտիկ ըրէք»: Աւետարանի խօսքերն են ասոնք, զոր Աստուած ուղղեց երեք առաքեալներուն՝ Պետրոսի, Յակոբի եւ Յովհաննէսի, երբ Յիսուս յանկարծ աստուածային կերպարանք առաւ Թաբոր լեռան վրայ: Այս խօսքերով, Աստուած ուղեց հասկցնել երեք առաքեալներուն եւ մեզի՝ անոնց յաջորդներուն, որ Յիսուսին պէտք է մտիկ ընել եւ անոր միայն հետեւիլ:

Մեր պապերը Յիսուսի խօսքին մտիկ ըրին, բարեպաշտ եւ խաղաղ կեանք ապրեցան՝ համեստութեամբ եւ երկիւղածութեամբ: Իրենց համար ամէն ինչ նուիրական էր եւ սուրբ՝ ընտանիքը, ամուսնութիւնը, գործը եւ հաւատարմութիւնը: Անոնք ոչ միայն կ'աղօթէին, այլեւ եկեղեցիներ կառուցեցին, որպէսզի Քրիստոսի անունը միշտ փառաւորուի: Անոնք Աստուծոյ օրհնութիւնը կը վայելէին, իրենց գործերը յաջող էին եւ անոնցմէ շատերն ալ՝ բարեկեցիկ էին:

Ինչ որ Աւետարանի խօսքէն եւ ոգիէն օտար էր, ինչպէս ստախօսութիւնը, մեծամոլութիւնը եւ անպարկեշտութիւնը՝ խորթ կը թուէր իրենց: Որպէս Յիսուսի՝ Բարի Հովիւին ոչխարները, անոնք միայն Յիսուսի ձայնին մտիկ կ'ընէին: Օտար գաղափարներու եւ աշխարհիկ խաբուսիկ ձայներու մտիկ չէին ընէր: Ճիշդ է, որ մեծ զարգացում չունէին ներկայ սերունդին պէս, բայց սուրբ Աւետարանին խօսքերը լաւ գիտէին, եւ աստուածային պատուիրանները զիրենք իմաստուն դարձուցած էին: Գիտէին, թէ ինչ բան լաւ է եւ պէտք է ընել, եւ ինչ բան է պէտք է խուսափիլ: Հաւատքը զիրենք կ'ողողէր, ըստ սաղմոսերգուին խօսքին. «Քու Ոսօքդ իմ ոտքերուս ճրագ է եւ իմ շաւիղներուս՝ լոյս» (Սղ 119, 105): Անոնք աստուածավախ կեանք ապրելէ ետք, սրբութեամբ մեռան եւ երկնքի արքայութեան արժանացան:

Բայց Յիսուսի մտիկ ընելու համար, հարկ է լաւ գիտնալ անոր խօսքե-

րը: Սուրբ Յերոնիմոս կ'ըսէ. «Ամբողջ սուրբ Գիրքը, հին եւ նոր կտակա-
րանները, կը խօսին Յիսուսի մասին: Ով որ կը ճանչնայ սուրբ Գիրքը, կը
ճանչնայ Յիսուսը եւ ով որ չի ճանչնար սուրբ Գիրքը Յիսուսն ալ չի ճանչ-
նար»: Ասոր համար, սիրելիներս, պարտիք յաճախ կարդալ Աստուծոյ
Խօսքը, անով աղօթել, անով մտածական աղօթք ընել, ինչպէս կ'ընեն հա-
րազատ քրիստոնէաները:

Գիտէք ինչո՞ւ համար սուրբ Գրիգոր՝ Լուսաւորիչ կոչուեցաւ: Որովհե-
տեւ, ան լուսաւորեց հայ ժողովուրդը հաւատքի լոյսով: Ուրեմն, ով որ կը
հաւատայ Քրիստոսին եւ անոր խօսքերուն՝ լուսաւորուած է եւ ով որ չի
հաւատար՝ մթուժեան մէջ կ'ապրի, որովհետեւ հաւատքը՝ կեանքի լուսա-
ւորութիւն է: Արդարեւ, Յիսուս ըսաւ. «Ով որ ինծի հետեւի, խաւարին
մէջ չի քալեր, այլ պիտի ընդունի կեանքի լոյսը» (Յովհ 8, 12):

Սիրելիներս, եղէք հաւատացեալներ՝ Լուսաւորչի հաւատքով, եղէք յոյ-
սի առաքեալներ՝ Լուսաւորչի յոյսով, բայց մանաւանդ՝ եղէք ներկայ սե-
րունդին մէջ տիպար հայորդիներ: Ամէն:

✠ ՆԵՐՍԷՍ ՊԵՏՐՈՍ ԺԹ.
Կաթողիկոս Պատրիարք
Տանն Կիլիկիոյ Կաթողիկէ Հայոց

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՏԳԱՄ

ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ՉԵՌՆԱԴՐՈՒԹԵԱՆ ԱՌԹԻՒ

ՀՈՌՄ, 8 ՅՈՒՆԻՍ 2008

Տանն Կիլիկիոյ կաթողիկէ հայոց Ամենապատիւ եւ Գերերջանիկ Տէր Ներսէս Պետրոս ԺԹ. Կաթողիկոս Պատրիարքը 8 Յունիս 2008-ին, Հոռոմ իր այցելութեան ընթացքին, սուրբ Նիկողայոս եկեղեցւոյ մէջ կատարեց պատրիարքական թմբի պալատահայ սարկաւազ՝ Տէր Միքայէլ Ուջարի քահանայական ձեռնադրութիւնը, որուն ընթացքին փոխանցեց հետեւեալ պատգամը.

*Միրելի եղբայրներ եւ քոյրեր,
Յոյժ սիրելի Տէր Միքայէլ,*

Մեծ ուրախութիւն մը մեզ կը պատէ այսօր Տէր Միքայէլ Ուջարի քահանայական ձեռնադրութեան առիթով: Շարունակելու համար մարդկութեան փրկչական գործը, Յիսուս Քրիստոս ամէն ազգէ եւ ամէն սերունդէ մարդ կ'ընտրէ իր աստուածային կամքին համաձայն: Արդարեւ, քահանայական կոչումը անձնական փափաք մը չէ, այլ՝ աստուածային ընտրութիւն մը: Յիսուս ըսաւ իր առաքեալներուն. «Դուք չէք որ ընտրեցիք զիս, այլ ես ձեզ ընտրեցի եւ հաստատեցի, որպէսզի երթաք եւ պտուղ տաք, եւ ձեր պտուղը մնայ, եւ ինչ որ ինդրէք Հօրմէն իմ անունովս՝ պիտի տայ ձեզի» (Յովհ 15, 16):

Իր «Թուղթ Ընդհանրական»ին մէջ, սուրբ Ներսէս Շնորհալի մեծ հայրապետը նոյն իմաստով իր խօսքը կ'ուղղէ քահանաներուն. «Այս ալ իմացէ՛ք, ձեր քահանայութեան անուանակոչումը մարդոցմէ չէ, ոչ ալ մարդու միջոցաւ, այլ՝ անկէ որ կոչուեցաւ քահանայ, Մելքիսեղեկի Կարգին համաձայն, որ ինքն իսկ ճշմարիտ Քահանայ է, Քահանայապետ եւ Պատարագ Հայր Աստուծոյ: Ան ձեզի տուաւ իր անուան կոչումը, միաժամանակ ձեզի յանձնարարեց իր գործը՝ հովուել իր ժողովուրդը, միշտ բարի գործեր սորվեցնել եւ բարի օրինակ հանդիսանալ բոլորին»:

Իր Լեհաստան այցելութեան ընթացքին, Բենեդիկտոս ԺԶ. Սրբազան

Քաճանայապետը հետեւեալ խօսքերը ուղղեց ներկայ քաճանաներուն. «Քաճանայէն կը պաճանջուի որ փորձառու ըլլայ՝ մարդոց օգնելու համար իրենց յարաբերութեան մէջ Աստուծոյ հետ», այսինքն քաճանան միջոցներ պէտք է հնարէ՝ Աստուծոյ մօտեցնելու ամէն մարդ, որովհետեւ լոյսը, իմաստութիւնը եւ փրկութիւնը Աստուծմէ են: «Կը պաճանջուի նաեւ քաճանայէն,- կը շարունակէ Սրբազան Պապը,- որ հմուտ ըլլայ հոգեւոր կեանքին մէջ: Հարկաւոր չէ որ ան ծանօթութիւն ունենայ վերջին լուրերուն եւ արդիական գիւտերուն. հաւատացեալները կը սպասեն քաճանայէն, որ ըլլայ վկայ Աստուծոյ ողորմութեան, վկայ՝ քրիստոնէական իմաստութեան, վկայ՝ սուրբ Աւետարանին: Ուստի, անոր կ'իյնայ իր հոգեւոր կեանքը հոգալ եւ մանաւանդ աղօթքի պաճերը չանտեսել, քանի որ աղօթքը հիմնաքարն է քաճանայի կեանքին եւ անոր յաջող առաքելութեան: Անով, իր յարաբերութիւնը Աստուծոյ հետ պիտի ըլլայ միշտ ջերմ եւ յարատեւ: Աղօթքը աւելն է քաճանայի կեանքին: Քրիստոս պէտք ունի այնպիսի քաճանաներու, որոնք հասուն ըլլան եւ արիասիրտ, եւ կարող ըլլան կիրարկելու մարդոց ի նպաստ ճշմարիտ հոգեւոր հայրութիւնը»:

Սուրբ Հաղորդութեան խորհուրդը, զոր քաճանան կը մատուցանէ ամէն օր, պարտի ըլլալ կենսական կեդրոնը եւ աղբիւրն ու հիմը քաճանային բոլոր գործունէութիւններուն: Անոր աշխատանքը արդիւնաբեր պիտի ըլլայ, երբ ան դառնայ յատուկ կերպով ուրիշ Քրիստոս մը, որովհետեւ միայն Քրիստոսը կարող է լուսաւորել եւ ուղղել ամէն մարդ: Աւելցնենք նաեւ, որ այսօր աւելի քան երբեք, յաջողութիւն գտնելու համար անհրաժեշտ է քաճանային որ ունենայ լուրջ զարգացում մը աստուածաբանական եւ սուրբ Գրային գիտութիւններուն մէջ: Ան պարտի խորանալ Եկեղեցւոյ վարդապետութեան մէջ ինչպէս նաեւ հետեւիլ սուրբ Աթոռին, Եպիսկոպոսաց Սիւնհոգոսներուն եւ տեղւոյն Առաջնորդին տուած ուղղութիւններուն: Բայց ամէն բանէ առաջ, ան պարտի մօտէն ճանչնալ Յիսուսը՝ աղօթքով եւ սուրբ Գիրքը կարգալով, ոչ թէ դասական ձեւով այլ հոգեւոր մօտեցումով: Պիտի սորվի այսպէս Յիսուսը լսել ու անոր հետ խօսակցիլ. այս ձեւով հասկցուած սուրբ Գիրքի ընթերցումը կը դառնայ սրտի աղօթք: Աւետարանիչները կը պատմեն, թէ Յիսուս յաճախ գիշերները լեռ կը քաշուէր առանձին՝ աղօթելու համար: Քաճանան եւս աղօթքի համար պէտք ունի առանձնութեան պահերու, որպէսզի Յիսուսի հետ անձնական յարաբերութիւն մշակէ: Այսպէս՝ պիտի կարենայ համոզիչ կերպով մարդոց քարոզել Քրիստոսի կեանքը եւ սուրբ Աւետարանը: Ուստի, քաճանան պարտի ըլլալ նախ եւ առաջ աղօթքի մարդ՝ ըլլալու համար Աստուծոյ մարդ:

Քաճանան պէտք է ըլլայ փափկասիրտ, յատուկ կերպով այրիին, որբին, բանտարկեալին, աղքատին, տկարին եւ հիւանդին հանդէպ, նմանապէս՝ տառապեալ եւ յուսալքուած անձերուն հետ, որոնց պէտք է ցուցաբերէ նաեւ յարգանք ու գուրգուրանք, անոնց օգնութեան հասնի եւ իրենց ցաւերը ամօքէ: Բոլորին հանդէպ, քաճանան պիտի ըլլայ հայր, դաստիարակ:

րակ եւ մխիթարիչ:

Քահանան իր կեանքի օրինակ պիտի նկատէ սուրբերը եւ երանելիները, որոնք անպակաս են մեր Եկեղեցւոյ մէջ, եւ անոնց նման՝ իր բոլոր կարողութիւնները ի սպաս պիտի դնէ Աստուծոյ սէրը եւ Աւետարանի ներումը տարածելու: Պիտի ըլլայ սիրոյ սերմնացան եւ վկայ Աւետարանի ուրախութեան՝ յաճախ տխուր եւ յոռետեսութեան տանող աշխարհի մը մէջ: Ամէնէն աւելի, ան պիտի անուցանէ որդիական անկեղծ բարեպաշտութիւն Աստուածամօր հանդէպ: Սուրբ Կոյսը, որպէս քահանային մայրը եւ աւետարանումի աստղը, պիտի օգնէ իրեն, որպէսզի աճի սիրոյ մէջ եւ տեւապէս յառաջդիմէ դէպի սրբութիւն՝ որ է կեանքի գագաթնակէտը, թէ քահանային եւ թէ ամէն մարդու համար:

Քահանային կարեւորագոյն մտահոգութիւններէն մին պիտի ըլլայ կոչումներուն հարցը, որովհետեւ մեր Եկեղեցիին կարիքները շատ են, իսկ մշակները սակաւաթիւ են: Այս պարտականութիւնը կը հայր նաեւ համայն քրիստոնեայ հասարակութեան եւ յատուկէն ձեզի՝ հոս ներկայ հաւատաւորներու: Աղօթեցէ՛ք յարատեւօրէն կոչումներուն համար, Յիսուսի պատուէրին համաձայն, որ ըսաւ՝ «աղաչեցէ՛ք հոլանձքի Տիրոջ, որ մշակներ դրկէ իր հոլանձքին համար» (Մատթ 9,37):

Կը փակեմ խօսքս խնդրելով բոլորէդ որ ձեր աղօթքներուն մէջ յիշէք ձեր Առաջնորդները եւ հոգեւոր հովիւները, եւ յատուկ կերպով Տէր Միքայէլ Ուջարը, որպէսզի Յիսուսի Սրտին համաձայն, արդիւնաշատ առաքելութիւն կատարէ: Թո՛ղ երանելի Իգնատիոս Մալոյեան հովանաւորէ զինք, բարեխօս ըլլայ իրեն եւ սրբութեան հասցնէ: Ամէն:

✠ ՆԵՐՍԷՍ ՊԵՏՐՈՍ ԺԹ.
Կաթողիկոս Պատրիարք
Տանն Կիլիկիոյ Կաթողիկէ Հայոց

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՏԳԱՄ

ՎԵՐԱՓՈԽՄԱՆ ՏՕՆԻՆ ԱՌԹԻԻ

ՉՄՍԱՌՈՒ ՏԻՐԱՄՕՐ ՎԱՆՔ
17 ՕԳՈՍՏՈՍ 2008

Կիրակի, 17 Օգոստոս 2008-ին, Աստուածածնի Վերափոխման տօնին առիթով, Զմմատու Փոխման Սրբոյ Կուսին վանքին մէջ մատուցած սուրբ Պատարագին ու խաղողորհնութեան ընթացքին, Հոգեւոր Տէրը հայերէնով եւ արաբերէնով տուաւ հետեւեալ պատգամը.

Յոյժ սիրելի ուխտաւոր եղբայրներ եւ քոյրեր,

Որքան ալ խօսինք սուրբ Աստուածածնի մասին եւ անոր կարեւոր դերին մեր կեանքին մէջ, միշտ ալ կարելի է գտնել խօսելու նոր յատկութիւններ եւ բարեմասնութիւններ մեր Երկնաւոր Մօր մասին, նման ծովուն անսպառելի ջուրին, որ որքան անկէ ջուր քաշես, կրնաս միշտ կրկին ու կրկին քաշել:

Այսօր կ'ուզեմ խօսիլ ձեզի սուրբ Կոյս Մարիամին «գեղեցիկ սիրոյն» մասին, ինչպէս զայն կոչեց բարեյիշատակ Յովհաննէս Պօղոս Բ. Քահանայապետը: Լաւ է մեզի համար զարգանալ Աստուածամօր այս «գեղեցիկ սիրոյ» դպրոցին մէջ, այսինքն՝ իրեն աշակերտիլ: Լաւ է սուրբ Կոյսէն քաղել, «գեղեցիկ սիրոյ» դասեր, կ'ըսէ Յովհաննէս Պօղոս Բ.: Այն ատեն, պիտի հասկնանք որ մեզ շրջապատող բոլոր դէպքերը իմաստ ունին եւ կը կազմեն հանդիպումի առիթներ Աստուծոյ հետ: Երբեմն կը խուսափինք այս հանդիպումներէն, երբ մեզի տհաճ թուին, որովհետեւ չենք ուզեր յաւելեալ նեղութիւններ քաշել, երբեմն ալ յոգնած կ'ըլլանք: Ճիշդ այդ պարագաներուն, սուրբ Կոյս Մարիամը օգնութեան կը հասնի մեզի: Ան մեզ լաւ կը ճանչնայ, ան գիտէ մեր տկարութիւնները, ան մեզ կը հասկնայ եւ մեզ միշտ կը լսէ: Որովհետեւ մեր Երկնային Մայրը, ոեւէ մօր նման, մեզ կը սիրէ ինչպէս որ ենք, նոյնիսկ մեր տկարութիւններովը, եւ ոչ միայն երբ բարի գտնուինք: Ան մեզ կը սիրէ առանց պայմանի: Մեզի համար կարեւոր է հոգեպէս աճիլ Աստուածամօր դպրոցին մէջ եւ պատրաստ ըլլալ իրմէ նոր բան մը սորվելու:

Սիրելի կը նշանակէ փարիլ լաւին եւ կառչիլ բարիքին ու ապրիլ բոլոր դէպքերը քրիստոնէական մօտեցումով: Երբ սիրենք, ամէն ինչ կը տեսնենք մաքուր աչքերով: Երբ սիրենք, կը փափաքինք որ ամէն ինչ ըլլայ այնպէս՝ ինչպէս Աստուած կ'ուզէ: Ոչ միայն, այլ Աստուծոյ մատը կը տեսնենք ամէն բանի մէջ, եւ այս ըմբռնումը եւ համոզումը մեր սրտին մէջ խաղաղութիւն կը ձգէ:

Սէրը՝ այն գոհարն է որուն պէտք ունի ամէն մարդ՝ երջանիկ ապրելու համար: Սէրը՝ մարդկային կեանքին կեդրոնն է: Մենք չենք բաւարարուիր միայն հարստութիւններ դիզելով կամ գնահատանք ու գովասանք ստանալով: Մենք կը փափաքինք նաեւ ամէն մարդ սիրել եւ զգալ որ բոլորին կողմէ սիրուած ենք, եթէ ոչ՝ երջանիկ չենք ըլլար: Երեւակայեցէք որ կան շատ մարդիկ, որոնք իրենց դրամը եւ ընկերային դիրքը կը շահագործեն մարդոցմէ սիրուելու համար: Մենք կը ցանկանք նաեւ կարենալ բոլորն ալ սիրել եւ անոնց տեղ տալ մեր սրտին մէջ: Մեր բնութիւնը այնպէս կազմուած է, որ սիրահար դառնանք, բառին ամէնէն խոր իմաստով: Յովհաննէս Պօղոս Բ-ը կ'ըսէ. «Մարդը առանց սիրոյ չի կրնար ապրիլ, առանց սիրոյ անոր կեանքը իմաստ չ'ունենար»:

Քրիստոնեան, այն անձն է որ կարողացած է իր ամենօրեայ գործին մէջ տեսնել Քրիստոսին սէրը: Ան է որ կը հասկնայ թէ Աստուած կ'ուզէ զինք երջանիկ դարձնել եւ իր կեանքը լիացնել ամենակարեւոր բարիքով, որ է սէրը: Յիսուս կը հրաւիրէ այդ անձը իր հետ բարեկամ դառնալու: Հարագատ քրիստոնեան խորապէս համոզուած է, որ կեանքի բոլոր դժուարութիւններով հանդերձ, Աստուած իսկապէս սէր է, հայր է եւ բարեխնամող մեզի հանդէպ:

Քանի Աստուած ունեցաւ նախաձեռնութիւնը մեզ սիրելու, մենք ի՞նչ ձեռով կրնանք համապատասխանել անոր սիրոյն: Պէտք ունինք նախ բարի օրինակ մը գտնել անոր հետեւելու համար, եւ նմանելու անոնց, որոնք մեզմէ առաջ նոյն փորձառութիւնը ունեցած են Աստուծոյ անհուն սիրոյ եւ ողորմութեան մասին, եւ որոնք հիմա յաւիտենապէս երջանիկ են Քրիստոսին հետ: Ինքնաբերաբար, հաւատացեալին նայուածքը կ'ուղղուի դէպի սուրբ Կոյս Մարիամը, որ է շնորհքներով լի, սուրբերուն թագուհի եւ արարածներուն ամէնէն գեղեցիկը, որպէսզի իրմէ սորվի սիրոյ դասերը: Մարիամ գեղեցիկ է, որովհետեւ սիրուած է սուրբ Երրորդութեան կողմէ: Աստուծոյ փայլը կը ցոլայ անոր երեսին վրայ եւ անոր սրտին մէջ:

Յովհաննէս Պօղոս Բ. կը հաստատէ թէ «գեղեցիկ սիրոյ» պատմութիւնը սկսաւ Մարիամին հետ՝ Աւետումին օրը: Իր «Եղիցի»ին միջոցաւ, Մարիամ դարձաւ Աստուծոյ մայրը: Նոյն ատեն, Մարիամ դարձաւ նաեւ մեր մայրը, որովհետեւ Մկրտութեան խորհուրդով մենք դարձանք եղբայրներ եւ քոյրեր Յիսուս Քրիստոսի: Մարիամ՝ սիրոյ պատգամին՝ երբեք ոչ չէ ըսած: Ան իր ամբողջ կեանքը ապրեցաւ Աստուծոյ կամքը կատարելով, նոյնիսկ ամենադժուար պահերուն: Ան յատուկ սէր ունեցաւ

բոլոր մարդոց հանդէպ ու բոլոր մեղաւորներուն հանդէպ, եւ ուրեմն՝ մեզի հանդէպ եւս:

Աստուած միլիոնաւորներուն մէջէն, մեզմէ ամէն մէկը ընտրած է որպէսզի անոր սիրտը լեցնէ իր սիրով եւ ան Աստուծոյ առջեւ շնորհալի է: Աստուծոյ սէրը մեզի հանդէպ գուտ պարզեւ մըն է, որուն մենք արժանի չենք եւ ոչ ալ իրաւունք ունինք զայն պահանջելու: Մեզի կ'իյնայ միայն զայն երախտագիտութեամբ ընդունիլ եւ անոր հետ համագործակցիլ, որպէսզի աճի մեր մէջ եւ մենք խաղաղ կեանք ունենանք:

Սիրելի եղբայրներ եւ քոյրեր, շատ անգամ կ'անտեսենք գեղեցիկ բաները դիտել կամ անոնց վրայ հիանալ, եւ կը բաւարարուինք մեր անձնական ճղճիմ իրագործումներով խանդավառուելով: «Ես աս ըսի, ես ան ըրի»: Մինչ մենք պարտինք Մարիամի նման հիանալ Աստուծոյ գործերուն վրայ՝ մեր կեանքին մէջ: Ան ըսաւ՝ «Հզօրը մեծ գործեր ըրաւ ինձի: Սուրբ է անոր Անունը» (ՂԿ 1, 49): Չըսաւ՝ ես մեծ գործեր ըրի: Աւօրեայ դէպքերը այս ակնոցով դիտել, կը նշանակէ զանոնք դիտել նոր նայուածքով մը, յաւիտենականութեան հեռանկարով: Ճիշդ է որ ամէն ինչ կ'անցնի, ճիշդ է որ ամէն ինչ վերջ ունի եւ մեր կեանքը շարունակական «մնաք բարով» մըն է: Ստոյգ է նաեւ, որ մենք չենք կրնար ցաւերը բոլորովին վերցնել ոչ մեզմէ եւ ոչ ալ ուրիշներէն: Բայց երբ մենք միացած ըլլանք Աստուծոյ հետ Մարիամի պէս, կը մասնակցինք Աստուծոյ ծրագիրներուն եւ շատ բարիք կրնանք ընել, եւ շատ ուրախութիւն կրնանք սփռել:

Աստուածամօր դպրոցին մէջ կը սորվինք նաեւ ապրիլ քրիստոնեայ կրօնքին նոր պատուիրանը, պատուիրան մը որ գոյութիւն չունէր Յիսուսէն առաջ, անիկա է՝ թշնամիներուն հանդէպ սէրը: Թշնամին, որուն մասին կը խօսի սուրբ Աւետարանը, չի գտնուիր միայն պատերազմի դաշտին վրայ: Ծատ անգամ, ան մեզի մօտ է, մեր դրացին է, մեր պաշտօնակիցն է, երբեմն ալ՝ մեր ազգականը: Ան՝ այն անձն է, որ մեզի վնաս կը հասցնէ, կամ ձեւով մը մեր ազատութիւնը կը կաշկանդէ: Ան՝ այն անձն է, որմէ փախուստ կ'ուզենք տալ եւ չենք յաջողիր, որուն հետ չենք ուզեր կապ ունենալ եւ որուն հանդէպ շատ անգամ ատելութիւն ունինք: Ան է մեր թշնամին: Արդ, ատելութիւնը քաղցկեղի կը նմանի, որ մարդը ներսէն կը կրծէ: Վրէժխնդրութիւնը եւ ռիսկալութիւնը մեր կեանքը կը թունաւորեն, ստեղծելով մեր սրտին մէջ տեսակ մը անհանգստութիւն եւ անգոհունակ վիճակ: Եթէ մէկը կ'ատենք, հանգիստ չենք:

Մենք՝ Աստուածածնի դպրոցին հետեւորդներս, ոչ միայն պարտինք ներել ուրիշներուն, այլ նաեւ քաջութիւն ունենալ իրենցմէ ներում խնդրելու: Պարտինք ներել, քանի որ մենք ալ մեղաւոր ենք եւ տակաւին արդար չենք: Ամէնքս պէտք ունինք ներումի, որովհետեւ ամէնքս՝ այս կամ այն ձեւով ուրիշներուն վնաս կամ նեղութիւն կը հասցնենք, երբեմն ալ առանց իսկ անդրադառնալու:

Սիրելի եղբայրներ եւ քոյրեր, ինչպէս որ Աստուած մեզ կը սիրէ, նոյնպէս պարտինք ուրիշները սիրել, որպէսզի ըլլանք Աստուծոյ հարազատ

որդիները: Բարի սամարացիին առակին համաձայն, մեր ընկերը՝ մեր ազգականը կամ մեր ծանօթը չէ անպայման, այլ նաեւ օտարականը: Որովհետեւ իսկական եղբայրասիրութիւնը սահման չունի:

Սիրելիներ, եթէ Մարիամ Աստուածածնին դպրոցին աշակերտինք, պիտի սորվինք ինչ ըսել է «բոլոր մարդիկը սիրել», առանց պահանջելու, որ նախ անոնք փոխուին, որպէսզի զիրենք սիրենք, ինչպէս որ ան՝ Մարիամ մեզ կը սիրէ առանց պայման դնելու՝ մեզ կը սիրէ ինչպէս որ ենք: Անոր մայրական սէրը որ պայման ու սահման չունի թող մեզի առաջնորդէ եւ մեզ հովանաւորէ մեր կեանքի բոլոր օրերը: Ամէն:

✠ ՆԵՐՍԷՍ ՊԵՏՐՈՍ ԺԹ.
Կաթողիկոս Պատրիարք
Տանն Կիլիկիոյ Կաթողիկէ Հայոց

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՏԳԱՄ

ԽԱՉՎԵՐԱՑԻ ՏՕՆԻՆ ԱՌԹԻԻ

ՍՈՒՐԲԻ ԽԱՉ ԵԿԵՂԵՑԻ, ԶԱԼՔԱ
14 ՍԵՊՏԵՄԲԵՐ 2008

Խաչվերացի Տօնին առիթով, Տանն Կիլիկիոյ Կաթողիկէ Հայոց Տէր Ներսէս Պետրոս ԺԹ. Կաթողիկոս Պատրիարքը, Կիրակի 14 Սեպտեմբեր 2008-ին Զալֆայի սուրբ Խաչ եկեղեցւոյ մէջ մատուցեց հայրապետական սուրբ Պատարագ, որուն ընթացքին փոխանցեց հետեւեալ պատգամը.

«Աստուած այնքան սիրեց աշխարհը, որ մինչեւ իսկ տուաւ իր Միածին Որդին, որպէսզի ան որ կը հաւատայ անոր, չկորսուի, այլ ընդունի յաւիտենական կեանքը» (Յովհ 3, 16):

Սիրելի եղբայրներ եւ քոյրեր,

Ինչպէս հայր մը իր զաւակներուն բարիքը կը փնտռէ ամէն գինով, նոյնիսկ մեծ զոհողութիւններ ընելով, նոյնքան եւ աւելի՛ Աստուած, մեր հայրը, չէր կրնար անտարբեր մնալ եւ ձգել որ մարդկութիւնը կորսուի իր մեղքերուն պատճառով: Որովհետեւ, մարդը մեղանչելով, սատանայի գերի դարձաւ եւ կարողութիւն չունէր այլեւս անկէ ձերբազատուելու, եւ սկսաւ հետզհետէ աւելի ու աւելի մեղանչելու, մանաւանդ հպարտութեան մեղքով, որ պատճառ է շատ մը ուրիշ մեղքերու՝ ինչպէս դրամասիրութիւնը եւ բարկութիւնը: Սուրբ Պօղոս, որ այս գերութեան ծանրութիւնը կը կրէր իր մարմնին մէջ, գայն կը նմանցնէ պայքարի մը բարիին եւ չարին միջեւ, զարմանալի արտայայտութիւն մը ունի. կ'ըսէ. «Բարին ուղեւը՝ ես կարող եմ, սակայն բարին գործելը՝ ես անկարող եմ, քանի որ չեմ ըներ բարին գոր կ'ուզեմ, այլ կը գործեմ չարը զոր չեմ ուզեր»: Եւ կը բացատրէ իր գաղափարը, ըսելով. «Եթէ ես կը գործեմ այն ինչ որ չեմ ուզեր, ես չեմ որ գայն կը գործեմ, այլ մեղքը որ կը բնակի իմ մէջս գայն կը գործէ» (Հռոմ 7, 19-20), եւ կը շարունակէ. «Ես տառապեալ մարդ մըն եմ, ո՞վ պիտի ազատէ զիս այս մահապարտ մարմինէն» (Հռոմ 7, 24): Ապա յուսալից պատասխան մը կու տայ. «Գոհութիւն Աստուծոյ՝ մեր Տիրոջ Յիսուս

Քրիստոսի միջոցաւ» (Հռոմ 7, 25): Սուրբ Պօղոսին այս տրամաբանութիւնը յատկօրէն կը լուսաբանէ մեր առօրեայ պայքարը չարին դէմ:

Յիսուս Քրիստոսի միջոցաւ, Աստուած մեզ ազատեց գերութեան վիճակէն: Ինչպէ՞ս: Իր Որդին մատնելով Խաչին մեզի համար: Անկէ վերջ, ով որ կը հաւատայ Խաչի խորհուրդին պիտի փրկուի: Բայց դիւրին չէ հաւատալ որ Խաչը, այսինքն դժուարութիւնները, նեղութիւնները եւ ցաւերը, որոնցմէ կ'ուզենք խուսափիլ, կրնան մեզ առաջնորդել յաւիտենական կեանքի:

Այդ համոզումին հասնելու համար, պարտինք աշխարհի մտայնութեանն հրաժարիլ եւ որդեգրել քրիստոնեայի մտայնութիւնը: Աշխարհի մտայնութիւնը մեզ կը մղէ փնտռելու մեր հանգիստը եւ մեր վայելքը: Աշխարհի մտայնութիւնը մեզ անձնասէր, փառասէր եւ դրամասէր կը դարձնէ: Մեր անձնական շահը միայն կը հետապնդենք, շատ անգամ սուտ խօսելով, ճերմակ սուտեր խօսելով, ինչպէս ոմանք կ'ըսեն իրենք գիրենք արդարացնելու համար: Բայց դուք լաւ գիտէք որ ճերմակ սուտ չկայ: Սուտը, պզտիկ կամ մեծ, միշտ սուտ է եւ չ'արդարանար, քանի Աստուծոյ պատուիրանին դէմ է: Ուրեմն, աշխարհի մտայնութիւնը մեզ մտահոգ կը ձգէ եւ երբեք չի կրնար մեզ երջանիկ դարձնել: Իսկ քրիստոնեայ մտայնութիւնը մեզ կը մղէ նմանելու Յիսուսին եւ սուրբերուն: Քրիստոնեայ մտայնութիւնը մեզ կը մղէ ուրիշներուն հանդէպ անտարբեր չմնալու: Մեզ կը մղէ հեռու մնալու մեղքէն, պզտիկ կամ մեծ, եւ առանց տրտունջի ընդունելու նեղութիւնները եւ առողջութեան տկարութիւնները: Անիկա մեզ կը մղէ ռի չպահելու մէկու մը հանդէպ, այլ՝ ներելու մեզի վնաս հասցնողներուն եւ ապրելու որպէս նոր արարածներ եւ վկայութիւն տալու սուրբ Աւետարանին: Այս քրիստոնեայ մտայնութիւնը անկարելի չէ: Ան մեզի խաղաղ սիրտ կը պարգեւէ եւ ուրախութիւն կը պատճառէ: Այս ուրախութիւնը կը զգանք մանաւանդ երբ ուրիշներուն բարիք ընենք, երբ կարենանք զանոնք ուրախացնել եւ մխիթարել՝ ինչպէս առանձին ապրողները, տկարները, հիւանդները, կարօտեալները եւ մանաւանդ մեղքի տակ ճնշուածները: Այս մտայնութեամբ ապրողները չեն փնտռեր ցուցամոլութիւնը եւ շահի կամ գովասանքի հետամուտ չեն, այլ լուրթեամբ կը գործեն, որովհետեւ կ'ուզեն հաճելի դառնալ միայն Յիսուսին եւ ոչ մարդոց, եւ գիտեն թէ Աստուած, որ կը տեսնէ ծածուկը, գիրենք պիտի վարձատրէ յայտնապէս:

Սիրելիներ, մեր մէջ ունինք երկու տարբեր մտայնութիւններ: Մին՝ աշխարհի մտայնութիւնը, որ մեր կեանքի հարցերուն լուծում չի կրնար տալ, այլ տխրութիւն կը պատճառէ եւ երբեմն ալ յուսալքումի կը տանի: Միւսը՝ քրիստոնեայ մտայնութիւնը, որ երջանկութեան եւ փրկութեան կը տանի: Մեզի կ'իյնայ անոնցմէ ընտրել լաւագոյնը, այսինքն՝ քրիստոնեայ մտայնութիւնը:

Առաքեալներն իսկ չկրցան քրիստոնէաբար ապրիլ առաջին մէկ օրէն, եւ գիտենք թէ անոնք սխալներ գործեցին: Սուրբ Պետրոսն անգամ մարդ-

կային մտայնութեամբ շարժեցաւ, երբ Յիսուս սկսաւ յստակօրէն խօսիլ թէ ինչ կը սպասէ իրեն Երուսաղէմ՝ չարչարուելու եւ մեռնիլ Խաչին վրայ: Պետրոս չբռնացաւ, այլ պոռթկաց ըսելով. «Աստուած չընէ, Տէ՛ր, որ այդ բաները քեզի պատահին» (Մատթ 16, 22): Յայտնի է որ Պետրոսին գաղափարները կը հակասէին Յիսուսի կեցուածքին: Մարդկային տրամաբանութեամբ, ըստ Պետրոսի, կարելի չէր որ Աստուած թոյլ տար որ Յիսուս՝ իր Միածին Որդին, Խաչին վրայ աւարտէ իր առաքելութիւնը:

Մինչ Յիսուս, ընդհակառակը, լաւ գիտէր թէ իր Հայրը, իր անհուն սիրոյ պատճառով մարդոց հանդէպ, զինք զրկեց աշխարհ որպէսզի իր կեանքը տայ մարդոց փրկութեան համար, նոյնիսկ եթէ պէտք պիտի ըլլար, ինչպէս որ եղաւ, մեռնիլ Խաչին վրայ: Բայց Յիսուս գիտէր նաեւ որ մահը վերջակէտ մը պիտի չըլլար իրեն համար, այլ՝ հանգրուան մը, որմէ ետք յաղթական պիտի ելլէր՝ յարութիւն առնելով մեռելներէն: Պետրոսին միջամտութիւնը, այսինքն Յիսուսէն ահռելի մահը հեռացնելու նպատակը, թէպէտ բարի տրամադրութեամբ ըսած էր իր Տիրոջ սիրոյն պատճառով, բայց նոր արարածի մտայնութեամբ չըրաւ, այլ մարդկային գաղափարէ մղուած, որ հակառակ է քրիստոնեայ մտայնութեան, այսինքն հակառակ է հաւատքի: Լսեցինք քիչ առաջ սուրբ Աւետարանէն, որ «միայն ան որ կը հաւատայ Յիսուսին պիտի ընդունի յաւիտենական կեանքը» (Յովհ 3, 16): Ասոր համար, Յիսուս շատ խիստ յանդիմանութիւն ըրաւ Պետրոսին, ըսելով. «Հեռացի՛ր ինծմէ, սատանայ՝ դուն ինծի գայթակղութիւն ես, որովհետեւ քու մտածումներդ Աստուծոյ մտածումներ չեն, այլ մարդոց» (Մտթ 16, 23): Յիսուս իր կեանքը տալով, գայն կրկին պիտի ստանար Յարութեամբ, եւ յաւիտենական կեանք պիտի պարգեւէր մեզի: Եթէ Յիսուս ընդունեցաւ չարչարուելու եւ մեռնիլ Խաչին վրայ մեզ փրկելու համար, ատիկա չեղաւ որովհետեւ Աստուած անգուլթ եւ անողորմ է, այլ եղաւ քաւելու համար մարդոց անհամար մահացու մեղքերը: Յիրաւի, Յիսուս իր մահով եւ յարութեամբ է որ յաղթեց մեղքին եւ մահուան, եւ մեզի դուռը բացաւ փրկութեան հասնելու: Եւ քանի՞նք՝ կան, մեր հարազատներէն իսկ, որոնք երկինքը կը վայելեն հիմա: Անոնց թիւը մենք չենք գիտեր, բայց ապահովաբար կան:

Պէտք չէ մոռնալ որ պայքարը չարին դէմ չէ վերջացած Յիսուսի Յարութեամբ, այլ պիտի տեւէ այնքան ատեն որ մարդիկ մեղանչեն, այսինքն մինչեւ աշխարհի վերջը: Չարը գոյութիւն ունի: Չարը ամէն ատեն եւ ամէն սերունդի մէջ կը պայքարի բարիին դէմ: Գոյութիւն ունի նաեւ մեր շուրջ: Եթէ մեր աչքերը բանանք, ի՞նչ կը տեսնենք: Ամէն օր պատերազմներ, որոնք նոյնիսկ եթէ մեծ չեն, սակայն մահ կը սփռեն: Ամէն օր անմեղներ կը մեռնին, ուրիշներ՝ կը վիրաւորուին: Որքա՛ն գէշութիւններ եւ անարդարութիւններ կը գործուին, մանաւանդ տկարներուն հանդէպ: Ինչպէ՞ս կարելի է հակազդել այդքան չարութիւններուն դէմ, ինչպէ՞ս: Կարելի է հակազդել միմիայն անգէն ուժով, Յիսուսի նման, այսինքն՝ սիրով: Որովհետեւ սէրը միայն կրնայ յաղթել ատելութեան եւ չարին: Այս

անգէն սիրոյ ոյժն է, որ Յիսուս գործածեց եւ անով յաղթեց: Բայց իր աշակերտները դժբախտաբար չհասկցան զինք, գայթակղեցան եւ լքեցին զինք, նոյնիսկ իր մտերիմները: Մենք չգայթակղինք Խաչին առջեւ եւ չլքենք Յիսուսը:

Սիրելի եղբայրներ եւ քոյրեր, փրկութեան գործը շարունակելու համար, Յիսուս կը հրաւիրէ այր եւ կին մարդիկ՝ զիրենք մասնակից դարձնելու իր առաքելութեան, իր պայքարին շարին դէմ: Այրեր եւ կիներ, որոնք պատրաստ են Խաչը շալկելու եւ իրեն հետեւելու: Ինչպէս Յիսուսին համար եղաւ, նոյնը քրիստոնեաներուն համար պիտի ըլլայ: Խաչը շալկել ընտրովի չէ: Ան՝ առաքելութիւն մըն է որ պարտինք ստանձնել, եւ սիրով ստանձնել: Եթէ տակաւին Պետրոսի մարդկային մտայնութեամբ կ'ապրինք, այս առաքելութենէն պիտի փախչինք: Իսկ եթէ Յիսուսի աշակերտներ կ'ուզենք ըլլալ, մեր խաչը պիտի շալկենք ամէն օր եւ Յիսուսին պիտի հետեւինք: Սուրբ Պօղոս կ'ըսէ. «Խաչի լեզուն յիմարութիւն է անոնց համար, որ կը կորսուին, բայց մեզի՝ փրկեալներու համար, Աստուծոյ զօրութիւն է» (Ա. Կոր 1, 18):

Աշխարհի վրայ, չար ուժերը այնքան զօրաւոր դարձած են, որ կարծէք թէ անոնք կը տիրապետեն մարդոց ճակատագրին վրայ: Ասոր համար, Քրիստոս անընդհատ կերպով կը հրաւիրէ բոլոր քրիստոնեաները եւ իրենց կ'ըսէ՝ եթէ կ'ուզէք իմ աշակերտս ըլլալ, ուրացէք ձեր անձնասիրութիւնը եւ շալկեցէք խաչը ինծի հետ: Այսօրուայ ընթերցուածէն իմացանք սուրբ Պօղոսին խօսքը. «Հարկ է ըլլալ նոր արարած» այսինքն հարկ է ըլլալ քրիստոնեայ մտայնութեամբ ապրող մարդիկ, եւ կը շարունակէ. «Թող ոչ ոք ինծի ձանձրոյթ տայ, որովհետեւ ես իմ մարմնիս մէջ կը կրեմ Քրիստոսի չարչարանքները» (Գաղ 6, 15-17), այսինքն իր Խաչը շալկած է, որովհետեւ քրիստոնեային համար Խաչը կը ներկայացնէ Աստուծոյ իմաստութիւնը եւ անոր անհուն սէրը՝ յայտնուած Քրիստոսի մահուամբ եւ յարութեամբ՝ մեզի կեանք շնորհելու համար: Ասոր համար սուրբ Պօղոս կ'ըսէ նաեւ. «Ինծի քաւ լիցի պարծիլ եթէ ոչ միայն Խաչովն մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի» (Գաղ 6, 14):

Սիրելի եղբայրներ եւ քոյրեր, խնդրենք սուրբ Կոյս Աստուածածնէն, մեր սիրելի մօրմէն, ոյժը եւ քաջութիւնը հետեւելու համար Քրիստոսի առանց վախի, ինչպէս որ ան հետեւեցաւ իրեն Խաչի ճանապարհին վրայ, իրեն հետեւեցաւ մինչեւ վերջ: Անոր նման, մենք ալ քաջաբար հետեւինք Քրիստոսի, այն ճանապարհին վրայ, որ կը տանի դէպի յարութիւն, որ կը տանի դէպի յաւիտենական կեանք: Ամէն:

✠ ՆԵՐՍԷՍ ՊԵՏՐՈՍ ԺԹ.
Կաթողիկոս Պատրիարք
Տանն Կիլիկիոյ Կաթողիկէ Հայոց

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՏԳԱՄ

Ս. ԾՆՆԳԵԱՆ ՏՕՆԻՆ ԱՌԹԻԻ

Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱԽՈՐԻՉ - Ս. ԵՂԻԱ ԱԹՈՌԱՆԻՍՏ ԵԿԵՂԵՑԻ
25 ԳԵԿՏԵՄԲԵՐ 2008

Տեսոն մերոյ Յիսուս Քրիստոսի սուրբ Ծննդեան տօնին առթիւ, Պէյրուքի սուրբ Գրիգոր Լուսաւորիչ - սուրբ Եղիա աթոռանիստ եկեղեցւոյ մէջ, Հոգեւոր Տէրը հաւատացեալներուն ուղղեց հետեւեալ պատգամը.

«Մարիամի ծննդաբերութեան ժամանակը հասաւ, ծնաւ իր անդրանիկ որդին, փաթթեց խանձարուրներով եւ դրաւ մսուրի մէջ, որովհետեւ իջեւանին մէջ տեղ չկար անոնց համար» (Ղուկ 2, 6-7):

Յոյժ սիրելի եղբայրներ եւ քոյրեր,

Ահա՛ ամէն տարի կը հաւաքուինք տօնակատարելու համար Յիսուսի ծնունդը, այս մեծ խորհուրդը, որ մեզ կը հիացնէ ամէն անգամ, որ անոր մասին խորապէս մտածենք: Արդարեւ, սուրբ Երրորդութեան երկրորդ Անձը՝ Բանն Աստուած, մարդ եղաւ, որպէսզի մեզ՝ տկարներս եւ մեղաւորներս, Աստուծոյ որդիներ դարձնէ, այսինքն՝ կերպով մը աստուածացնէ:

Աստուծոյ որդիներ ըլլալու այս բացառիկ շնորհքը, մեր սիրտը ուրախութեամբ կը լեցնէ: Նման պարզեւ ստացողը չի կրնար այսպիսի ուրախ լուր մը ինքն իրեն համար պահել, այլ կը փափաքի զայն բոլորին հաղորդել եւ անով իր ընկերները ուրախացնել, ինչպէս որ կը պատահի երբ մէկը փայլուն յաջողութիւն մը ձեռք ձգէ, մրցանակ մը չահի կամ շքանշանի մը արժանանայ:

Այսպէս սկիզբ առաւ Եկեղեցւոյ աւետարանումի գործը, երբ տասներկու առաքեալները, ի գին բազմաթիւ զոհողութիւններու եւ հալածանքներու, սկսան ամէն մարդու եւ հրապարակաւ քարոզել Քրիստոսի՝ դարերէ ի վեր սպասուած Մեսիային գալուստը, որ Աստուած խոստացած էր մարդկութեան, մեր նախահայրերուն մեղանշումէն ետք:

Հայ ազգը, որ առաջին ժողովուրդներէն մին բախտը ունեցաւ Քրիստոսի քարոզութիւնը լսելու չորրորդ դարուն սկիզբը, սուրբ Գրիգոր Լու-

սաւորչի բերնէն, ինքն ալ չարչարանքներու իր բաժինը կրեց, սուրբ Աւետարանը քարոզած ըլլալուն համար: Որդեգրելով քրիստոնեայ հաւատքը, հայ ժողովուրդին կեանքը բարեփոխուեցաւ, մեր պատմութիւնը ունեցաւ իր ոսկեղարը, մեր Եկեղեցին տուաւ բազմաթիւ սուրբ հայրապետներ եւ ճգնաւորներ: Եւ այսօր երկիրքին մէջ ունինք հազարաւոր վկաներ եւ խոստովանողներ, որոնք կը բարեխօսեն մեզի համար: Հայ Եկեղեցին, իր կարգին, ինքն իրեն համար չպահեց Աւետարանի փրկարար պատգամը, այլ գայն փոխանցեց վրացի եւ աղուան դրացի ժողովուրդներուն:

Յիսուս ըսաւ իր աշակերտներուն. «Ճշմարտութիւնը ձեզ պիտի ազատէ» (Յովհ 8, 32): Յիսուս չի խօսիր այստեղ քաղաքային ազատութեան մասին, այլ այն ազատութեան մասին, որ կը վայելեն հաւատացեալները՝ Աստուծոյ որդիները, ինչ դիրքի մէջ ալ ըլլան: Այս նոր ազատութիւնը կ'արտայայտուի յանուն Աստուծոյ մեր եղբայրակիցներուն ծառայութիւններ մատուցանելով, անկա մեզ յանձնառու կը դարձնէ նաեւ անոնց հանդէպ, որոնք տակաւին Յիսուսին չեն հաւատար, անոնց ցոյց տալու յոյսի ոյժը, որ կը բխի աստուածային սէրէն եւ ոչ թէ մարդու ջանքերէն:

Յիսուս ըսաւ. «Ե՛ս եմ ճանապարհ, ճշմարտութիւն եւ կեանք» (Յովհ 14, 6): Յիսուսն է կեանքը, որ կ'արժարծէ սիրտը անոր, որ զինք կ'ընդունի եւ կը մղէ գայն սիրելու իր ընկերները, անխտիր, անոնց տալով ինչ որ ինք ճրիաբար ստացած է, նախ եւ առաջ բարի լուրը՝ Յիսուսին գալուստը: Աւետարանումը սակայն լուրջ համոզում եւ նուիրում կը պահանջէ եւ այս տեսակ նուիրում, մեզ Յիսուսի բարեկամներուն շարքին կը դասէ: Չկայ աւելի վսեմ, աւելի կարեւոր եւ աւելի ստիպողական գործ, քան մարդոց ճրիաբար տալ ինչ որ ճրիօրէն Տիրոջմէ ստացած ենք: Ո՛չ մէկ պատճառ չի կրնար մեզ զերծ կացուցանել այս հրապուրիչ, բայց միանգամայն ծանր պարտականութենէն, որ է՝ ուրիշներուն փոխանցել քրիստոնեայ հաւատքը, փոխանցել Քրիստոսի սէրը, ինչպէս որ ըրին սուրբ Առաքեալները եւ Աւետարանի քարոզիչները իրենցմէ ետք մինչեւ այսօր:

Սուրբ Ղուկաս Աւետարանիչը կ'ըսէ, թէ Մարիամ փաթթեց Մանուկ Յիսուսը իրանձարուրներով եւ դրաւ մսուրին մէջ, որովհետեւ տեղ չկար անոնց համար իջեւանին մէջ: Սուրբ Յովհաննէսը աւելի կը շեշտէ Յիսուսին հանդէպ անհիւրընկալ կացութիւնը, երբ կ'ըսէ. «Եկաւ իրեններուն եւ իրենները զինքը չընդունեցան» (Յովհ 1, 11): Այս հիւրամերժ վերաբերումը կը հայի նախ եւ առաջ հրեայ ժողովուրդին, բայց կը հայի նաեւ ամէն մարդու, որ Յիսուսի պատգամը կը մերժէ: Արդեօ՞ք այս մերժումը չի վերաբերիր երբեմն մեզի, երբ ժամանակ չունինք Աստուծոյ համար, երբ ժամանակ չունինք տալու մեր ընկերոջ, որ կը սպասէ մեր օգնութեան, մեր գուրգուրանքին կամ մեր ժպիտին: Արդեօք մեր օրակարգի ցանկի վրայ Աստուած առաջի՞ն տեղը կը գրաւէ, թէ երրորդ կամ չորրորդ տեղը: Շատ զբաղումներով կը լեցնենք մեր օրը եւ ժամանակ չենք գտներ նոյնիսկ աղօթելու համար: Մեր միտքը եւ մեր սիրտը այնքան, ըստ մեզի, կարեւոր ծրագիրներով զբաղած են, որ ատեն չի մնար հետաքրքրուելու համար

Եկեղեցւոյ ծրագիրներով, հովուական գործերով կամ բարեսիրական աշխատանքով: Միշտ պատճառներ կը գտնենք եւ զբաղումներ ունինք, որ մեզ հեռու կը պահեն նման պարտականութիւններէ: Այսպէս ընողը, նման հրեայ ժողովուրդին, Յիսուսը չ'ընդունիր, քանի ժամանակ չունի Յիսուսին համար, ժողովրդապետութեան գործին համար, կամ տառապեալ եւ կարիքաւոր ընկերոջ համար:

Բարեբախտաբար տեսարանը այդքան ալ մուտ չէ, քանի Աւետարանը կը վկայէ, թէ «Իսկ անոնց՝ որոնք ընդունեցան զինք եւ հաւատացին իր անունին, իշխանութիւն տուաւ՝ Աստուծոյ որդիներ ըլլալու» (Յովհ 1, 12): Փա՛ռք Աստուծոյ, այսօր ալ մեր շուրջը կան մարդիկ, որոնք կ'ընդունին Յիսուսը իրենց կեանքին մէջ եւ իրեն ժամանակ կը տրամադրեն: Կան մարդիկ, որոնք Յիսուսի լոյսը տեսնելէ ետք՝ զայն ուրիշներուն կը փոխանցեն:

Աստուծոյ փրկարար Խօսքը որ կը ստանանք Աւետարանին միջոցաւ, մեզի ալ ուղղուած է եւ մեր կեանքը կ'ուզէ լուսաւորել: Եթէ պարզ անհատներ ենք հովիւներու նման, կամ հանգամանաւոր մարդիկ, Քրիստոսի լոյսը եւ անոր պատգամը մեզ կը հրաւիրեն դուրս գալու մեր ճղճիմ հաշիւներէն եւ մեր շահերէն, եւ ինչպէս համոզուած քրիստոնեաները կ'ընեն, ընդառաջելու Յիսուսի պատգամին, նախ իրեն երկրպագելու հովիւներու նման, ապա անոր կամքը կատարելու: Այս վերաբերումը աշխարհին դուռը կը բանայ դէպի ճշմարտութիւն, դէպի արդարութիւն եւ դէպի բարիք: Երեք ազդակներ են ասոնք, որոնց մարդիկ այդքան պէտք ունին: Այս ընթացքը կը բանայ նաեւ մարդոց աչքերը տեսնելու համար, ինչ որ պիտի չուզէին տեսնել եւ լսել, այսինքն՝ տեսնելու այն մարդիկը, որոնք զրկուած են Յիսուսի Խօսքէն եւ անոր մխիթարութենէն - եւ ասոնք բազմաթիւ են - եւ լսելու ճիշդ կարօտեալներուն, առանձին ապրողներուն, կերակուր եւ դեղ չունեցողներուն, անտեսուածներուն, ուրախութենէ եւ ժպիտէ զրկուածներուն:

Ծննդեան տօնին ցնծութիւնը, որ մեր սիրտը կը լեցնէ, կ'ուրախացնէ մանաւանդ մեր երեխաները եւ աշխարհին խաղաղութեան նոր յոյս մը կը ներշնչէ, թո՛ղ հասկցնէ բոլորին՝ թէ Աստուած մեզի մօտ է, մեր մէջ կը բնակի: Ասոր համար «Քրիստոս ի մէջ մեր յայտնեցաւ» կ'երգենք սուրբ Պատարագի ընթացքին, եւ իրաւամբ կը յայտարարենք, թէ Յիսուս մեզի հետ է:

Մաղթանքս է, որ Ծննդեան տօնը խաղաղութիւն բերէ աշխարհի բոլոր մարդոց եւ բոլոր երկիրներուն՝ Հայաստան, Ղարաբաղ, Սուրբ Երկիրը, Իրաք, եւ յատուկէն այն վայրերը ուր խաղաղութիւնը վտանգուած է, ինչպէս Միջին Արեւելք: Աղօթենք բոլորին համար, որպէսզի անոնց ժողովուրդները չկորսնցնեն սուրբ Հոգիին յարգի պարգեւը, որ է խաղաղութիւնը, որովհետեւ ան միշտ կորսուելու վտանգի մէջ է:

Սիրելի Լիբանանին համար, կ'ուզեմ կրկնել սրբազան Քահանայապետին խօսքը. «Լիբանանը հին մշակոյթներու օրրանն է, որ իր ճառագայ-

Թուժը ունեցած է ամբողջ Միջերկրականի վրայ եւ անդին: Լիբանանցիները ցոյց տուին վերջերս թէ կրնան միասին ապրիլ համերաշխութեամբ: Լիբանանի ամբողջ ժողովուրդին կը տածեմ գուրգուրանքի եւ վստահութեան զգացումներ,- կ'ըսէ սրբազան Պապը,- մաղթելով անոնց, որ քաջաբար շարունակեն իրենց ճիգերը թափել՝ կառուցանելու համար միաբան եւ համերաշխ ընկերութիւն մը»:

Յոյժ սիրելիներ, լաւագոյն աւետարանիչը սուրբ Աստուածածինն է, որ աշխարհին շնորհեց նոյն ինքն Յիսուսը, Մարմնացեալ Բանը: Իրեն դիմենք պաղատելով, որպէսզի Յիսուսը քարոզուի ամէն տեղ եւ ծնի լսողներուն սրտին մէջ: Թո՛ղ ամէն հաւատացեալ եւ ամէն քրիստոնեայ հասարակութիւն ուրախութիւնը եւ միանգամայն մտահոգութիւնը ունենայ ուրիշներուն հաղորդելու բարի լուրը, որ է Աւետարանը, որուն պատգամը սա է. «Աստուած այնքա՛ն սիրեց աշխարհը, մինչեւ իսկ իր Միածին Որդին տուաւ, որպէսզի ամէն մարդ որ հաւատայ անոր չկորսուի, այլ ընդունի յաւիտենական կեանքը» (Յովհ 3, 16): Այս է Ծնունդին իսկական իմաստը, որ պէտք է շարունակ կերպով վերագտնենք, զայն խորապէս ապրինք եւ ուրիշներու փոխանցենք: Ամէն:

Քրիստոս ծնաւ եւ յայտնեցաւ: Օրհնեալ ըլլայ Յիսուսի Ծնունդը:

✠ **ՆԵՐՍԷՍ ՊԵՏՐՈՍ ԺԹ.**
Կաթողիկոս Պատրիարք
Տանն Կիլիկիոյ Կաթողիկէ Հայոց

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՑ ՍԻՒՆՀՈՂՈՍ

ՉՄՄԱՌ, 17-26 Սեպտեմբեր 2008



Չորեքշաբթի, 17 Սեպտեմբեր 2008-ի առաւօտեան ժամը 7.30-ին, Չմմառու Տիրամօր Մայրավանքին մէջ, Ամենապատիւ եւ Գերերջանիկ Տէր Ներսէս Պետրոս ԺԹ. Կաթողիկոս Պատրիարք Տանն Կիլիկիոյ Կաթողիկէ Հայոց, նախագահեց սուրբ Պատարագին եւ բացուած հռչակեց Հայ Կաթողիկէ Եկեղեցւոյ Եպիսկոպոսներու տարեկան Սիւնհոգոսը: Սիւնհոգոսական Հայրերը իրենց աղօթքը բարձրացուցին առ Աստուած, բարեխօսութեամբ Չմմառու Տիրամօր եւ երանելի Իգնատիոս Մարյեանի, որպէսզի իրենց պարգեւէ երկնային ներշնչումներուն հնազանդելու շնորհքը եւ աշխատելու Կաթողիկէ Եկեղեցւոյ եւ յատկապէս Հայ Եկեղեցւոյ պայծառութեան համար: Անոնք իրենց պաղատանքին մէջ յիշեցին Լիբանանի Հանրապետութեան նորընտիր վսեմաշուք նախագահը, Միշել Սլէյմանը, ինչպէս նաեւ նախարարներն ու երեսփոխանները որպէսզի երկնա-

յին լոյսով կառավարեն Լիբանանը, ապահովեն ժողովուրդին խաղաղութիւնն ու անդորրութիւնը, յատկապէս ուսեալ երիտասարդներուն հայթայթեն աշխատանքի այլազան ասպարէզներ, կասեցնելու համար անոնց արտագաղթը դէպի օտար ափեր: Անոնք յիշեցին նաեւ բոլոր անմեղները, որոնք աշխարհի գանազան երկիրներու եւ յատկապէս Միջին Արեւելքի մէջ զոհ դարձան եղբայրասպան պատերազմներու:

Միւնհոդոսի նիստերը շարունակուեցան մինչեւ 26 Սեպտեմբեր 2008: Միւնհոդոսին հրաւիրուած էին մասնակցելու Ամենապատիւ Տէր Յովհաննէս Պետրոս ԺԼ. Գասպարեան՝ վաստակաւոր Կաթողիկոս Պատրիարք, Լիբանանի, Հայաստանի եւ Արեւելեան Եւրոպայի, Հայէպի, Գամիշլիի, Դամասկոսի, Թուրքիոյ, Իրաքի, Եգիպտոսի, Պարսկաստանի, Ֆրանսայի եւ Արեւմտեան Եւրոպայի, Միացեալ Նահանգներու եւ Գանատայի, Լատին Ամերիկայի, Յունաստանի, Երուսաղէմի եւ Յորդանանի վիճակաւորները, ինչպէս նաեւ վաստակաւոր եպիսկոպոսներ, Զմմառեան Միաբանութեան Պատրիարքական Փոխանորդը, Միսիթարեան Միաբանութեան Ընդհանուր Աբբասայրը եւ Անարատ Յղութեան Հայ Քոյրերու Միաբանութեան Ընդհանուր Մեծաւորուհի Մայրը:

Միւնհոդոսական Հայրերը ժողովի օրակարգի վրայ ունէին հետեւեալ հարցերը.

ա.- Թեմերուն վարչական, կրօնական, հովուական, ընկերային ու մշակութային իրավիճակը:

բ.- Միութենական շարժումը ու այս առնչութեամբ Հայ Կաթողիկէ Եկեղեցւոյ փոխ յարաբերութիւնները քոյր Եկեղեցիներուն, ինչպէս նաեւ միւս կրօնքներուն հետ: Նոյնպէս ալ Հայ Կաթողիկէ Եկեղեցւոյ դերը Լիբանանի, Հայաստանի ու Սփիւռքի երկիրներուն մէջ:

գ.- Հայ Կաթողիկէ Եկեղեցւոյ Գ. Համագումարի պատրաստութիւնը, որ պիտի գումարուի 2009-ին, Զմմառու Վանքին մէջ:

դ.- Կանոնական հարցեր:

ե.- Վերանորոգում ծիսական կեանքի եւ վաւերացում ծիսական մատեաններու տպագրութեան:

զ.- Պատրիարքական գանազան յանձնախումբերու գործունէութիւններուն տեղեկագիրները ու անոնց քննարկումն ու արժեւորումը:

է.- «Կաթողիկէ Եկեղեցւոյ Քրիստոնէական»ի աշխարհաբար թարգմանութիւնը եւ անոր հրատարակութիւնը ու տարածումը:

ը.- Քննարկումը սուրբ Գիրքի աշխարհաբար աշխատասիրութեան:

թ.- «Յիսուսի Գիտութիւնը» համագումարին նախապատրաստական աշխատանքներուն քննարկումը:

Միւնհոդոսական Հայրերը անդրադարձան Հայաստանի ու Արցախի, ինչպէս նաեւ Միջին Արեւելքի եւ յատկապէս Սուրբ Երկրի, Իրաքի ու Լիբանանի տագնապալի դառն ընկերային, քաղաքական ու տնտեսական մտահոգիչ վիճակին, սատարելու համար վերականգնումի աշխատանքներուն:

ՓԱԿՄԱՆ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՑ ՍԻՆՅՈԴՈՍԻՆ

Հայ Կաթողիկէ Եկեղեցւոյ Եպիսկոպոսաց Սիւնհոգոսը իր տարեկան ժողովը գումարեց Սեպտեմբեր 17էն 26 2008, Զմմառու Վանքին Պատրիարքական Աթոռին մօտ, նախագահութեամբ Ամենապատիւ եւ Գերերջանիկ Տէր Ներսէս Պետրոս ԺԹ. Կաթողիկոս Պատրիարքին Տանն Կիլիկիոյ Կաթողիկէ Հայոց եւ մասնակցութեամբ Ամեն. Տէր Յովհաննէս Պետրոս ԺԸ. Գասպարեան Հոգեւոր Տիրոջ եւ Հայ Կաթողիկէ բոլոր թեմերու առաջնորդներուն:

Սիւնհոգոսական Հայրերը աչքէ անցուցին նախ նախորդ Սիւնհոգոսի ընթացքին առնուած որոշումները եւ կատարեցին զնահատումը անոնց տրուած ընթացքին: Ապա Պատրիարքական Յանձնախումբերու նախագահները ներկայացուցին իրենց կատարած աշխատանքներուն արդիւնքները եւ ուսումնասիրուեցան մեր եկեղեցական կեանքին վերաբերող այլազան երեսները, վարչական, ծխական, կանոնական, միութենական եւ այլ մարզերու մէջ:

Ա. Քրիստոնէական դաստիարակութիւն

Հայրերը գոհունակութեամբ ողջունեցին «Կաթողիկէ Եկեղեցւոյ Քրիստոնէական»ի մեծածաւալ հատորին ամբողջական թարգմանութիւնը արեւմտահայերէնի, որ արդէն հրատարակ հանուած է եւ սկսած է ցրուիլ մեր բոլոր թեմերուն եւ հաստատութիւններուն մէջ: Նոյն հատորին արեւելահայերէնի թարգմանութիւնը արագ կերպով յառաջ կ'երթայ եւ լոյս կը տեսնէ ի մօտոյ:

Այս մեծղի հատորին կողքին, կը պատրաստուի նաեւ համառօտ Քրիստոնէականի գիրքը, աւելի մատչելի դարձնելու համար քրիստոնէական վարդապետութիւնը ժողովուրդի բոլոր խաւերուն :

Զեկուցում տրուեցաւ նաեւ մեր վարժարաններուն մէջ կիրարկուող դասագիրքերու շարքին ամբողջացումին աշխատանքին վերաբերեալ :

Պատրաստ է երեք բարձրագոյն դասարաններուն յանձնուելիք դասագիրքերու շարքը: Շեշտուեցաւ նաեւ անհրաժեշտութիւնը երիտասարդներուն ուղղուած քրիստոնէական դաստիարակութեան յատուկ հրատարակութիւններու, ինչպէս նաեւ աւելի բժախնդիւր ընտրութիւնը դասատուներուն եւ անոնց զարգացման կատարելագործումը:

Բ. Սուրբ Գրիգոր Նարեկացիի Ընդհանրական Եկեղեցւոյ Վարդապետ հռչակում

Որոշում առնուեցաւ այս նպատակով կազմակերպել գիտաժողով մը յառաջիկայ տարուայ Սեպտեմբերին, հայ եւ օտար մտաւորականներու մասնակցութեամբ, որու եզրակացութիւնները պիտի ծառայեն իբր վաւերազրական ատաղձ այս կարեւոր գործը յառաջ տանելու եւ յաջողցնելու համար:

Գ. Նոր Երանելիներու դատի հետապնդում

Մանուկուեցաւ թէ եկեղեցական պատկան իշխանութիւնները դրական մօտեցում ցոյց տուած են այս կարեւոր գործին նկատմամբ: Յանձնախումբը աշխատանք կը տանի նորանոր վկայութիւններու եւ պատմական վաւերագրերու որոնումով եւ մէկտեղումով:

Դ. Միջ-եկեղեցական յարաբերութիւններ

Յանձնախումբի նախագահը գեկոյց թէ Կաթողիկէ Եկեղեցւոյ եւ ոչ-Քաղկեդոնական եկեղեցիներուն միջեւ աստուածաբանական երկխօսութեան ծիրին մէջ, ժողով գումարուեցաւ Մէտնայիայի մէջ, Սուրիա, Յունուար 2008-ին, նիւթ ունենալով՝ «Ի՞նչ են հարցերը որ մեզ կը միացնեն կամ կը բաժնեն»: Ան ընդգծեց մտքերու դրական զարգացումը վարդապետական հարցերու առնչութեամբ եւ փոխադարձ հասկացողութեան ու գործակցութեան ջանքերը:

Միջ-եկեղեցական յարաբերութիւնները կը զարգանան մանաւանդ Միջին Արեւելքի եկեղեցիներու Խորհուրդին ծիրէն ներս:

Ե. Սուրբ Գրիգոր Լուսաւորչի ալպոմի տպագրութիւն

Հայագգի Հայրապետին Վատիկանի մէջ արձանին գետեղումը եւ անոր յատկացուած հրապարակին հանդիսաւոր բացումը Սրբազան Պապին ներկայութեամբ, առիթ ընծայեցին որ քառալեզու գեղազարդ ալպոմ մը հրատարակուի: Ատաղձը պատրաստ է եւ ի մօտոյ հրապարակ պիտի հանուի:

Զ. Հաղորդակցութեան Միջոցներու զարգացում

Ձեկուցում տրուեցաւ նորակազմ Յանձնախումբին աշխատանքներուն մասին, որ կ'ընդգրկեն բոլոր հաղորդամիջոցները որ կը ծառայեն Եկեղեցւոյ վարդապետութիւնը ծանօթացնելու եւ տարածելու:

Այս մարզին մէջ կը մտնեն յատկապէս «Աւետիք» պաշտօնաթերթը,

Պատրիարքարանի կայքէջը, Վատիկանի ձայնասփիւռին ու Telepace եւ Լիբանանեան Télé Lumière հեռատեսիլներուն հայկական բաժինները: Այս նպատակով հրաւիրուած էր այս վերջին կազմակերպութեան մէկ պատուիրակութիւնը որ ներկայացուց գործակցութեան նոր կարելիութիւնները:

Է. Հայաստան Համահայկական Հիմնադրամի 17-րդ Ընթաց

Ժողովներուն մասնակցած է Հայաստանի եւ Արեւելեան Եւրոպայի Առաջնորդը ներկայացնելով Ամեն. Հոգեւոր Տէրը: Կարեւոր տեղ տրուած է Հայաստանի սահմանամերձ գիւղերուն եւ դպրոցներուն ի նպաստ գործադրուելիք ծրագիրներու իրագործումին:

Ը. Ծիսական հարցեր

Աւարտած են աշխատանքները ծիսական բարեփոխումներու վերաբերեալ, յատկապէս խորհուրդներու մատակարարման հայող՝ մկրտութիւն, պսակ եւ թաղման կարգ: Յետ մանրամասն քննարկումի, որոշուեցաւ անյապաղ հրատարակել վերատեսուած մատեանները, երեք տարուայ փորձի շրջանի մը համար: Թիւ Պատարագի խորհրդատետրը, աշխարհաբար թարգմանութեամբ, կրկնակի վերատեսութեան ենթարկուեցաւ:

Թ. Թեմերու վիճակին քննարկումը

Սիւնհոդոսական Հայրերը յատուկ կարեւորութեամբ ուսումնասիրեցին թեմերու իրավիճակը եւ յարմար սեպուած առնուելիք քայլերը, յատկապէս թափուր թեմերու վերաբերեալ:

Ժ. Պատրիարքական Գ. Համագումար

Ներկայացուեցաւ մանրամասն նախագիծը սոյն Համագումարին ընթացքին կատարուելիք դասախօսութիւններուն: Կը նախատեսուի երեք օրուայ ծրագիր մը, որ պիտի կատարուի 2009-ին: Համագումարին ընդհանուր տիտղոսը պիտի ըլլայ «Ամուսնութիւն եւ Ընտանիք»:

Սիւնհոդոսի փակման նիստին, Հայրերը անդրադարձան Միջին Արեւելքի եւ մասնաւորաբար Լիբանանի մէջ տիրող մտահոգիչ կացութեան եւ նկատեցին անոնց ժխտական ազդեցութիւնը մեր ժողովուրդին առօրեայ կեանքին վրայ: Առաջադրուեցաւ մօտէն հետեւիլ մեր երիտասարդները յուզող հարցերուն, ըլլայ ուսումնական շրջանին թէ ասպարէզ ապահովելու պահուն: Նկատի առնուեցան այլազան միջոցներ, դիմագրաւելու հա-

մար անոնց տազնապները տնտեսական, կրթական եւ հոգեւոր մարզերու մէջ եւ սատարելու անոնց լուծումին:

Հայրերը ողջունեցին ընտրութիւնը Լիբանանի Նախագահ՝ Միշէլ Սլէյ-մանի եւ Հայաստանի Նախագահ՝ Սերժ Սարգսեանի: Լիբանանի Նախագահին տրուած պաշտօնական այցելութեան մը ընթացքին, Սեպտեմբեր 19-ին, հայրերը յայտնեցին իրենց զօրակցութիւնը Նախագահին եւ կառավարութեան առած վճռական քայլերուն, երկիրը վերջնականապէս դուրս հանելու համար ձգտուած վիճակէն եւ վերահաստատելու խաղաղ կենակցութեան եւ շինիչ համագործակցութեան գոյավիճակը, իբր անհրաժեշտ նախապայման՝ խաղաղութեան եւ բարօրութեան ամրապնդումին:

Հոսկ, Սիւնհոգոսի փակման, Հայրերը իրենց աղօթքները բարձրացուցին, յոյս յայտնելով որ դրական քայլերը որ կ'արձանագրուին քաղաքական գետնի վրայ, յատկապէս Լիբանանի, Իրաքի եւ Սուրբ Երկրի մէջ, շուտով իրենց պտուղը տան, քաջալերելով անոնց բնակիչները որ կառչած մնան իրենց հայրենիքին եւ անխախտ պահեն քրիստոնէական վկայութիւնը այս աշխարհամասին մէջ:

Զմմառ, 26 Սեպտեմբեր 2008

ԴԻԻԱՆ
ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ԵԿԵՂԵՑԻՈՅ
ՍԻՒՆՀՈՂՈՍԻՆ

ԱՍԵՆԱՊԱՏԻ ԴՈՔԵՒՈՐ ՏԻՐՈՋ ԽՕՍԲԸ ԴԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՑ ՍԻՒՆՀՈՂՈՍԻՆ

Սիրեցեալ Սիւնհոգոսական Հայրեր եւ պատուարժան հրաւիրեալներ, Հայցելէ ետք սուրբ Հոգիին եօթնարբեան շնորհքները, ձեզ կ'ողջունեմ եղբայրական սիրով եւ բաց կը հռչակեմ Եպիսկոպոսաց Սիւնհոգոսը:

Անցեալ ամիսներուն, քահանայական եւ սարկաւազական ձեռնադրութիւններ տեղի ունեցան: Քահանայական կարգը ստացան 11 Յունիսին Հռոմ՝ պոլսահայ Տէր Միքայէլ սրկ. Ուջար, 29 Օգոստոսին Հեշտիա՝ վրացահայ Տէր Անտոն սրկ. Տէր-Անտոնեան՝ ամուսնացեալ եւ 12 Սեպտեմբերին Փանիկ՝ հայաստանցի Տէր Նարեկ սրկ. Թադէոսեան՝ ամուսնացեալ: Սարկաւազի կարգը ստացաւ 20 Յուլիսին Պէյրութ՝ Ռաֆֆի Յովհաննէսեան:

Փետրուար 22ին, բերկրալիր առիթը ունեցանք ներկայ գտնուելու

սուրբ Պետրոս Պապի ղեկավարած սուրբ Գրիգոր Լուսավորչի հրապարակին բացումին եւ օրհնութեան արարողութեան՝ նախագահութեամբ Նորին Սրբութիւն Բենեդիկտոս ԺԶ. Սրբազան Քահանայապետին: Սիւնհոդոսական Հայրերէն զատ ներկայ էին մեր համայնքէն քահանաներ, մայրապետներ եւ զանազան երկիրներէ ժամանած ուխտաւորներ: Ներկայ գտնուեցան նաեւ Հայաստանի եւ Արցախի նախագահներուն, ինչպէս նաեւ երկու Վեհափառներուն հրաւիրուած ներկայացուցիչները, Հայ դեսպաններ եւ կուսակցութիւններու պատուիրակներ, Լեւոնեան վարժարանի ժառանգաւորները եւ Հռոմի հայ գաղութէն հաւատացեալներ:

Այս ազգաշէն եւ հայանպաստ բացառիկ դէպքը մեծ արձագանգ ունեցաւ հայութեան մէջ հայ մամուլի շնորհիւ: Աստուծոյ հազար փառք տա՛նք: Սրբազան Քահանայապետին երախտապարտութեան նամակ ուղարկեցի իմ եւ Հայ Կաթողիկէ Եկեղեցւոյ, ինչպէս նաեւ հայութեան անունով:

Հովուական այցելութիւններ կատարելու անցեալ Սիւնհոդոսի որոշումին համաձայն, Հայաստանի կաթողիկէ բոլոր կեդրոնները կրցայ այցելել անցեալ Ապրիլին, բացի Տաշիրէն եւ Սպիտակէն, երբ հրաւիրուեցայ մասնակցելու նորընտիր նախագահ Սերժ Սարգիսեանի երդման արարողութեան: Այս առիթով, Արհի. Հայր Նշան Գերապայծառը Հայաստան եւ Վրաստան գործող քահանաները եւ քոյրերը հրաւիրեց Քանաքեռ՝ ինծի հետ տեսնուելու համար: Մէկ շաբթուայ ճամբորդութեանս ինծի ընկերացաւ Գերպ. Հ. Միքայէլ Թ.Մ.Վ. Մուրատեան:

Անցեալ Յուլիսին, ընկերակցութեամբ Գերպ. Հ. Ռափայէլ Թ.Մ.Վ. Մինասեանի, կրկին անգամ Հայաստան մեկնեցայ: Ամէն անգամ, երբ հայրենիքը այցելեմ, եղբայրական պարտք կը համարեմ Գարեգին Բ. Վեհափառին այցելութիւն տալ: Պէտք է նշել որ Վեհափառը ջերմ եւ հիւրընկալ վերաբերմունք ունեցաւ ինծի եւ Գերապայծառ Նշանին հանդէպ: Այս առիթով, այցելեցի Տաշիրի հայ քոյրերու կեդրոնը, ուր գոյութիւն ունի նաեւ Քարիտասի ծերերու խնամատար գործունէութիւնը: Այցելեցի նաեւ Մայր Թերեզայի թերաճներու համալիրը՝ Սպիտակ: Ծաղկաձորի ամառնային ճամբարներու յատկացուած հայ քոյրերու ընդարձակ կալուածին մէջ, յարգարուած կայ կոկիկ մատուռ մը Քոյր Արուսեակի խնամքով: Անոր օժման արարողութիւնը տեղի ունեցաւ մեծ հանդիսութեամբ: Կրօնաւորներ եւ կրօնաւորուհիներ, դեսպաններ, հիւպատոսներ եւ բարերարներ՝ Ռուսաստանէն, Լեհաստանէն, Ֆրանսայէն եւ այլ երկիրներէն յատուկ կերպով ժամանած էին հոգեպարար օժման արարողութեան ներկայ գտնուելու համար:

Հայաստանի մօտ Լիբանանի դեսպանին տունը ճաշի հիւրասիրուելէ ետք, ուղղուեցանք Աշոցք եւ անկէ՝ Վրաստան: Երեք օրուայ ընթացքին, 14 գիւղ կրցայ այցելել մատուցանելով հինգ Հայրապետական սուրբ Պատարագներ: Բնակչութեամբ զուտ հայ կաթողիկէ գիւղերը խանդավառ ընդունելութիւն վերապահեցին ինծի, նկատի ունենալով որ պատմու-

Թեան մէջ առաջին անգամն է որ Կաթողիկէ Կաթողիկոս Պատրիարք մը իրենց կ'այցելէր: Հագիւ ժողովուրդը հաւաքուած ըլլար եկեղեցիի զանգի դօղանջը լսելով եւ կամ սուրբ Պատարագի քարոզէն առաջ, Արհի. Գարաքէհէեան Գերապայծառը համբերութեամբ կը բացատրէր հաւատացեալներուն ով ըլլալս եւ այցելութեանս նպատակը: Մեծապէս յոգնեցուցիչ բայց հոգեպէս մխիթարական ճանապարհորդութիւն մը եղաւ, պատմական բնոյթ ընդունելով: Ամէն գիւղ իր յատկութիւնները ունի, իր կարիքները ունի եւ իր ճառարխօսներն ալ ունի: Տպաւորիչ էին այն հաւատացեալները, որոնք աղաչանքով եւ գրեթէ ստիպումով կ'ուզէին Հայր Սեղրակը իրենց մօտ պահել: Ամէն գիւղին համար նշմարելի էր մնայուն հովիւի կարիքը:

Աստուծոյ կամքով կը յուսամ կարենալ շարունակել թեմերուն հովուական այցելութիւններս, ըստ նախատեսուած ցանկին:

Սիրեցեալ Սիւնհոգոսական Հայրեր,

28 Ապրիլ 2008 թուակիր իմ կոչ նամակովս Եպիսկոպոսաց Սիւնհոգոսին համար, ձեզի հաղորդած էի Սիւնհոգոսի դռնբաց եւ դռնփակ նիստերու օրակարգին նախատեսուած նիւթերը, ձեզմէ խնդրելով առաջարկուելիք այլ նիւթեր: Ասոր հիման վրայ, ներկայ օրակարգը պատրաստեցի: Սոյն օրակարգը սակայն ենթարկուած կը մնայ Սիւնհոգոսական Հայրերու հաւանութեան՝ նիստերու բացումին (կանոն 108 § 2): Անկէ զատ, իւրաքանչիւր եպիսկոպոս իրաւունք ունի նոր նիւթեր ներկայացնելու Սիւնհոգոսի ընթացքին, պայմանաւ, որ ներկայ անդամներուն մէկ երրորդը համաձայն գտնուի (կանոն 108 § 3):

Որդիական սրտով դիմե՛նք Ձմմառու Տիրամօր, աղաչելով իր հովանաւորութիւնը մեր Սիւնհոգոսական աշխատանքներու վրայ, որպէսզի կարենանք հեռատեսութեամբ եւ լայնախոհութեամբ որոնել մեր համայնքին առաջնահերթ կարիքները, մանաւանդ քահանաներուն հարցը ինչպէս նաեւ Արեւելեան Եւրոպայի Առաջնորդութեան վիճակը: Թո՛ղ սուրբ Կոյս Մարիամին մայրական եւ հզօր բարեխօսութիւնը բոլորիս վրայ ըլլայ եւ երանելի Իգնատիոս Մալոյեանը բարեխօսէ մեզի համար:

**ԱՄԵՆԱՊԱՏԻԻ
ՏԵՐ ՆԵՐՍԷՍ ՊԵՏՐՈՍ ԺԹ.
ԿԱԹՈՂԻԿՈՍ ՊԱՏՐԻԱՐՔԻ
ԱՅՑՑԸ ՀԱՅԱՍՏԱՆ ԵՒ ՎՐԱՍՏԱՆ
25 ՅՈՒԼԻՍ - 1 ՕԳՈՍՏՈՍ 2009**



Ուրբաթ 25 Յուլիս 2008ին, Տանն Կիլիկիոյ Կաթողիկէ Հայոց Ամենապատիւ եւ Գերերջանիկ Տէր Ներսէս Պետրոս ԺԹ. Կաթողիկոս Պատրիարքը մեկնեցաւ Հայաստան եւ ապա Վրաստան:

Ամենապատիւ Հոգեւոր Տիրոջ ընկերակցեցան Գերպ. Հայր Ռաֆայէլ Թ.Մ.Վ. Մինասեան, Գերյ. Հայր Անդրանիկ Մ.Վ. Կռանեան եւ Տէր Կարապետ քհնյ. Թադէոսեան:

Շաբաթ 26 Յուլիսին, Ամենապատիւ Հոգեւոր Տէրը այցելեց Տաշիրի Անարատ Յղութեան հայ քոյրերու կեդրոնը, որուն սրահները տրամադրուած են Քարիզասի, որ իր կարգին ստանձնած է կարիքաւոր տարեցներու հոգատարութիւնը: Այս կեդրոնին մէջ կը գործէ նաեւ տիկնանց մարաշի ասեղնագործութեան աշխատանոց մը: Հայրապետական սուրբ Պատարագ մատուցելէ ետք, Հոգեւոր Տէրը մեկնեցաւ Սպիտակ, ուր կը



գտնուի Մայր Թերեզայի քոյրերու կեդրոնը :

Սուրբ Պատարագի ընթացքին Հոգեւոր Տէրը իր քարոզը սկսաւ գոհունակութիւն յայտնելով իր այս այցելութեան առնչութեամբ միաժամանակ ան իր ուրախութիւնը յայտնեց, որ հակառակ խորհրդային անաստուած վարչակարգին, Աստուծոյ շնորհքը անպակաս եղած է իր հօտին վրայէն: Ապա Հոգեւոր Տէրը խօսեցաւ աղօթքի գորութեան մասին, թէ ինչպէս հաւատքի ոգիով յարատեւ աղօթքը Աստուծոյ շնորհքին կ'արժանացնէ մեզ: Հոգեւոր Տէրը հետեւեալ պատգամը թողուց հաւատացեալներուն. «Աղօթեցէ՛ք ամէն օր, որովհետեւ սուրբ Գիրքը այդ կը խնդրէ մեզմէ: Աղօթեցէ՛ք ամէն օր, որովհետեւ հաճելի է խօսիլ Յիսուսին հետ, քանի զինք շատ կը սիրենք: Չկայ սուրբ մը կամ սրբուհի մը որ աղօթքը չէ սիրած: Աղօթեցէ՛ք որպէսզի ճանչնաք ձեր յանցանքները եւ անոնց համար Աստուծմէ ներում խնդրէք: Աղօթեցէ՛ք՝ Աստուծոյ գոհութիւն տալու այն ամէն շնորհքին համար որ ձեզի պարգեւած է: Աղօթեցէ՛ք նաեւ անոնց համար որ կ'ըսեն թէ ժամանակ չունին աղօթելու կամ չեն աղօթեր: Աղօթեցէ՛ք Եկեղեցոյ դիտաւորութիւններուն համար, որոնք անհամար են: Աղօթեցէ՛ք մանաւանդ իրարու համար, որպէսզի իրարու հետ միշտ սիրով ըլլաք: Ես ձեզի համար յատուկ կերպով պիտի աղօթեմ: Աստուած ձեզ օրհնէ»:

Կիրակի 27 Յուլիսին, Հոգեւոր Տէրը հիւրը եղաւ Ամենայն Հայոց Գա-

րեզին Բ. Կաթողիկոսին, որմէ ետք մեկնեցաւ Մաղկաձոր եւ այնտեղ կատարեց Աստուածածնայ մատրան օծումը: Այս արարողութեան ներկայ եղան Ռուսաստանի, Իտալիոյ, Ֆրանսայի եւ Լեհաստանի դեսպաններն ու հիւպատոսները, ինչպէս նաեւ հոգեւոր հայրեր եւ քոյրեր:

Մատուռի օծման առթիւ իր արտասանած խօսքին մէջ Հոգեւոր Տէրը իր ուրախութիւնը յայտնեց «իր պարզութեան մէջ շքեղ» այս մատուռին համար: Ապա ան դիտել տուաւ, թէ եկեղեցին քարեղէն կառոյց մը ըլլալէ աւելի, հաւաքավայրն է հաւատացեալներու բազմութեան: Եկեղեցին, այն միասնական տունն է ու դպրոցը ուր մարդիկ կը մեծնան եւ շատ բան կը սորվին: Եկեղեցւոյ տաշուած քարերուն նման եկեղեցին բաղկացնող մարդիկ պէտք է իրարու միացած ըլլան քրիստոնէական անկեղծ սիրով, լեցուած սուրբ Հոգիին շնորհքներով:

Մատուռի օծման առթիւ եւ իրեն ի պատիւ տրուած ճաշկերոյթին ընթացքին, Հոգեւոր Տէրը բարձր գնահատեց հայ քոյրերու ծառայութիւնը, որ «պարզ մարդասիրական ծառայութիւն մը չէ, այլ՝ քրիստոնէական առաքելութիւն»: Շնորհիւ այդ առաքելութեան հայ քոյրերը կը ջամբեն քրիստոնէայ քաղաքակրթութիւնը, որուն շնորհիւ հայ ժողովուրդը կերտած է նոր մշակոյթ մը:

Նուիրեալ կուսանները ձեզի կը սորվեցնեն նոր ապրելակերպ, նոր աղօթասիրութիւն, հնազանդութիւն Աստուծոյ, եղբայրասիրութիւն, անոնք կը կերտեն հայու նկարագիրը եւ կը պատրաստեն վաղուայ կեանքի վերիվայրումներուն», նշեց Հոգեւոր Տէրը:

Երկուշաբթի 28 Յուլիսին, Հոգեւոր Տիրոջ այցելեց Լիբանանի մէջ Հայաստանի նախկին դեսպան Վահան Տէր Ղեւոնդեանը, ինչպէս նաեւ նոյն օրը Հոգեւոր Տէրը հանդիպում մը ունեցաւ Հայաստանի մէջ Լիբանանի դեսպան Կապրիէլ Ժիարային հետ, որմէ ետք տասը հոգիէ բաղկացած պատուիրակութեան մը ընկերակցութեամբ մեկնեցաւ Հայաստանի հիւսիսը գտնուող Աշոցք գիւղը եւ այցելեց «Փրկչին Մայրը» անունով հիւանդանոցը՝ կառուցուած երկրաշարժէն ետք երջանկայիշատակ Յովհաննէս Պօղոս Բ. Սրբազան Քահանայապետին կողմէ: Հոգեւոր Տիրոջ կ'ընկերակցէր առաջնորդ Հայաստանի եւ Արեւելեան Եւրոպայի Արհի. Հայր Նշան Արք. Գարաքէհէեանը:

Ապա Հոգեւոր Տէրը անցաւ Վրաստան, եւ այցելեց նորակազմ Ժնատովական գիւղի նորակառոյց սուրբ Սարգիս եկեղեցին: Սուրբ Պատարագ մատուցեց Հեշտիա գիւղի հայ քոյրերու կեդրոնին մէջ: Իր քարոզին ընթացքին, Հոգեւոր Տէրը ողջունեց Հեշտիոյ հաւատացեալները եւ ուրախութիւն յայտնեց հաւատքի կեանքի վերահաստատման համար: Ապա ան պատգամեց ժողովուրդին որ աղօթեն իրենց հոգեւոր առաջնորդներուն համար, որոնք ամէն օր կը պատերազմին սատանային դէմ: «Այսպիսով, շարունակեց Հոգեւոր Տէրը, հօտ եւ հովիւ աւելի պիտի միանան, հովիւը՝ սրտի հանգստութիւն պիտի վայլէ, իսկ հօտը՝ անոր առաքելութեան մասնակից դառնալով հաճելի պիտի ըլլայ Աստուծոյ»:

Հոգեւոր Տէրը քաջալերեց ներկաները Աստուծոյ սիրով եւ ներկայութեամբ, Աստուծոյ սէրը նկատելով «անկորնչելի գանձ մը», ուր պէտք է ըլլայ մեր սիրտը, համաձայն Քրիստոսի պատգամին:

Ապա ան այցելեց Թորիա եւ Ուջմանա գիւղերը, ինչպէս նաեւ արուեստագէտ Վիքթոր Յովսէփեանի տուն-թանգարանը: Հոգեւոր Տէրը այցելեց նաեւ Բաւրա եւ Կարդիկամ գիւղերու ժողովրդապետութիւնները:

Չորեքշաբթի 30 Յուլիսին, Հոգեւոր Տէրը այցելեց Ղուկումոյի 150 ամեայ եկեղեցին, ինչպէս նաեւ Արաստանի եկեղեցին եւ ապա Տուրցքի Սա-



լեզեան քոյրերու մանուկներու կեդրոնին մէջ մատուցեց սուրբ Պատարագ: Ողջունելով ներկաները, Հոգեւոր Տէրը իր պատգամը ուղղեց հաւատացեալներուն խօսելով Յիսուսի մարդեղինացումին մասին, ան ըսաւ, թէ «Յիսուս՝ իբր մարդ, չարչարուեցաւ, անոր համար շատ լաւ կ'ըմբռնէ չարչարուած մարդոց վիճակը, տառապեալներուն ցաւը, անձկութեան մէջ եղողները, առանձին լքուածները եւ մահամերձները: Կը բաւէ որ հաւատքով իրմէ օգնութիւն խնդրենք, անմիջապէս օգնութեան կը հասնի»: Ապա Հոգեւոր Տէրը կոչ ուղղեց հետեւիլ Քրիստոսի օրինակին, ու ըլլալ խոնարհ, որովհետեւ խոնարհութեամբ խնդրուածին Աստուած պիտի պատասխանէ: Գիշերելէ ետք Տուրցքի մէջ, Հինգշաբթի 31 Յուլիսին, Հոգեւոր Տէրը այցելեց Ախալցխայի Ծղալբերիա գիւղի 120ամեայ եկեղեցին եւ մատուցեց սուրբ Պատարագ: Հոգեւոր Տէրը հայրական ուրախութեամբ ողջունեց հարիւրամեայ եկեղեցիին շուրջ բոլորուած հայ կաթողիկէ համայնքը: «Սուրբ Պետրոս նորադարձ քրիստոնեաները կը նկատէ կենդանի վէմերը հոգեւոր տաճարին. այդպիսով քարաշէն եկեղեցիին տօնը, իրաւամբ տօնն է Վրաստանի Հայ Կաթողիկէ համայնքին, եւ իւրաքանչիւր հաւատացեալի», հաստատեց Հոգեւոր Տէրը իր պատգամին մէջ:

Ան այցելեց նաեւ Յինուբանի 100ամեայ եկեղեցին ուր դարձեալ մատուցեց Հայրապետական սուրբ Պատարագ: Ապա Հոգեւոր Տէրը այցելեց Նոխրէպ եւ Աբաթխէվի գիւղերը եւ վերջապէս վերադարձաւ Աշոցք:

Ուրբաթ 1 Օգոստոս 2008-ին, Հոգեւոր Տէրը այցելեց Քանաքեռ եւ Կիւմրիի Քարիզասի թերաճներու կեդրոնը: Նոյն օրը ան հանդիպում ունեցաւ Սփիւռքի հետ կապերու պետական կոմիտէի նախագահ՝ Հրանուշ Յակոբեանին հետ: Հանդիպման ընթացքին կոմիտէի նախագահը Հոգեւոր Տիրոջ ներկայացուց հայրենիք-սփիւռք գործակցութեան զարգացման տեսլականը: Միտքեր փոխանակուեցան սփիւռքահայութիւնը յուզող խնդիրներու, հայրենիք-սփիւռք կապերու ամրապնդման, հայոց լեզուի, գրականութեան եւ հայոց պատմութեան դասագիրքերու հրատարակման անհրաժեշտութեան վերաբերեալ, ինչպէս նաեւ՝ համահայկական մարդահամարի կազմակերպման գործին Հայ կաթողիկէ համայնքին օգնութեան մասին:

Հոգեւոր Տիրոջ այս այցելութիւնը եզակի էր իր տեսակին մէջ, որովհետեւ առաջին անգամն էր որ Հայ Կաթողիկէ Եկեղեցոյ Պետը կ'այցելէր Վրաստանի 14 գիւղերը, ուր ան արժանացաւ ժողովրդային ու պաշտօնական ամենաջերմ ընդունելութեան: Այս մէկը մեծ մխիթարանք էր վրացական մեկուսացած գիւղերու մէջ դժուար ու նախնական պայմաններու տակ ապրող հայ ժողովուրդին համար:

Շաբաթ, 2 Օգոստոս 2008-ին, Հոգեւոր Տէրը վերադարձաւ իր նստավայրը՝ Զմմառ:

ԱՄԵՆԱՊԱՏԻԻ ՏԷՐ ՆԵՐՍԷՍ ՊԵՏՐՈՍ ԺԹ. ԿԱԹՈՂԻԿՈՍ ՊԱՏՐԻԱՐԲԻ ԸՆԴՄԻՋՈՒՄԸ ԿԱԹՈՂԻԿԷ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՅ ՍԻՆՆՈՂՈՍԻՆ

Մարտի 12 նոյեմբեր 2008-ին, Վատիկանի մէջ գումարուեցաւ Կաթողիկէ Եկեղեցւոյ Եպիսկոպոսաց Սիննոդոսի 12-րդ Ընդհանուր Սովորական Հաւաքին 11-րդ նիստը «Աստուծոյ Խօսքը Եկեղեցւոյ Կեանքին եւ Առաքելութեան Մէջ» տիտղոսին տակ, որուն ըստ հերթի կը նախագահէր Սաօ Փառլոյի արքեպիսկոպոս՝ կարդ. Օտիլիօ Բետրօ Շերերի:

Ժողովական հայրերուն կարգին յատուկ միջամտութիւն ունեցաւ Ամեն. եւ Գերերջանիկ Տէր Ներսէս Պետրոս ԺԹ., որպէս Կաթողիկոս Պատրիարք Տանն Կիլիկիոյ Կաթողիկէ Հայոց եւ նախագահ Հայ Կաթողիկէ Սիննոդոսին: Ստորեւ թարգմանաբար կու տանք Հոգեւոր Տիրոջ միջամտութիւնը.

*Սրբազան Հայր,
Արհիպատիւ Սիննոդոսական Հայրեր,
Եղբայրներ եւ քոյրեր ի Քրիստոս,*

Ընդմիջումիս սկիզբը հարկ է հաստատել, որ սուրբ Գրիգոր Լուսաւորիչով աւետարանուած Հայ Եկեղեցին՝ ծնունդ առաւ 301 թուականին, երբ ըստ աւանդութեան քրիստոնէութիւնը որդեգրուեցաւ իբրեւ պետական կրօնք Հայաստանի մէջ: Այդ ժամանակաշրջանին, Հայոց Այբուբենը գոյութիւն չունէր եւ Աստուածաշնչային ընթերցումները կը հռչակուէին յունական կամ ասորական լեզուներով: Հետեւաբար հանդիսապետը պէտք էր գանոնք թարգմանէր հայերէնի: Այս բանը կը դժուարացնէր Աստուծոյ Խօսքին ըմբռնումը նորադարձ հայերուն կողմէ, որմէ ծագեցաւ գաղափարը հնարելու յատուկ գիրեր, թարգմանելու համար Աստուածաշունչը ժողովուրդին լեզուով:

Այս մէկը իրականացաւ շնորհիւ Մեսրոպ անունով վարդապետի մը, որուն խանդավառեցին եւ նեցուկ կանգնեցան Եկեղեցւոյ եւ պետութեան բարձրաստիճան պետերը՝ Սահակ կաթողիկոս եւ Վռամշապուհ թագաւոր: Մեսրոպ գործի լծուեցաւ եւ 406 թուին հնարեց Հայոց Այբուբենը:

Առաջին թարգմանուած գիրքը եղաւ Աստուածաշունչը, Եօթանասնիցէն, ապա կարգը եկաւ եկեղեցական այլ գրքերու, որոնք ճանչցուած էին այդ շրջանին:

Կրնանք հաստատել, որ Աստուածաշունչի հայերէնի թարգմանութեան էութիւնը, սուրբ Գիրքը ստացաւ իւրապատուկ կարեւորութիւն հայ ժողովուրդի կեանքէն ներս: Իր օգտաշատ եւ դրական ազդեցութեամբ ի յայտ բերաւ նոր մտածելակերպ եւ նոր շունչ հաւատացեալներուն եւ մտաւորականներուն մօտ, ինչպէս նաեւ ընկերութեան մէջ ընդհանրապէս:

Ե. դարէն մինչեւ ԺԸ. դար, Հայ Եկեղեցին ունեցաւ Աստուածաշունչի զանազան մեծահամբաւ մեկնաբաններ, որոնցմէ նշենք՝ սուրբ Գրիգոր Նարեկացին (Ժ.-ԺԱ. դար), սուրբ Ներսէս Շնորհալին (ԺԲ. դար) եւ սուրբ Ներսէս Լամբրոնացին (ԺԲ. դար): Անոնք իրենց գրողմը ունեցան եկեղեցական գրականութեան վրայ յաջորդող դարերէն մինչեւ օրս:

Ե. դարէն մինչեւ Ի. դար, Հայ ժողովուրդը յանուն քրիստոնէական հաւատքին ապրեցաւ բազմաթիւ հալածանքներ: Ամէնէն նշանաւորը, եւ որուն նահատակները ամէն տարի կը յիշատակուին, սրբոց Վարդանանց նահատակութիւնն է, 451 թուին, երբ Պարսից թագաւոր Յակոբքա Ռ. ուզեց խլել քրիստոնէական կրօնքը հայ ժողովուրդէն եւ անոր պարտադրել մագոսականութիւնը՝ կրակի կրօնքը: Ղեկնող քահանան կը յորդորէր զինուորները հաւատարիմ մնալու իրենց հաւատքին, իրենց ըսելով. « Ձեր մէջէն շատեր կը ճանչնան սուրբ Գիրքը մանկութենէն ի վեր»: Ուստի այս դիւցազներգութեան հեղինակը՝ Եղիշէն, կը յայտնաբերէ հայ ժողովուրդի կապուածութիւնը Աւետարանին ըսելով. «Ինչպէս կարելի չէ խլել մորթին գոյնը, այնպէս ալ ոչ ոք կրնայ մեզմէ խլել Քրիստոսի հաւատքը»:

Ե. դարէն սկսեալ, տարբեր գրողներ կը վկայեն, թէ հայ ժողովուրդին մէջ կը գտնուէին անհատներ, որոնք անգիր կը ճանչնային սաղմոսարանը, որոնցմէ ոմանք կը վկայեն. « մեր Հայրերը գիշեր ու ցերեկ իրենց ժամանակը կ'անցնէին սուրբ Գիրքը ընթեռնելով, ինչ որ կ'ամրապնդէր պատուիրաններու պահպանումը եւ բարի օրինակ կը դարձնէր իրենց շրջապատին»: Ուրիշ վկայութիւն մը այս ծիրէն ներս 1915-ի Յեղասպանութիւնն է: Երբ ընտանիքներ կը տեղահանուէին իրենց գիւղերէն եւ տուներէն եւ խմբովին կը բանտարկուէին նիւղներու, սրահներու ու եկեղեցիներու մէջ, հաւատացեալներ իրենց վերջին գիշերը կ'անցնէին աղօթելով առ Աստուած, ընթեռնելով պարբերութիւններ Աւետարանէն, որ վերջին ճանապարհորդութեան արժէքաւոր սնունդն էր տառապեալ հայ մօր:

Առանց երկմտութեան կարելի է եզրակացնել, որ հայոց գիրերու գիւտը 406 թուին առաջնահերթ նպատակ ունէր հայ ժողովուրդին աւետարանացումը: Այս աւետարանացումը փրկեց միշտ վտանգուած քրիստոնէայ հաւատքը, ինչպէս 451 թուին (երբ Աստուածաշունչը նոր թարգմանուած էր) եւ յաջորդ դարերուն: Աստուծոյ Խօսքը զօրավիզ կանգնեցաւ Հայ Եկեղեցւոյ եւ ժողովուրդին իր ցաւալի պատմութեան ընթացքին եւ ներշնչեց ամբողջ հայ մշակոյթը դարերու ընթացքին: Աստուծոյ Խօսքը շարու-

նակաբար առաջնորդած է քրիստոնեաներու կեանքը Հայաստանի մէջ:
Այս թանկարժէք հարստութիւնը, որ կը ներկայացնէ սուրբ Գիրքը,
ինչպէս նաեւ օրինակելի կեանքը մեր նախահայրերուն, աւելի կը խանդա-
վառեն նոր սերունդը վերադառնալու կեանքի խօսքին:
Թող այս մէկը Սիւնհոգոսի որոշումներու հունձքը հանդիսանայ:

**ԱՄԵՆԱՊԱՏԻԻ
ՏԷՐ ՆԵՐՍԷՍ ՊԵՏՐՈՍ ԺԹ.
ԿԸ ՄԱՍՆԱԿՑԻ ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏԱԿԱՆ
ՄԻՋ-ԿՐՕՆԱԿԱՆ
ԵՐԿԽՕՍՈՒԹԵԱՆ ԺՈՂՈՎԻՆ**

4 - 7 Յունիս 2008

Ամենապատիւ եւ Գերերջանիկ Տէր Ներսէս Պետրոս ԺԹ. Կաթողիկոս Պատրիարքը Հռոմի մէջ մասնակցեցաւ Քահանայապետական Միջ-կրօնա-կան Երկխօսութեան Ժողովին: Այս հանդիպումներու ծիրէն ներս, Շաբաթ, 8 Յունիս 2008-ին, Սրբազան Քահանայապետ՝ Բենեդիկտոս ԺԶ. ընդունեցաւ Ժողովին մասնակից հայրերը:

Այս առթիւ, Սրբազան Քահանայապետը շեշտեց, թէ կրօնական համագործակցութիւնը առիթը կ'ընծայէ արտայայտելու ամենավսեմ իտէալները իւրաքանչիւր կրօնական աւանդութեան: Սրբազան Քահանայապետը ըսաւ, թէ տարբեր կրօնքներու պատկանող մարդոց կը միացնէ սէրը մարդկութեան հանդէպ եւ մարդասիրական աշխատանքները՝ ինչպէս օգնել հիւանդներուն, կարիքաւորներուն ու տարեցներուն, նաեւ նեցուկ կանգնիլ բնական աղէտներու եւ բոլոր տեսակի բռնութեան զոհներուն:

Աւելցնելով, Սրբազան Քահանայապետը ըսաւ, թէ միջ-կրօնական երկխօսութիւնը պէտք է ըլլայ հաւատքի ճանապարհ մը, որուն հետեւողները եւ հաւատացողները պէտք է լաւապէս տեղեակ ըլլան իրենց եւ ուրիշներու հաւատքէն:

ԱՄԵՆԱՊԱՏԻԻ ՏԵՐ ՆԵՐՍԷՍ ՊԵՏՐՈՍ ԺԹ. ԿԱԹՈՂԻԿՈՍ ՊԱՏՐԻԱՐՔԸ ՄԱՍՆԱԿՑԵՑԱԻ ԼԻՔԱՆԱՆԻ ՀՈԳԵՒՈՐ ՊԵՏԵՐՈՒ ԺՈՂՈՎԻՆ

24 Յունիս 2008



Լիբանանի Հանրապետութեան նախագահ զօր. Միշել Սլէյմանի հրաւերով, Երեքշաբթի 24 Յունիս 2008-ին, Տանն Կիլիկիոյ Կաթողիկէ Հայոց Տէր Ներսէս Պետրոս ԺԹ. Կաթողիկոս Պատրիարքը մասնակցեցաւ հոգեւոր պետերու ժողովին Պապատայի նախագահական պալատին մէջ: Ներկայ էին նաեւ մարոնիներու Նասրալլա Սֆէյր Պատրիարքը, Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա. Կաթողիկոսը, հանրապետութեան միւլթի շէյխ Մոհ-համէտ Ռաշիտ Քապպանին, շիիներու գերագոյն խորհուրդի փոխնախագահ շէյխ Ապտ էլ Էմիր Քապալանը, յոյն ուղղափառ համայնքի Իգնատիոս Դ. Հազիմ Պատրիարքը, տիւրզի համայնքի հոգեւոր պետ շէյխ Նայիմ Հասանը, Սուրիոյ եւ Լիբանանի մէջ Աւետարանական համայնքի հոգեւոր պետ Վեր. Սելիմ Սահիունը, Լիբանանի մէջ ասորի համայնքի հոգեւոր

առաջնորդ Մար Նարսայ Էլիաս Տի Պազ եպիսկոպոսը, ինչպէս նաեւ շարք մը այլ հոգեւոր պետեր:

Նախագահ Սլէյման հոգեւոր բոլոր պետերէն օրհնութիւն ստանալէ ետք արտասանեց իր խօսքը՝ նշելով, որ լիբանանցիներուն միջեւ բախումներն ու տարակարծութիւնները հասած են անձնասպանութեան աստիճանի:

Ան յայտնեց, որ հաւանաբար լաւագոյն մաղթանքը եւ միջոցը պիտի ըլլայ Լիբանանի նոր կառավարութեան կազմութեան գործընթացը արագացնել, այնպէս մը, որ այդ կառավարութիւնը գոհացնէ լիբանանցիներուն կամքը, անոնց փայլուն ապագայ մը ապահովէ եւ լիբանանցի քաղաքական ղեկավարները բարձրացնէ քաղաքական պատասխանատուութեան գիտակցութեան գագաթնակէտին՝ իրենց հայրենիքին եւ ժողովուրդին հանդէպ, նոյնիսկ եթէ անիկա զոհողութիւններ եւ զիջումներ կը պահանջէ:

Ապա նախագահական պալատին մէջ սարքուեցաւ ճաշկերոյթ մը՝ ի պատիւ Լիբանանի հոգեւոր պետերուն: Ճաշկերոյթին ընթացքին նախագահ Սլէյմանի եւ հոգեւոր պետերուն միացան նաեւ խորհրդարանի նախագահ Նեպիհ Պրրրի եւ վարչապետ Ֆուատ Սինիրա:

Ճաշկերոյթէն ետք կատարուեցան խորհրդակցութիւններ, որոնց լոյսին տակ իսլամ - քրիստոնեայ երկխօսութեան յանձնախումբը պատրաստեց հաղորդագրութիւն մը, որ ընթերցուեցաւ յանձնախումբի նախագահ Հարես Շեհապի կողմէ:

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՍԻՆՆՈՒՄԱԿԱՆ ՀԱՅՐԵՐԸ ԵՒ ԱՆԳԱՄՆԵՐԸ ԱՅՑԵԼԵՑԻՆ ՆԱԽԱԳԱՀ ՍԼԷՅՄԱՆԻՆ

19 Սեպտեմբեր 2008

Ուրբաթ 19 Սեպտեմբեր 2008-ին, առաւօտեան ժամը 10:30-ին, Հայ Կաթողիկէ եկեղեցւոյ Սիւնհոգոսական Հայրերը առաջնորդութեամբ Տանն Կրիկիրոյ Կաթողիկէ Հայոց Ամենապատիւ եւ Գերերջանիկ Տէր Ներսէս Պետրոս ԺԹ. Կաթողիկոս Պատրիարքին պաշտօնական այցելութիւն մը տուին Լիբանանի Հանրապետութեան նախագահ՝ զօրավար Միշէլ Սլէյմանին, Պապատայի նախագահական պալատին մէջ: Ամենապատիւ Հոգեւոր Տիրոջ պատուիրակութեան մաս կը կազմէին Ամենապատիւ Տէր Յովհաննէս Պետրոս ԺԸ. Գասպարեան՝ վաստակաւոր Կաթողիկոս Պատրիարք, ինչպէս նաեւ Լիբանանի, Հայաստանի եւ Արեւելեան Եւրոպայի, Դամասկոսի, Հալէպի, Գամիշլիի, Թուրքիոյ, Իրաքի, Եգիպտոսի, Պարակաստանի, Ֆրանսայի եւ Արեւմտեան Եւրոպայի, Միացեալ Նահանգներու եւ Գանատայի, Լատին Ամերիկայի, Յունաստանի, Երոսաղէմի եւ Յորդանանի վիճակաւորները, ինչպէս նաեւ վաստակաւոր եպիսկոպոսներ եւ Զմմառեան Միաբանութեան Պատրիարքական Փոխանորդը:

Հայ Կաթողիկէ պատուիրակութիւնը պալատի մուտքին ընդունուեցաւ զինուորական պատիւներով: Պալատի դահլիճին մէջ բարի գալուստի ողջագոլորումներէ ետք խօսք առաւ Ամեն. Հոգեւոր Տէրը եւ Սիւնհոգոսական Հայրերու անունով շնորհակալութիւն յայտնեց նախագահին իր ջերմ ընդունելութեան համար: Ան իր խօսքին մէջ յիշեց, թէ Հայ Կաթողիկէ Պատրիարքութեան Աթոռը 1742-ին հաստատուած է Լիբանան, ուր հայերը ապրած են դարերէ ի վեր: Ամեն. Հոգեւոր Տէրը յայտնեց թէ հայերը մեծապէս երախտապարտ են Լիբանանի զաւակներուն, որոնք Յեղասպանութենէն ճողոպրած հայ ժողովուրդին բացին իրենց սրտերը եւ գրկաբաց թեւերով ընդունեցին զանոնք:

Ամենապատիւ Հոգեւոր Տէրը գնահատանքի խօսքեր արտայայտեց նախագահին արժանիքներուն մասին, մաղթելով որ Աստուած տայ անոր Սողոմոնի իմաստութիւնը, որպէսզի յառաջ տանի ազգային երկխօսութիւնը



Եւ կառավարէ Լիբանանը սիրոյ եւ անկախութեան միջնորդութի մէջ:

Նախագահ Միշէլ Սլէյման իր կարգին շնորհակալութիւն յայտնեց Սիւնհոգոսական Հայրերուն, մաղթելով որ անոնց ժողովները արգասաբեր ըլլան հայ համայնքին եւ համայն Լիբանանի համար: Նախագահ Սլէյման շեշտեց, թէ հայերու ներկայութիւնը պարծանք է երկրին համար, որովհետեւ անոնք իրենց աշխատասիրութեամբ եւ մշակոյթով կը հարըտացնեն Լիբանանը: Նախագահը շեշտեց նաեւ որ Լիբանանի մէջ գոյութիւն ունեցող համայնքային բազմազանութիւնը կը բարձրացնէ երկիրը եթէ անոնց շահերը միշտ սերտօրէն կապուած մնան հայրենիք Լիբանանին:

**ԱՄԵՆԱՊԱՏԻԻ
ՏԵՐ ՆԵՐՍԷՍ ՊԵՏՐՈՍ ԺԹ.
ԿԸ ՄԱՍՆԱԿՑԻ ԱՐԵՒԵԼՔԻ ԿԱԹՈՂԻԿԷ
ՊԱՏՐԻԱՐՔՆԵՐՈՒ 18-ՐԴ
ՀԱՄԱԺՈՂՈՎԻՆ - ԼԻՔԱՆԱՆ**

24-28 Նոյեմբեր 2008

Երկուշաբթի 24 Նոյեմբեր 2008-ին, Արեւելքի Կաթողիկէ Պատրիարքաներու 18-րդ Համաժողովը տեղի ունեցաւ Լիբանանի Մարոնիթ Եկեղեցոյ պատրիարքարանին՝ Պքերքէի մէջ, որուն հիմնական նիւթն էր սուրբ Պօղոսի կեանքն ու առաքելութիւնը, ծննդեան 2000ամեակին առթիւ: Բացումը կատարուեցաւ սուրբ Պատարագով նախագահութեամբ կարդինալ Նասրալլա Սֆէյրի՝ Մարոնիթ Պատրիարք:

Համաժողովին կը մասնակցէին կարդինալ Նասրալլա Սֆէյր, Ամենապատիւ եւ Գերերջանիկ Տէր Ներսէս Պետրոս ԺԹ. Կաթողիկոս Պատրիարքը եւ Պատրիարքներ Կրէկորիոս Լահհամ Գ. (Յոյն Կաթողիկէ), Ֆուատ Թուալ եւ Միշէլ Սապպահ (Լատին), Անթոնիոս Նակիրպ (Ղպտի Կաթողիկէ) եւ Գելտաններու պատրիարքին ներկայացուցիչը:

Բացման ժողովին ներկայ էր Արեւելեան Եկեղեցիներու Խորհուրդի նախագահ՝ կարդինալ Լէօնարտօ Սանտրին:

Համաժողովի 7-րդ նիստին միջ-եկեղեցական հանդիպում մը տեղի ունեցաւ, մասնակցութեամբ Ուղղափառ եւ Աւետարանական Եկեղեցիներու ներկայացուցիչներուն:

Ամենապատիւ Հոգեւոր Տիրոջ կ'ընկերակցէր Զմմառու Միաբանութեան Մեծաւոր եւ Պատրիարքական Փոխանորդ՝ Հայր Միքայէլ Թ.Մ.Վրդ. Մուրատեան:

ՇՆՈՐՀԱՒՈՐԱԳԻՐ ՏԻԿԻՆ ՀՐԱՆՈՒՇ ՅԱԿՈՔԵԱՆԻՆ

Պեյրուք, 4 Նոյեմբեր 2008

Դիւան թիւ 267/08

Ազնուափայլ Տիկին Հրանուշ Յակոբեան
ՀՀ Սփիւռքի Նախարար
ԵՐԵՒԱՆ

Յարգարժան Տիկին Յակոբեան,

Կաթողիկէ Եկեղեցւոյ վատիկանեան Սիւնհոդոսը՝ Հոկտեմբեր 3-էն սկսեալ գրաւած ըլլալով Մեր ամբողջ ժամանակը, ուշացումով կու գանք շնորհաւորելու ձեր Սփիւռքի նախարար սպասուած եւ յուսադրիչ նշանակումը: Վատիկանէն Մեր նստավայրը վերադարձին, Մեր «Մասիս» պաշտօնաթերթի խմբագիրը, Պր. Սարգիս Նաճարեան Մեզի գեկուցեց ձեր ծրագիրներուն եւ առաջադրանքներուն մասին: Ձեզ անձամբ ճանչնալու առիթը ունեցած ըլլալով, համոզուած ենք որ ամենայն պատասխանատուութեամբ, շրջահայեցութեամբ, նպատակաուղղուածութեամբ եւ դիւրագագացութիւններու նկատառումով պիտի հետապնդէք հայրենանրպաստ եւ հայանպաստ այդ ծրագիրներուն ու առաջադրանքներուն իրագործումը, որուն շնորհիւ կը յուսանք աւելի զօրացած տեսնել Հայաստան-Սփիւռք համագործակցութիւնը:

Տեղեկացած ըլլալով նաեւ ձեր մէկ հարազատին կանխահաս կորուստին մասին, ձեզի կը յայտնենք Մեր վշտակցութիւնը եւ կը հայցենք Մեր Երկնաւոր Հօր մխիթարութիւնը:

Յարգելի Տիկին Յակոբեան, Մեր յաջողութեան մաղթանքներուն կը միացնենք Մեր աղօթքը առ Աստուած որպէսզի իր հովանին անպակաս ընէ ձեր եւ ձեր բոլոր գործակիցներուն վրայէն:

Հայրական Օրհնութեամբ՝

✠ ՆԵՐՍԷՍ ՊԵՏՐՈՍ ԺԹ.
Կաթողիկոս Պատրիարք
Տանն Կիլիկիոյ Կաթողիկէ Հայոց

ՌՌԻՄԱՆԱՀԱՅ ՆԱԽԱՐԱՐԸ ԱՅՑԵԼԵՑ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆ

24 Յունիս 2008

Ամենապատիւ Տէր Ներսէս Պետրոս ԺԹ. Կաթողիկոս Պատրիարք Երեքշաբթի, 24 Յունիս 2008-ին ընդունեց Ռումանիոյ Ելեմուտքի նախարար՝ Վարուժան Ոսկանեանը: Ոսկանեանի կ'ընկերակցէին Ռումանիոյ դեսպանատան գործերու վարիչ՝ Տանիէլ Դենասի եւ դեսպանատան պատուիրակույթիւն մը: Հանդիպումին ներկայ էին նաեւ Արհի. Հայր Վարդան եպս. Աշգարեան, Արհի. Հայր Յովհաննէս եպս. Թէյրուզեան, Հայր Վարդան վրդ. Գազանճեան, նաեւ երեսփոխան Սերժ Թուրսարգիս-եան եւ հիւպատոս Արա Խաչատուրեան:

ՀԱՆԴԻՊՈՒՄ ՖՈՔՈԼԱՐԻ ՇԱՐԺՈՒՄԻ ԱՆԴԱՄՆԵՐՈՒ ՀԵՏ

17 Սեպտեմբեր 2008

Չորեքշաբթի, 17 Սեպտեմբեր 2008-ին, երեկոյեան ժամը 9:00-ին, Զմմառ ժամանեցին Լիբանան համագումարի եկած Ֆօքօլարի Շարժումի 35 անդամներ եւ 16 երկիրներէ ժամանած Շարժման համակիր եպիսկոպոսներ, գլխաւորութեամբ Փրակայի նախկին Արքեպիսկոպոս՝ կարգինալ Վըլքի:

Ամենապատիւ Հոգեւոր Տէրը խօսք առնելով բարի գալուստ մաղթեց բոլոր ներկաներուն: Ապա կարգինալ Վըլք ներկայացուց Գիտրա Լուպիքի նախաձեռնութեամբ սկսած այս շարժումը, որուն գլխաւոր նպատակն է ապրիլ ու տարածել Աստուծոյ խօսքը, եւ միութեան հոգեխօսութիւնը: Ան յայտնեց թէ Լիբանանի սքանչելի միջավայրը մեծապէս կ'օգնէ այս տեսակի համամիութենական հանդիպումներու:

ԳԱՐԵԳԻՆ Բ. ՎԵՀԱՓԱՌԻՆ ԱՅՑԸ ՎԱՏԻԿԱՆ

6-13 Մայիս 2008

Սրբազան Քահանայապետ՝ Բենեդիկտոս ԺԶ. Պապին հրաւէրով, 6 Մայիս 2008-ին, Ամենայն Հայոց Գարեգին Բ. Կաթողիկոսը մեկնեցաւ Վատիկան երկու Եկեղեցիներու եղբայրական յարաբերութիւններու սերտացման համար:

Մայիսի 6-էն 9, Վեհափառ Հայրապետը հանդիպումներ ունեցաւ սրբազան Քահանայապետին, Քրիստոնէական Միութեան Խորհուրդի նախագահ՝ կարդինալ Վալտեր Կասպերի հետ: Նոյն օրերուն Ամենայն Հայոց Կաթողիկոսը այցելեց Լեւոնեան վարժարան եւ Պապական Արեւելեան Հիմնարկ:

Մայիս 7-ին, Վեհափառը երոյթ ունեցաւ Բենեդիկտոս ԺԶ. Պապի հաւատացեալներու հետ շաբաթական հանդիպման ժամանակ, դիմելով սուրբ Պետրոսի հրապարակին վրայ հաւաքուած հազարաւոր մարդոց, յորդորելով «բոլոր ազգերուն եւ երկիրներուն միասնաբար դատապարտել բոլոր ցեղասպանութիւնները, որոնք տեղի ունեցած են պատմութեան ընթացքին»:

Ուրբաթ օր, Սրբազան Պապը յայտարարած է. «Հայ Առաքելական Եկեղեցւոյ վերջին շրջանի պատմութիւնը գրուած է հալածանքներու եւ նահատակութեան, խաւարի եւ յոյսի, նուաստացման եւ հոգեւոր վերածընունդի իրերամերժ գոյներով: Հայ Առաքելական Եկեղեցւոյ վերականգնումը ուրախութեան մեծ աղբիւր մըն է բոլորիս համար»:

Վատիկան կատարած այցելութեան վերջին օրը՝ 9 Մայիսին, Ամենայն Հայոց Կաթողիկոսը իր եւ Հայաստանի նախագահ՝ Սերժ Սարգսեանի անունով Բենեդիկտոս ԺԶ. Պապը հրաւիրած է Հայաստան:

Մայիսի 10-էն 13 Գարեգին Բ. հանդիպումներ ունեցաւ Իտալիոյ Հայ համայնքին հետ, նախագահեց Միլանի սուրբ Քառասուն Մանուկ Հայկական եկեղեցւոյ հիմնադրման 50ամեակին նուիրուած միջոցառումներուն, ինչպէս նաեւ այցելեց Վենետիկի սուրբ Ղազար կղզին:

ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ԱՅՑԸ ԼԵՒՈՆԵԱՆ ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՅ ՎԱՐԺԱՐԱՆ

25 Նոյեմբեր 2008

Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա. կաթողիկոս այցելութիւնն մը կատարեց Վատիկան եւ հանդիպում ունեցաւ Բենեդիկտոս ԺԶ. Սրբազան Քահանայապետին հետ: Երեքշաբթի 25 Նոյեմբեր 2008-ի կէսօրին՝ Արամ Ա. Վեհափառը եւ իր շքախումբն ու նաեւ իրենց ընկերակցող աշխարհականները, այցելեցին Հռոմի Լեւոնեան Հայ վարժարան: Յատուկ այս առթիւ, Արհի. Հայր Պետրոս Արք. Միրիաթեան՝ առաջնորդ Հայկալի թեմին եւ Գրիգոր Եպս. Գուսան առաջնորդ Աղեքսանդրիոյ թեմին, Հռոմ ժամանած էին ընդունելու Վեհափառ Հայրապետը յանուն Տանն Կիլիկիոյ Կաթողիկէ Հայոց Ամենապատիւ եւ Գերերջանիկ Տէր Ներսէս Պետրոս ԺԹ. Կաթողիկոս Պատրիարքին: Վեհափառը դպրեվանքի եկեղեցւոյ մէջ ընդունուեցաւ «Հրաշափառ» շարականով:

Այս հանդիպումը Արամ Ա. Կաթողիկոսի երկրորդ այցելութիւնն է Լեւոնեան վարժարան: Այս առթիւ Արամ Ա. Կաթողիկոս Ամենապատիւ եւ Գերերջանիկ Տէր Ներսէս Պետրոս ԺԹ. Կաթողիկոս Պատրիարքին յղած իր նամակին մէջ գոհունակութիւն կը յայտնէ Հռոմի մէջ իրեն ցուցաբերուած խոր յարգանքին եւ ջերմ ընդունելութեան համար, վկայելով նաեւ, թէ «...Արդարեւ, Մեզի եւ Մեզի ընկերակցող պատուիրակութեան անդամներուն մտքերուն մէջ յիշատակելի պահեր պիտի մնան եկեղեցւոյ մէջ կատարուած սրբազան արարողութիւնը, Լեւոնեան վարժարան տրուած այցելութիւնն ու Մեզի ի պատիւ սարքուած ճաշը, որու ընթացքին ստեղծուած ջերմ մթնոլորտն ու փոխանակուած խօսքերը խոր տպււնդութիւն թողուցին Մեր վրայ»:

Արամ Ա. Կաթողիկոսը պաշտօնական այցելութեամբ կը գտնուէր Վատիկան: Ան առանձին ու հրապարակային հանդիպումներ ունեցաւ 24 Նոյեմբեր 2008-ին Բենեդիկտոս ԺԶ. Պապին եւ Վատիկանի բարձրաստիճան պատասխանատուներուն հետ:

Միջ-քրիստոնէական միութեան խորհուրդի նախագահ կարտինալ Վալտեր Կասպեր երկուշաբթի օր Վատիկանի ձայնասփիւռի կայանէն ըսաւ. «Յեղասպանութիւնը վարկած մը չէ, այլ՝ իրականութիւն մը: Ասիկա եզրի հարց մը չէ: Անիկա բազմաթիւ զոհերով պատմական իրողու-



Թիւն մըն է, եւ այս յիշատակը դարմանումի կը կարօտի: Չեմ գիտեր, թէ Թուրքիա-Հայաստան յարաբերութիւնները մեղմացնելու համար Վատիկան ի՞նչ կրնայ ընել: Սակայն ասիկա նաեւ Միջին Արեւելքի խաղաղութեան համար կարեւոր քայլ մըն է: Նախ եւ առաջ, Կաթողիկէ Եկեղեցին զոհերուն կողքին կը կանգնի: Ասիկա մեր վարուելակերպը ճշդելու մէջ կարեւոր սկզբունք մըն է»:

Ա. ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՒԹԻՒՆԸ

Սաւուղ, արտերկրի հրեայ մըն էր եւ Հռոմի քաղաքացի:

Ծնած է շուրջ 5-10 տարիներուն Ք.Ն., Կիլիկիոյ Տարսոն քաղաքին մէջ (ներկայիս Թուրքիոյ հիւսիս-արեւելքը): Ան բարձր կրօնական ուսում ստացած է, յաճախելով Տարսոնի հրեայ ընկերներու դպրոցը, յետոյ ուղղուած է դէպի Երուսաղէմ, հրեայ հռչակաւոր կրօնագէտներու մօտ:



Սաւուղ եղած է մորեռանդ փարիսեցի մը, եւ կամակից՝ սուրբ Ստեփանոսի սպանութեան: Այս դէպքէն ետք, մեծ հալածանքներու շարք մը կը ծաւալի Երուսաղէմի Եկեղեցւոյ դէմ, որուն հետեւանքով Քրիստոսի աշակերտները, բացի առաքեալներէն կը ցրուին Հրէաստանի ու Սամարիոյ գիւղերը: Սաւուղի ծայրայեղութիւնը զինք կ'ուղղէ աւելի խստօրէն հալածելու քրիստոնեաները, զանոնք համարելով մեծ վտանգ մը հրէական

կրօնքին համար: Հետեւաբար ան կը ստանձնէ այս հալածանքները ղեկավարելու պաշտօնը իրեն տրուած հրեաներու մեծ քահանայէն:

Երբ Սաւուղ կ'երթար Քրիստոսի հետեւորդները Դամասկոսէն շղթայակապ Երուսաղէմ բերելու, ճամբուն վրայ, գերբնական լոյս մը կը յայտնուի իրեն, եւ ձայն մը զինք կը կանչէ ըսելով. «Սաւուղ, Սաւուղ, ինչո՞ւ կը հալածես զիս»: ան կը պատասխանէ ձայնին՝ «Ո՞վ ես, Տէր»: ապա ձայնը կ'ըսէ. «Ես Յիսուսն եմ, որ կը հալածես: Բայց հիմա ելի՛ր, քաղաք մտի՛ր եւ հոն քեզի կ'ըսեն թէ ինչ պէտք է ընես»: Սաւուղ այս պահէն սկսեալ ոչինչ կը տեսնէ այլեւս. իր պահակները, որ վկայ կ'ըլլան այս դէպքին, զինք կ'առաջնորդեն մինչեւ Դամասկոս քաղաքը: Երեք օր շարունակ, ան կը մնայ առանց տեսողութեան, առանց ուտելու եւ առանց խմելու (Գործք 9, 3-9):

Այս ներքին լուսաւորման փորձառութիւնը ապրելով, Պօղոս կը հանդիպի Յիսուսի աշակերտ՝ ծերունի Անանիային: Երեք օր յետոյ, ան Անանիայէն կը ստանայ Քրիստոսի մկրտութիւնը ու կը վերագտնէ իր տեսողութիւնը, դառնալով «քարոզիչ» Քրիստոսի անունին: Սաւուղի այս դարձը յիշուած է իր նամակին մէջ ուղղուած Գաղատիոյ քրիստոնեաներուն:

Կարճ ատեն մը Երուսաղէմ մնալէ ետք, Պօղոս կը վերադառնայ Տարսոն: Բառնաբաս Տարսոն կ'անցնի Պօղոսը փնտռելու: Չանիկա գտնելով կը բերէ Անտիոք՝ Կայսրութեան երրորդ քաղաքը Հռոմէն ու Եգիպտոսի Ադեքսանդրիայէն ետք, ուր կ'ապրէր փոքրաթիւ քրիստոնեայ հասարակութիւն մը: Բառնաբաս զանիկա գտնելով՝ առաքելներուն կը տանի ու կը պատմէ անոր հետ պատահածը: Անոնք կը խնդրեն Պօղոսէն սուրբ Հոգիի առաջնորդութեամբ աւետել սուրբ Աւետարանը, իր հասարակութեան՝ Կիպրոսի մէջ: Յովհաննէս, նաեւ կոչուած՝ Մարկոս, Բառնաբասի հարազատը, կը միանայ իրենց: Ուստի, Պօղոսի «առաջին առաքելական ճամբորդութիւնը» կը սկսի, երբ երեք աշակերտները կը մտնեն Սելեւկիոյ նաւահանգիստը, ուրկէ նաւով կ'անցնին Կիպրոս:

Քաղաքէ քաղաք անցնելով, Պօղոս կ'ըլլայ առաքելութեան առաջնորդը

Անոնց Կիպրոս այցելութիւնը կ'ըլլայ արագ: Այս հանգրուանէն սկսեալ, նորադարձ քրիստոնեայ Սաւուղը այլեւս կը կոչուի լատին անունով՝ Պօղոս, ու կ'ըլլայ առաքելութեան առաջնորդը: Մարկոսի Երուսաղէմ վերադարձէն ետք, Պօղոս եւ Բառնաբաս Պափոսէն նաև կ'առնեն եւ կ'իջնեն Պերգէ՝ Պամփիլիոյ մէջ, ուրկէ կ'անցնին Անտիոք՝ Պիսիադիայի մէջ: Սակայն հակառակորդ ուժերու թիւը բազմանալով իրենց դէմ, անոնք կը ստիպուին արագօրէն մեկնիլ քաղաքէն դէպի Իկոնիոն, ուր նոյն թշնամութեան կը հանդիպին: Լիւստրոսի մէջ, Պօղոս կը բուժէ անդամալոյժ մը, ու հետեւաբար տեղացիները հիացած այս հրաշքէն զինք կը կոչեն Հերմէս: Նոյնպէս այս քաղաքէն քշուելով ու մահէ ազատելով, Պօղոս Բառնաբասի հետ կը վերադառնայ Պերգէ, ուր անոնք կ'ունենան

«մեծ թիւով հետեւորդներ»: Անտիոք վերադարձին, Պօղոս կը պատմէ այս առաջին առաքելական ճամբորդութեան մասին, թէ ինչպէս «Աստուած իրենց միջոցով հեթանոսներուն հաւատքի դուռը բացեր էր»:

Երուսաղէմի համաժողովը (48-49 թուականներուն)

Երբ Պօղոս իր առաջին առաքելական ճամբորդութենէն յետոյ Անտիոք կը ժամանէ, բազմաթիւ հեթանոսներ ընդունած էին արդէն քրիստոնէութիւնը: Անոնք մկրտուած էին, առանց պարտադրուելու հրէական օրէնքներէն: Սակայն հրեաները, աւանդութեան կառչած, խստօրէն կը յայտարարէին, որ նորադարձերը պէտք է յարգեն հրէական կանոնները, ու անոնք ալ նոյնպէս թրփատուին: Հարցը վճռելու համար, Անտիոքի Եկեղեցին կ'որոշէ դիմել Երուսաղէմի Մայր Եկեղեցոյ: Պօղոս, Բառնաբաս եւ ուրիշ եղբայրներ իբրեւ պատուիրակներ կ'ուղարկուին սուրբ Քաղաք՝ առաքեալներուն մօտ:

Երուսաղէմ ժամանելով, անոնք կը պատմեն սուրբ Հոգիին միխթարութեամբ կատարուած իրենց առաքելութեան ու նորադարձ հետեւորդներուն մասին: Պետրոս առաքեալ, վկայ ըլլալով հեթանոսներու դարձին, անիմաստ կը գտնէ ենթարկել զանոնք հրէական օրէնքին: Նոյնպէս ալ Յակոբ՝ Երուսաղէմի Եկեղեցոյ երէցը, կ'որդեգրէ նոյն կեցուածքը: Հետեւաբար, Պօղոս եւ իր ընկերակիցները կը վերադառնան Անտիոք առաքելական նամակով մը, ուղղուած՝ Անտիոքի, Սուրիոյ եւ Կիլիկիոյ հաւատացեալներուն, որուն մէջ Երուսաղէմի համաժողովը քրիստոնէայ հաւատքը չ'ենթարկեր հրէական օրէնքին:

Երկրորդ առաքելական ճամբորդութիւն (49-52 թուականներուն)

Պօղոս ու Բառնաբաս կը փափաքին կրկին այցելել այն հասարակութիւնները, որ այցելած էին իրենց առաջին առաքելական ճամբորդութեան ընթացքին: Անհամաձայն ըլլալով Բառնաբասի հետ Յովհաննէս-Մարկոսին շուրջ, Պօղոս կ'ընտրէ Շիղան իբրեւ ընկերակից, ու անոր հետ կը շրջի շուրջ հազար քիլոմէթր՝ կայսրութեան արեւելեան շրջաններէն դէպի արեւմուտք, ուր կը հաստատէ եկեղեցիներ:

Սուրբ Զոգին կ'ուղղէ առաքելութիւնը

Պօղոս կ'այցելէ նաեւ Փոքր Ասիոյ ու Կիլիկիոյ հասարակութիւնները: Լիւստրոսի մէջ իրեն կը միանայ Տիմոթէոս աշակերտը, որ կը շարունակէ Պօղոսի եւ Շիղայի հետ առաքելութիւնը, սուրբ Հոգիին առաջնորդութեամբ երթալով Գաղատիա ու Միւսիա քաղաքները: Աղեքսանդրիոյ մէջ, կ'որոշեն մեկնիլ Եւրոպա, ու անսալով տեսիլքի մը կ'անցնին Մակեդոնիա: Փրիլպէի մէջ, ան կ'ազատէ ծառայ մը չար ոգիէն: Բայց հալածուելով տեղւոյն բնակիչներէն, անոնք կ'ենթարկուին ծեծի ու բանտարկութեան: Ապա աստուածային հրաշքով բանտէն ազատելով, Պօղոս եւ Շիղա կը շարունակեն իրենց երթը աւելի նոր դժուարութիւններու հանդիպելով, եւ

Աստուծոյ խօսքը աւետելով Թեսաղոնիկէի ու Բերիոյ մէջ: Աթէնքի մէջ, հրապարակային հանդիպումներու ընթացքին, Պօղոս փիլիսոփայական վէճի մէջ կը մտնէ տեղացի ժողովուրդին հետ: Ան օրինակելի քարոզով մը, կ'անդրադառնայ Քրիստոսի Յարուժեան, սակայն փոքրաթիւ աթէնացիներ կ'ընդունին քրիստոնէայ հաւատքը:

Ապաստանելով Կորնթոսի մէջ շուրջ 18 ամիսներ, Պօղոս կը գրէ իր առաջին նամակները ուղղուած Թեսաղոնիկէի հասարակութեան: Հոն նաեւ կը քարոզէ Աստուծոյ խօսքը հրեաներուն ու հեթանոսներուն, որոնցմէ շատեր, լսելով Պօղոսը, կը հաւատան ու մկրտուին: Անկէ ետք Պօղոս կը մեկնի Եփեսոս, Կեսարիա, Երուսաղէմ, ուրկէ կը վերադառնայ հաւանաբար Անտիոք:

Երրորդ առաքելական ճամբորդութիւն (53-56 թուականներուն)

Պօղոս երկար չի մնար Անտիոք, որովհետեւ կը փափաքէր կրկին այցելել այն եկեղեցիները, որ հիմնած էր Յունաստանի ու Փոքր Ասիոյ մէջ: Կ'որոշէ վերադառնալ Գաղատիա, անցնելով Եփեսոս քաղաքէն, ուր կ'աւետէ բարի լուրը: Սակայն հրեաներուն թշնամութիւնը մեծնալով իր դէմ, կ'ապաստանի Թեսաղոնիկէ: Առաքելական գործը հոս բաւական ուժգին կ'ըլլայ, ուր երկու տարիներ շարունակ, հրեաներ եւ յոյներ, առիթը կ'ունենան լսելու Աստուծոյ խօսքը: Հաւանաբար այս քաղաքէն Պօղոս կ'ուղղէ իր նամակները փիլիպեցիներուն եւ գաղատացիներուն 55-56 թուականներուն, ինչպէս նաեւ երկու ուրիշ նամակներ ուղղուած՝ կորնթացիներուն, եւ նամակ մըն ալ հռովմէացիներուն:

Եփեսոսի մէջ Պօղոսի առաքելական յաջողութիւնը իրեն դէմ կը հանէ յոյն չաստուած՝ Արտեմիսի հետեւորդներու զայրոյթը, որոնք իրենց ցոյցերով կը ստիպեն Պօղոսը լքել քաղաքը գաղտնօրէն:

Այս հանգրուանէն յետոյ, Պօղոս կ'անցնի զանազան քաղաքներ, ինչպէս՝ Փիլիպպէ, ուր կը տօնէ Զատիկը, ապա Նէապոլիսի նաւահանգիստը եւ Տրովադա, ուրկէ նաւարկութեամբ կը շարունակէ մինչեւ Միլետոն: Ան կը կանչէ Եփեսոսի Եկեղեցւոյ երէցները, անոնց հրաժեշտ տալու համար, թելադրելով սուրբ Հոգիին առաջնորդութեամբ պաշտպան մնալ ամբողջ հասարակութեան: Ան նաւարկութեամբ կը մեկնի Կեսարիա, ուրկէ քալելով կը հասնի Երուսաղէմ:

Պօղոսի ձերբակալութիւնը...

Երուսաղէմի մէջ, Պօղոս կը հանդիպի հրեաներու մեծ լարուածութեան մը իր դէմ: անոնք զինք կ'ամբաստանեն իբրեւ վայրագ, անտարբեր, վտանգաւոր ու անկրօն անձ մը, որ կ'ուրանայ իր հրէական պատկանելիութիւնը: Ան զանազան անգամներ կը ստիպուի ինքզինք պաշտպանել ժողովուրդին, հրէական իշխանութիւններուն ու քաղաքացիներուն դիմաց: Այս ճնշումներուն տակ, ան կը ձերբակալուի ու բանտարկուած կը

տարուի Կեսարիա, որպէսզի ներկայանայ Ատեանին առջեւ:

Պօղոսի խնդրանքը՝ ներկայանալ Կայսրին

Երկու տարիներ շարունակ, ան բանտարկուած կը մնայ Կեսարիոյ մէջ: Ամէն հարցաքննութիւն իր հետ, առիթ էր համարձակութեամբ վկայելու Քրիստոսի ու իր անձնական հաւատքի փորձառութեան մասին: Ժամանակը անցնելով, ան կը պահանջէ վերջապէս ներկայանալ Հռոմ՝ Կայսրին առջեւ: Դատախազը ընդառաջելով անոր խնդրանքին, կ'ուղարկէ Պօղոսը Կայսրութեան մայրաքաղաքը՝ Հռոմ, որպէսզի Կայսրը գիտնէ անձամբ դատէ:

Կեսարիայէն Հռոմ. արկածալից ճամբորդութիւն

Պօղոս, լաւ հսկողութեամբ ճանապարհ կը դրուի դէպի Հռոմ: Նաւային ճամբորդութիւնը բաւական դժուար ու վտանգալոր՝ կը տեւէ 14 օր: Նաւը կը կործանի ու նաւաբեկեալները ապաստան կը գտնեն Մալթա կղզիի ափերուն: Կղզիին մէջ, Պօղոս Տիրոջ անունով կը բուժէ հիւանդ բարբարոսները: Կղզեցիներուն մեծ երախտագիտութիւնը շահելով, ան նորէն կը բռնէ Հռոմի ճամբան:

Շնորհիւ բանտարկուած Պօղոսին, Բարի Լուրը կը տարածուի Կայսրութեան մայրաքաղաքը

Հասնելով Հռոմ, Պօղոս կը դիմէ հրեաներուն, յայտնելով որ Աստուծոյ խօսքը նաեւ հեթանոսներուն համար է, ու ան կ'ընդունի բոլոր անոնք, որոնք իրեն կը դիմեն, հռչակելով Աստուծոյ Արքայութիւնը (Գործք 28,30): Պօղոս երկու տարի կը քարոզէ Հռոմի մէջ. շնորհիւ իրեն, Աստուծոյ խօսքը կը տարածուի ամէն տեղ:

Իր ձերբակալութենէն յետոյ, Սուրբ Գիրքը Հանդրադառնար Պօղոս առաքեալի կեանքին, ո՛չ կայսրին առջեւ երեւումին, ո՛չ ալ վախճանին: Աւելի ուշ յառաջ եկած աւանդութիւններ, երկրորդ դարէն սկսեալ, կ'ակնարկեն ճամբորդութեան մը դէպի ծայրագոյն Արեւմուտք, թերեւս՝ Սպանիա: Ուրիշ աւանդութիւններ կը նշեն թէ Պօղոս առաքեալ վերադարձած է Յունաստան, Մակեդոնիա ու Միսիայի մէջ հիմնած իր հասարակութիւններուն:

Ան կրկին կը ձերբակալուի 66 թուին, կը գլխատուի 67 թուին միւս առաքեալներու նման, Ներոն կայսրին օրով, Տիրեբիսի մօտ:

Թարգմանեց եւ համադրեց
Հ. Է.

ՀԱՄԱՌՕՏՈՒԹԻՒՆ ՍՈՒՐԲ ԳՐՔԻ ՄԻՒՆՀՈԳՈՍԻ ԱՒԱՐՏԻՆ

Վատիկան

5 - 26 Հոկտեմբեր 2008

Հոկտեմբեր 5-էն 26, Վատիկանի մէջ տեղի ունեցաւ Եպիսկոպոսաց Սիւն-հոդոսի 12-րդ Ընդհանուր Սովորական Հաւաքը, որուն բնարանն էր «Աստուծոյ Խօսքը Եկեղեցւոյ Կեանքի եւ Առաքելութեան Մէջ», եւ որուն նախագահեց Բենեդիկտոս ԺԶ. Սրբազան Քահանայապետը:

Կը ներկայացնենք այս Սիւնհոդոսի եզրափակիչ պատգամը.

Սիրելի Եղբայրներ եւ Քոյրեր,

«Որոնք ամենուրեք կը կանչեն Յիսուս Քրիստոսի՝ մեր եւ իրենց Տիրոջ անունը: Զեզի, շնորհք եւ խաղաղութիւն, Աստուծոյ մեր Հօր եւ մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի կողմէ» (Ա. Կորնթ 1, 2-3): Պօղոս Առաքեալի այս ողջոյնով - իրեն նուիրուած այս տարուան ընթացքին - մենք՝ Սիւնհոդոսական Հայրերս, հաւաքուած՝ Հռոմ, Եպիսկոպոսական Սիւնհոդոսի 12-րդ Ընդհանուր Համաժողովին առթիւ, Բենեդիկտոս ԺԶ. Սրբազան Հօր հետ միատեղ, ձեզի կ'ուղղենք խորհրդածութիւններով ու առաջարկներով լի պատգամ մը Աստուծոյ Խօսքին մասին, որ եղաւ կեդրոնական խորհուրդը մեր համաժողովին:

Պատգամ մը, որ նախ եւ առաջ կը յանձնարարենք հովիւներուն, բազմաթիւ ձեռներէց քրիստոնէականի ուսուցիչներուն եւ բոլոր անոնց, որոնք ձեզ սուրբ Գրքի հոգեպարար ունկնդրութեան եւ ընթերցումի կ'առաջնորդեն: Կ'ուզենք հիմա ձեզի ներկայացնել հոգին եւ հուշիւնը այս գրութեան, որպէսզի անով Աստուծոյ Խօսքին ճանաչումը եւ սէրը աճի եւ խորանայ ձեր մէջ: Էական կէտերը, որոնք ձեր ուշադրութեան կը յանձնենք եւ զորս կ'արտայայտենք խորհրդանշական պատկերներով, չորս հատ են:

Ա- Առաջինն է աստուածային ԶԱՅՆը. Ան կ'արձագանգէ ստեղծագործութեան սկիզբէն ի վեր, խորտակելով ոչինչի լուսթիւնը եւ սկզբնաւորելով տիեզերքի սքանչելիքները. Զայն մըն է, որ կը թափանցէ պատմութեան ընդմէջէն, որ վիրաւոր է մարդկային մեղքին պատճառաւ, եւ վրդովուած՝ ցաւի ու մահուան հետեւանքով: Ան կը տեսնէ նաեւ Տէրը, որ

կ'ընթանայ մարդկութեան հետ որպէսզի անոր նուիրէ իր շնորհքը, իր դաշինքը, իր փրկութիւնը: Զայն մըն է, որ կ'իջնէ էջերուն մէջ սուրբ Գիրքին, զոր կը կարդանք այսօր Եկեղեցւոյ մէջ, առաջնորդութեամբ սուրբ Հոգիին, որ Եկեղեցիին եւ իր հովուապետերուն տրուեցաւ որպէս ճշմարտութեան լոյս մը :

Բ- Ինչպէս կը գրէ սուրբ Յովհաննէս, «Բանն մարմին եղաւ» (Յովհ 1, 14): Հոս է, որ երեւան կու գայ ԴէՄՔը: Ան Յիսուս Քրիստոսն է, որ յաւիտեանական եւ անսահման Աստուծոյ Որդին է, բայց նաեւ մահկանացու մարդը, կապուած պատմական ժամանակաշրջանի մը, ժողովուրդի մը, երկրի մը: Ան կ'ապրի մարդկային հիւծող կեանքը մինչեւ իր մահը, սակայն յարուցիւն կ'առնէ յաղթականօրէն եւ կ'ապրի յաւիտեան: Իրմով է որ մեր հանդիպումը Աստուծոյ Խօսքին հետ կ'ըլլայ կատարեալ: Ան կը բացայայտէ սուրբ Գրոց ամբողջական իմաստն ու միասնականութիւնը, եւ քրիստոնէութիւնը կը վերածէ կրօնքի մը, որ կեդրոնացած է անձի մը՝ Յիսուս Քրիստոսի շուրջ, որ յայտնաբերումն է Հօր: Ինք է որ մեզի կը հասկցնէ, թէ սուրբ Գիրքերը մարմին են, այսինքն՝ մարդկային խօսքեր, զորս պէտք է հասկնալ եւ ուսումնասիրել իրենց արտայայտութեան ձեւերուն համեմատ, միշտ ի մտի ունենալով, թէ անոնք իրենց մէջ կը պահպանեն աստուածային ճշմարտութեան լոյսը, զոր կրնանք ապրիլ եւ որուն կրնանք հայլ միայն սուրբ Հոգիին միջոցաւ:

Գ- Երրորդը Աստուծոյ Հոգին է, որ մեզ կ'առաջնորդէ դէպի երրորդ էական կէտը մեր ուղեցոյցին, որ է Աստուծոյ Խօսքին ՏՈՒՆը, այսինքն Եկեղեցին, որ, ինչպէս կը պատկերէ սուրբ Ղուկաս (Գործք 2, 42), կանգուն կը մնայ չորս անտեսանելի սիւներու վրայ:

1- Նախ Ուսուցումը, այսինքն ընթերցումը եւ ըմբռնումը Աստուածաշունչին՝ բոլորին տրուած աւետիսին, քրիստոնէական ուսուցումին, քարոզին, հոգին եւ սիրտը ներգրաւող յայտարարութեան ընդմէջէն:

2- Ապա՝ Հացի բեկանումը, այսինքն սուրբ Հաղորդութիւնը՝ որ կեանքի աղբիւրն է, գազաթնակէտը եւ Եկեղեցւոյ կեանքը: Ինչպէս որ պատահեցաւ այդ օր, էմմաուսի մէջ, հաւատացեալները հրաւիրուած են եկեղեցական ծէսին ընթացքին՝ անանիոս Քրիստոսի Մարմնին սեղանէն եւ Աստուծոյ Խօսքէն:

3- Երրորդ սիւնը կը ներկայանայ «երախտագիտութեամբ, սաղմոսներով, օրհնութիւններով եւ հոգեւոր երգերով» (Կող 3, 16): Անիկա Ժամերգութիւնն է՝ Եկեղեցւոյ աղօթքը, որ կը ներդաշնակէ քրիստոնէական տարուան օրերն ու ժամանակները: Կայ նաեւ աստուածային ընթերցումը, որ աղօթարար ընթերցումն է սուրբ Գիրքին, որ խորհրդածութեամբ, աղօթքով եւ հայեցողութեամբ կրնայ առաջնորդել մեզ Քրիստոսի հետ հանդիպումին, որ Աստուծոյ կենդանի խօսքն է:

4- Եւ ի վերջոյ՝ Եղբայրական հաղորդակցութիւնը, որով իսկական քրիստոնէաներ ըլլալու համար չի բաւեր ըլլալ անոնցմէ՝ «որ կը լսեն Աստուծոյ խօսքը», այլ պէտք է նաեւ զայն «գործադրեն» (Ղուկ 8, 21): Աս-

տուժոյ Խօսքին տունին մէջ, կը հանդիպինք ուրիշ Եկեղեցիներու կամ քրիստոնէական հասարակութիւններու պատկանող եղբայրներու եւ քոյրերու, որոնք, թէեւ բաժնուած՝ սակայն կ'ապրին իրական միութիւն մը, որ նոյնիսկ եթէ ամբողջական չէ, ապա միաւորուած է աստուածային Խօսքին մեծարանքին եւ սիրոյն միջոցաւ:

Դ- կը հասնինք հոգեւոր ուղեցոյցի վերջին պատկերին. անիկա ՃԱՆԱՊԱՐ Հն է, ուրկէ կ'ընթանայ Աստուծոյ Խօսքը: «Գացէ՛ք ուրեմն, աշակերտեցէ՛ք բոլոր ազգերը, ... Սորվեցուցէ՛ք անոնց պահել ինչ որ ես պատուիրեցի ձեզի ... Ինչ որ ականջն ի վար փսփսալով ըսուի ձեզի, դուք տանիքներու վրայ քարոզեցէ՛ք» (Մատթ 28, 19-20, 10, 27): Աստուծոյ խօսքը պէտք է անցնի աշխարհի ուղիներէն, որոնք այսօր կը ներկայանան նաեւ լրատեստողական միջոցներու եւ համակարգիչներու տեսքով:

Աստուածաշունչը հարկ է որ մուտք գործէ բոլոր ընտանիքներէն ներս, որպէսզի ծնողներն ու զաւակները կարգան զայն, աղօթեն անոր միջոցաւ եւ ան իրենց համար ըլլայ լոյս մը լինելութեան ճամբուն վրայ (Հմմտ. Սաղմ 119, 105): Սուրբ Գիրքերը հարկ է որ մուտք գործեն նաեւ դպրոցներու եւ մշակութային կեդրոններու մէջ, որովհետեւ դարեր շարունակ անոնք եղած են գլխաւոր մեկնակէտը արուեստներու, գրականութեան, երաժշտութեան, խորհրդածութեանց եւ հասարակաց բարոյագիտութեան: Սուրբ Գիրքերուն խորհրդանշական, բանաստեղծական եւ պատմողական հարստութիւնը զիրենք կը վերածէ գեղեցկութեան դրօշի մը յանուն հաւատքի եւ մշակոյթի, աշխարհի մը մէջ, որ յաճախ աղաւաղուած է սգեղութենէն եւ ստոր բարքերէն:

Այդուհանդերձ Աստուծաշունչը մեզի ցոյց կու տայ նաեւ Երկրէն բարձրացող ցաւին շունչը, ընդառաջ կ'երթայ ճնշուածներու կոչերուն եւ թշուառներու ողբերուն: Գագաթին կը կանգնի Խաչը, ուր Քրիստոս՝ առանձին ու լքուած, կ'ապրի ամենադաժան տանջանքի եւ մահուան ողբերգութիւնը: Սակայն Աստուծոյ Որդւոյն այս ներկայութեան շնորհիւ, չարի եւ մահուան խաւարը կը լուսաւորուի յարութեան լոյսով եւ փառքի յոյսով:

Սակայն աշխարհի ճանապարհներուն վրայ, մեզի հետ մէկտեղ կը քալեն միւս Եկեղեցիներուն եւ քրիստոնէական հասարակութիւններուն եղբայրներն ու քոյրերը, որոնք՝ նոյնիսկ բաժանումներու ընդմէջէն, կ'ապրին իրական միութիւն մը, որ թէեւ ամբողջական չէ, սակայն մէկ է Աստուծոյ խօսքին հանդէպ՝ մեծարանքի եւ սիրոյ կապերով:

Աշխարհի ճամբաներու երկայնքին, յաճախ կը հանդիպինք այլադաւան մարդոց եւ կիներու, որոնք կ'ունկնդրեն եւ հաւատարմօրէն կը գործադրեն իրենց սրբազան գիրքերուն պատուէրները: Անոնք կարող են մեզի հետ կառուցանել խաղաղութեան եւ լոյսի աշխարհ մը, որովհետեւ Աստուած «կ'ուզէ, որ բոլոր մարդիկը փրկուին եւ հասնին ճշմարտութեան գիտութեան» (Ա. Տիմ 2, 4):

Սիրելի եղբայրներ եւ քոյրեր, պահեցէ՛ք Աստուծաշունչը ձեր տունե-

րուն մէջ, կարդացէ՛ք եւ սերտեցէ՛ք անոր բոլոր էջերը, վերածեցէ՛ք զանոնք աղօթքի եւ կեանքի վկայութեան, սիրով եւ հաւատքով մտիկ ըրէ՛ք անոր ծիսակատարութեան ընթացքին: Լուսութիւն ստեղծեցէ՛ք որպէսզի կարենաք արդիւնաւոր կերպով լսել Տիրոջ Խօսքը, եւ լուռ մնացէ՛ք զայն ունկնդրելէ ետք, որովհետեւ ան պիտի շարունակէ բնակիլ ու ապրիլ ձեր մէջ, խօսիլ ձեզի: Զայն հնչեցուցէ՛ք ձեր օրուան սկիզբը, որպէսզի Աստուած ըլլայ առաջին խօսողը, եւ թոյլ տուէ՛ք որ ան արձագանգէ ձեր մէջ երեկոյեան, որպէսզի վերջին խօսքը դարձեալ Աստուծոյ պատկանի:

«Հիմա կը յանձնեմ ձեզ Աստուծոյ եւ անոր շնորհքին» (Գործք 20, 32): Եփեսոսի եկեղեցւոյ երէցներուն ուղղուած սուրբ Պօղոսի հրաժեշտի խօսքին այս միեւնոյն արտայայտութեամբ, մենք ալ՝ Սիւնհոդոսական Հայրերս, աշխարհացրիւ հասարակութիւններու հաւատացեալները կը յանձնենք աստուածային Խօսքին, որ միեւնոյն ատեն դատավճիռ է, բայց նաեւ՝ շնորհք, հատու է սուրի նման եւ քաղցր՝ խորիսիսի պէս: Ան հզօր է եւ փառաւորեալ, եւ կ'առաջնորդէ մեզ պատմութեան ուղիներէն, Քրիստոսի ձեռքով, զոր դուք ալ՝ ինչպէս մենք կը սիրենք անեղծութեամբ (Հմմտ. Եփ 6, 24):

ՄՈՎՍԷՍ ԽՈՐԵՆԱՑԻՆ «ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ» ԵՐԿԻՆ 1500 ԱՄԵԱՅ ՅՈՒԵԼԵԱՆԻՆ ԱՌԹԻՒ

ԳԻՒԱՆԱՅԻՆ ՊՐՊՏՈՒՄՆԵՐ ԽՈՐԵՆԱՅԻԱԳԻՏԱԿԱՆ ՄԱՐԶԷՆ ՆԵՐՍ

ՆԵՐԱԾԱԿԱՆ

Մեր ՊատմաՏօր՝ Մովսէս Խորենացիին «Հայոց պատմութիւն» երկին 1500-ամեայ յրբեկեանին առթիւ՝ Հայաստանի Հանրապետութեան Գիտութիւնների Ակադեմիայի, Երեւանի Պետական Համալսարանի եւ Մեսրոպ Մաշտոց անուան Մատենադարանի աշխատակցութեամբ՝ Երեւան, 1 - 4 Հոկտեմբեր 1991-ին կազմակերպուած «Միջազգային Գիտաժողով»ին հրաւիրուեցայ մասնակցելու խորենացիագիտական բանախօսութեամբ, զոր սկսայ այս սրտաբուխ ողջոյնի խօսքով.

«Տիար նախագահ, յարգելի տիկիներ, ու պարոններ, բանախօսութիւնս սկսելէն առաջ, պարտականութիւն կը համարիմ շնորհակալութեան խօսքս ուղղելու Յոբելեանական Յանձնաժողովին, որուն սիրալիր հրաւերին շնորհիւ ոչ միայն այսօր կը մասնակցիմ մեր ՊատմաՏօր գիտաժողովին, այլ նաեւ ու մանաւանդ անոր համար, որ կեանքիս մէջ առաջին անգամ ըլլալով՝ կ'այցելեմ իմ հայրենիքս՝ Հայաստան:

Իբրեւ հայ մարդ՝ կեանքիս ամենամեծ գիւտն եղաւ հայրենի լեզուս: Այո՛, ասկէ երեսուն տարիներ առաջ՝ տասնութէկ տարեկան արաբախօս մանչուկս սկսայ սորվիլ մեր Մեծաաքանչը՝ Հայերէնը...:

Այսօր, իբրեւ հայ մարդ եւ Մխիթարեան վարդապետ՝ կեանքիս մեծագոյն երկրորդ գիւտն եղաւ իմ հայրենիքս՝ Հայաստան, որուն ազատ, անկախ հռչակումին համար՝ երեք տարի առաջ, Լոս Անճելըսի մէջ, 24 Ապրիլ 1989-ին, այսպէս աղօթեցի Սեւանի Տեսլամօր՝ Աստուածածնին.

– Առթէ՛ ու պատճառէ՛ այսօր եւ վաղը՝ միշտ եւ յարատեւ:

Վերադարձը Հողերուս,

Անկախութիւնը Հայրենիքիս,

Հգօրութիւնը Ազգիս,

Ժիտ ծածանումը Դրօշիս:

Մարիամ, Մա՛յր Հայաստանի,
Մայրենի օճախիդ ապաւինած՝ կը տեսնեմ հայաչէն մեր Եռագոյնին
խոյանք-ծփանքը մասիսեան,
Ու Քեզմով կը լսեմ այսօր եւ վաղը հայացայտ մեր քայլերդին ղօղանջ-
ները զատկաճայն՝
Ազա՛տ, անկա՛խ, ինքնակա՛ց, անձնիշխա՛ն, հզօ՛ր: Ամէն» (Մ. Հայունի,
«Աստուածածինը Մայր Հայաստանի», Լոս Անճելոս, 1991, էջ 104 եւ 108):

ԲԱՅԱՏՐԱԿԱՆ

Բանախօսութեանս առաջաբանին սկիզբը՝ կ'ուզէի յայտնել, թէ
«Դիւանային պրպտումներ խորենացիագիտական մարզէն ներս» խորա-
գիրը նոյն վերտառութիւնն է այն ընդարձակ ուսումնասիրութեանս, որ
իբր յօդուածաշարք պիտի սկսիմ հրատարակել «Հանդէս Ամսօրեայ»ի մէջ
եւ յաջորդիւ՝ իբր «Ազգային Մատենադարան»ի մեր Միլիթարեան հայա-
գիտական մատենաշարին հատորը լոյս պիտի տեսնէ...:

Այս մօտալուտ հեռանկարով՝ բանախօսութեանս մէջ չեմ արտագրած
նամակագրային, աղբիւրագիտական ու մատենագիտական տեղիքներուն
եւ մէջբերումներուն համարները, որոնք ամբողջութեամբ ու մանրամաս-
նութեամբ, իրենց յարակից ծանօթագրութիւններով, կը գտնուին վերոնը-
շալ գործիս մէջ:

Բնական է, որ մինչեւ քսան վայրկեանի տեւողութիւն ունեցող զեկու-
ցումին մէջ անկարելի է ինծի ներկայացնել լիակատար աշխատանքիս բո-
վանդակութիւնը: Ուստի, ընդհանուր ներածականը տալէն յետոյ, պար-
տադրուած եմ գոհանալու միայն առաջին տարուան՝ 15 Յուլիս 1892-30
Յուլիս 1893 ժամանակաշրջանին գրուած նամակներուն շատ համառօտ
ներկայացումով:

Դիւանային պրպտումներուս երկու գլխաւոր հերոսներէն են Ֆրան-
սացի Auguste Carrière (1838 - 1902) արեւելագէտ-հայկաբանը եւ Հ. Յա-
կոբոս Վրդ. Տաշեան (1866 - 1933) Միլիթարեան գիտնականը, որոնց
կեանքն ու գործը կը բովանդակեն «Տաշեանական» հատորիս առաջին եր-
կու գլուխները:

ԲԱՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ

Ուսումնասիրութեանս գլխաւոր աղբիւրն է Վիեննայի Միլիթարեան
Միաբանութեան Մայրավանքին դիւանը, որուն տակաւին թաքուն մնա-
ցած հարստութիւնը առատ եւ անվերջանալի նիւթ կրնայ հայթայթել ոչ
միայն հայագիտութեան, պատմաբանասիրութեան, ազգային կենսագ-
րագիտութեան եւ ուրիշ մասնաճիւղերու համար, այլ նաեւ միջազգային,
օրինակի համար, արեւել-արեւմտեան յարաբերութիւններու պատմագ-
րութեան համար: Այո՛, փաստաթուղթերուն բազմութիւնը, վաւերագիր-

ներուն պէսպիսութիւնն ու նամակներուն առատութիւնը կը դարձնեն Մխիթարեան այս մօտ երկդարեան դիւանը հայաշխարհին մեծագոյն ու ամենաճոխ կենդրոններէն մին:

Մեր դիւանին մէջ պահուած գտայ Օ. Կարիէրի՝ խորենացիագիտութեան ամէնէն չքառու հայագէտներէն մէկուն եւ օտարագրի առաջին հայերէնագէտ խորենացիաբանին նամակները՝ գրուած Հ. Տաշեանին, որուն, սակայն, տեսութիւնները կրնանք ընդունիլ կամ մերժել: Արդէն, իմ դիւանային պրպտումներուս նպատակն ո՛չ այս մէկն է, ո՛չ ալ՝ միւսը: Պարզ դիտաւորութիւնս է գիտաշխարհին ծանօթացնել, որչափ մեր Մայրավանքին դիւանային աղբիւրները այդ ընելու կ'ընձեռեն, այն ներքին փուլերը եւ արտաքին պայմանները, որոնց մէջ գրուեցան ու հրատարակուեցան Օ. Կարիէրի խորենացիագիտական ուսումնասիրութիւնները:

Դիւանին տուփերը կը բովանդակեն 80 (ութսուն) նամակներ, որոնք արդիւնք են 1892 - 1900 ժամանակամիջոցին յաճախ ընդհատուած թղթակցութեան Օ. Կարիէրի եւ Հ. Յ. Տաշեանի միջեւ: Առաջինին գրչէն պահուած գտայ 49 նամակներ, որոնց բովանդակութիւնն այնքան մանրագիր է, որ տեղ տեղ գրեթէ անընթեռնելի դարձած է: Օ. Կարիէր շատ սահուն, բայց նաեւ շատ արագ, չընելու համար, երբեմն թափթփած գիր ունի:

Իսկ երկրորդ նամակագիրէն մնացեր են միայն 31 պատասխաններուն նախարտակները: Հ. Տաշեան նախ սեւագրութեամբ կը շարադրէր իր փոքրագիր, բայց ընթեռնելի նամակները, ապա մաքուրի անցնելէն յետոյ՝ կը հասցէագրէր զանոնք իր թղթակիցներուն:

Այսօր, անոնց դեռ անյայտ մնալուն՝ սրբագրութիւն ցուցաբերող նախարտակները կը հանդիսանան անգին գանձ «Տաշեանագիտութեան» համար: Այո՛, շնորհիւ Հ. Տաշեանի այս ժամանակասպառ սովորութեան՝ այսօր մեր տրամադրութեան տակ ունինք անոր օտար եւ հայ գիտնականներուն գրած գրեթէ բոլոր նամակներուն (նախարտակներուն) հաւաքածոն, որ մօտ քառասուն տարիներու (1890 - 1932) հայագիտական պատմագրութեան եւ կենսագրագիտութեան համար անսպառ նիւթեր ու նոր լուսաբանութիւններ կրնայ ընծայել գիտաշխատողին:

Օ. Կարիէր Փրանսերէնով շարադրած է իր բոլոր նամակները, որոնց Հ. Տաշեան պատասխանած է գերմաներէն լեզուով: Առաջին նամակին «յետ գրութեան» մէջ Օ. Կարիէր կը հասկցնէ Հ. Տաշեանին, թէ «je lis très couramment l'allemand»: Հ. Տաշեան պատասխան առաջին նամակին սկիզբը կ'արդարացնէ ինքզինքը՝ պատճառաբանելով այսպէս, «daß ich die Antwort auf Ihr geschätztes Schreiben von 15. Juli auf Deutsch schreiben wagt. Obwohl mir das Französische ziemlich geläufig ist (-ich habe schon einige Übersetzungen aus dem Französischen besorgt-), besitze ich dennoch leider keine so große Fertigkeit, um im Stande zu sein, mit Leichtfertigkeit etwas zu schreiben oder zu sprechen. Meine vielseitigen Beschäftigungen lassen mir vorläufig nur wenig zeit übrig, so daß ich jetzt noch nicht daran denken kann, mich in diedser Hinsicht zu

vervollkommen, obwohl mir das am Herzen liegt»:

Օ. Կարիէրի նամակները ժամանակագրականօրէն դասելէ յետոյ, թուակեցի գանոնք՝ աւելի դիւրութեամբ օգտագործելու համար: Առաջին էջին վերի ձախ անկիւնը կարմիրով նշանակեցի համարը իւրաքանչիւր նամակին, ուր արդէն Հ. Տաշեան սեւ մելանով մատնանշած է թուականը իր պատասխան նամակին:

Օ. Կարիէրի Grenville-էն ղրկած 30 Օգոստոս 1897 թուակիր նամակին առաջին էջին տողատակը գրուած է կարմիր մելանով այս ծանուցումը. «Առ Վ. Հ. Յակոբոս Վ. Տաշեան N. B. բոլոր կարմրանիշները Տաշեանի եկած նամակներ են»: Եւ իրապէս, միեւնոյն ծանուցագիր ձեռքը 49 նամակներուն առաջին էջին վերեւի ձախակողմը դրեր է կարմրագիր «Carrière A.» անունը:

Օ. Կարիէր, ինչպէս կ'իմանանք նամակներէն, Ֆրանսայի մէջ շարունակ պաշտօնին բերումով ճամբորդած կամ արձակուրդով տեղափոխուած է, որով անոր կենսագրութեան ճշդումին համար յարմար դատեցի ամէն փոփոխումին նշանակել տեղանունը, ուրկէ ղրկած է նամակը: Հ. Տաշեանի պարագային՝ բոլոր պատասխանները գրուած են Վիեննայէն:

1892 - 1900 ժամանակաշրջանին 80 նամակները ընդհանուր բաժանումի այս տարեկան պատկերը կը ցուցաբերեն:

Ա. 15 Յուլիս - 22 Դեկտեմբեր 1892, Օ. Կարիէրէն 10 նամակ, իսկ Հ. Տաշեանէն 9 պատասխան ունինք մեր դիւանին մէջ:

Բ. 19 Փետրուար - 14 Հոկտեմբեր 1893, Օ. Կարիէրէն 18 նամակ, Հ. Տաշեանէն 11 պատասխան:

Գ. 1 Յունուար - 9 Մայիս 1894, Օ. Կարիէրէն 8 նամակ, Հ. Տաշեանէն 6 պատասխան:

Դ. 9 Յունուար - 24 Հոկտեմբեր 1895, Օ. Կարիէրէն 3 նամակ, Հ. Տաշեանէն 1 պատասխան:

Ե. 13 Դեկտեմբեր - 28 Դեկտեմբեր 1896, Օ. Կարիէրէն 3 նամակ, Հ. Տաշեանէն չկայ նամակ:

Զ. 18 Յունուար - 14 Սեպտեմբեր 1897, Օ. Կարիէրէն 4 նամակ, Հ. Տաշեանէն 1 պատասխան:

Է. 9 Յունիս - 25 Յունիս 1900, Օ. Կարիէրէն 2 նամակ, Հ. Տաշեանէն 2 պատասխան:

Եօթ տարիներուն ցուցատախտակը յստակ է ինքնին, թէեւ կը պահանջէ հետեւեալ լուսաբանութիւնները: Առաջին երեք տարիներուն համար ըսելու եմ, որ Հ. Տաշեան Օ. Կարիէրէն քանի մը նամակներուն միաժամանակ պատասխանած է: Անկէ կու գայ Միսիթարեան վարդապետին պատասխան նամակներուն նուազ թիւը: Չորրորդ տարուան Օ. Կարիէրի միայն առաջին երկու նամակներուն մէկ գրութեամբ պատասխանած է Հ. Տաշեան, որով ուսուցչապետին երրորդը կամ անպատասխան ձգեք է կամ դրական պարագային՝ չէ պահուած նախարտակը:

Սակայն, երկու իրողութիւնները կը պարզեն մեզի, թէ Օ. Կարիէր Հ.

Տաշեանէն չէ ստացած իր երրորդ նամակին պատասխանը: Առաջինն այն է, որ այսօրուան վիճակը (մօտ 100 տարի վերջ) ինչամբով պահուած նախարտակներուն կը փաստէ, թէ Հ. Տաշեան չէ գրած նման նամակ մը: Երկրորդ՝ յաջորդ երկու տարիներուն (1896 եւ 1897) Օ. Կարիէրի 7 նամակները անպատասխան մնացեր են: Ինչպէս կենսագրութենէն եւ Հ. Տաշեանի Օ. Կարիէրին 24 Դեկտեմբեր 1898ին ուղղած նամակէն կ'իմանանք, թէ վարդապետը մօտ երկու տարի բացակայելով Վիեննայէն՝ չէր կրցած պատասխանել ուսուցչապետին 8 նամակներուն: Իսկ եօթներորդ եւ վերջին տարուան Օ. Կարիէրի երկու նամակներուն Հ. Տաշեանի երկու պատասխանները կը գտնենք «Նամականի» Ա. պրակին մէջ:

Օ. Կարիէր - Հ. Տաշեան թղթակցութեան արդիւնքն այն եղաւ, որ Փրանսացի ուսուցչապետը ոչ միայն հայագիտութեան ասպարէզին մէջ խորասուզուեցաւ եւ հմտացաւ, այլ նաեւ արտադրեց ուսումնասիրութիւններ, որոնք խորենացիագիտութեան համար բարեշրջող, այո՛, յեղափոխական նորութիւններ էին, որոնց համաձայնելու ալ բռնադատուած չէր ու չէ ոեւէ գիտաշխատող մը՝ ըլլայ ան հայ թէ օտարազգի:

Հոս, գուցէ հակասական հնչէ ականջներուն, երբ բացայայտեմ, որ Հ. Տաշեան՝ Օ. Կարիէրի գլխաւոր մեկենասը, մինչեւ վերջ վերապահութեամբ սքողած էր իր աւարտական խօսքն ու վերջնական տեսակէտը, հակառակ որ տարիներով քաջալերած եւ գնահատած էր Փրանսացի ուսուցչապետը՝ իր գործը շարունակելու: Բնական է, տաշեանական հանճարը ունէր իր արդար եւ ուղիղ պատճառները մէկ կողմէ խթանելու Օ. Կարիէրը, միւս կողմէ, սակայն, լռելու խորենացիագիտութեան գրչապայքարին ժամանակ: Ի՛նք, որ շատ գրելիք ունէ՛ր... , սակայն այս հարցին մասին ուրիշ առթիւ, մասնակի յօդուածով պիտի անդրադառնամ:

Յամենայնդէպս, աներկբայ իրողութիւն եւ պատմաբանասիրական ճշմարտութիւն է, որ Օ. Կարիէր իր նորասաց երկերով մեծագոյն զարկը եւ անթուլ թափը տուաւ խորենացիագիտութեան անդաստանին: Այս պատմական իրականութեան անուրանալի կարեւոր բաժինը բերաւ Հ. Տաշեան՝ օգտակար, անթիւ ծառայութիւններ մատուցանելով Օ. Կարիէրին:

Միթիթարեան վարդապետը Փրանսացի հայագէտին յօդուածները՝ բնագիրն ու իր կատարած հայերէն թարգմանութիւնները տպեց «Հանդէս Ամսօրեայ»ի մէջ: Անոր բոլոր ուսումնասիրութիւնները հայացնելով եւ հաւաքելով՝ հրատարակեց երեք հատորներու մէջ, որոնք կազմեցին Ազգային Մատենադարանին 8, 14 եւ 35 համարները:

Նոյնպէս այս հայագիտական նամակագրութեան հետեւանքով՝ Հ. Գ. Մէնէվիչեան թարգմանեց եւ իբր Ազգային Մատենադարանի թիւ 22 հատորը հրատարակեց Օ. Կարիէրի «Աբգարու զրոյցը Մովսէս Խորենացոյ պատմութեան մէջ»: Իսկ Հ. Գ. Գալէմքեարեան, Վիեննական տպարանին պատասխանատու վարդապետը, Հ. Տաշեանի գործակցութեամբ, հրատարակեց Օ. Կարիէրի յօդուածներուն Փրանսերէն բնագիրները՝ A. carrière,

Nouvelles sources Moïse de Khoren, Études critiques, Vienne, 1893 եւ
Nouvelles sources de Moïse de Khoren; Supplément, Vienne, 1894:

Սակայն, այս ամբողջին առաջ եւ վեր, Հ. Տաշեան իր բովանդակալից նամակագրութեան մէջ Օ. Կարիէրին հայթայթեց բազմատեսակ աղբիւրներ, տուաւ լուսաբանութիւններ, կատարեց թելադրանքներ, սրբագրեց սխալներ, մաքրեց վրիպակներ, ամբողջացուց պակասներ, ղրկեց տեղեկութիւններ, ըրաւ ցուցմունքներ, որոնց օգտագործումով Փրանսացի հայագէտը կրցաւ իր նիւթերը պեղել, պրպտել եւ ուսումնասիրել: Շատ բնական է եւ յիշելու ալ հարկ չկայ, որ Օ. Կարիէր ի՛ր անհատական անհրաժեշտ աշխատանքը կատարած է լիուրի մասնագիտութեամբ եւ վաստակով:

Մէկ կողմէ, Հր. Աճառեան, որ կ'անուանէ Հ. Տաշեանը «... հայագիտական հմտութեամբ առլցուն... դէմքերէն» մին, կը դասէ զինքն իբր պարագլուխը խորենացիապաշտ «բանակին», իսկ Լ. Շահինեան Հ. Տաշեանը կը ներբողէ «մեծավաստակ եւ հմուտ հայագէտը», որուն ուսումնասիրութիւնները «խորենացիագիտութեան հարցերում (եւ ընդհանրապէս) իրենց խոր գիտակցութեամբ եւ բանավիճային բնոյթով աչքի են ընկնում»:

Միւս կողմէ, Հր. Աճառեան Օ. Կարիէրն անարդարօրէն կ'որակէ «Փրանսացի անուանեալ հայագէտ», իսկ Լ. Շահինեան անոր կը պիտակէ «խորենացիամերժ ուղղութիւն»:

Այո՛, Օ. Կարիէր եւ Հ. Տաշեան, որքան ալ խորենացիագիտութեան երկու հակաբեւեռներ նկատուին եւ հակընդէմ ճակատներուն պատմաբան հայագէտներ կարծուին, իրականութեան մէջ, սակայն, անոնք էին երկու մեծ անձնաւորութիւնները, որոնք գիտական աշխատութեան շնորհիւ դարձած էին բարեկամներ՝ զիրար գնահատող եւ յարգող:

Ստուգիւ, երկուքն ալ բարձր մակարդակի տէր ակադեմիականներ էին: Առաջինը սորված էր բողոքական աստուածաբանութիւն եւ աստուածաշնչական մեկնաբանութիւն: Երկրորդը՝ կաթողիկէ աստուածաբանութիւն եւ սուրբգրային մեկնողագիտութիւն:

Սակայն, Օ. Կարիէր եւ Հ. Տաշեան, երկուքն ալ նոյն հիմնական գիտականութեան նախ՝ զաւակներ ու յետոյ՝ ջահակիրներ էին եւ այն՝ գերմանական: Օ. Կարիէր յաճախեց Կէօթինկընի համալսարանը, իսկ Հ. Տաշեան ուսաւ եւ հեղինակեց Վիեննայի մէջ:

Օ. Կարիէրի եւ Հ. Տաշեանի յարաբերութիւնն ու բարեկամութիւնը տեւեցին մօտ տասը տարի, մինչեւ առաջինին մահը, որ դիպեցաւ անակընկալօրէն 25 Յունուար 1902-ին, Փարիզի մէջ: Օ. Կարիէրի «Նորագոյն աղբերք Մովսէսի Խորենացույ» յօդուածաշարքին առաջին մասը կը կրէ «Փարիս, 11 Յուլիս 1892» թուականը, իսկ անոր Հ. Տաշեանին գրած առաջին նամակին թուականն է «15 Յուլիս 1892»:

Սակայն, այս թուականներէն եւ թղթակցութիւններէն առաջ արդէն անոնք իրարու ծանօթ էին իրենց ուսումնասիրութիւններուն շնորհիւ:

«Հանդէս Ամսօրեայ» 1887-ի ծննդեան իր օրէն ճանչցուած ուսումնաթերթ էր, նաեւ Փարիզ, ուր Օ. Կարիէր կը պաշտօնավարէր իբր ուսուցչապետ Արեւելեան Կենդանի Լեզուներու Դպրոցին մէջ՝ դասաւանդելով նաեւ հայերէն, հայոց պատմութիւն եւ աշխարհագրութիւն:

Շատ բնական էր, որ Օ. Կարիէր իր այս հանգամանքով «Հանդէս Ամսօրեայ»-ի խմբագրութեան ղրկէր իր տպած հեղինակութիւնները: «Հանդէս Ամսօրեայ»-ի խմբագրապետն էր Հ. Տաշեան (1890 - 1895), որ Օ. Կարիէրէն ստացած երկու գրքերուն մատենախօսականը կատարեց «Հանդէս Ամսօրեայ»-ի մէջ (1891, էջ 345 - 346): Պաշտածօրէն ներկայացնելով երկուքին բովանդակութիւնը՝ Հ. Տաշեան, կարծէք, շատ խանդավառուած չէր երեւար առաջինէն, քանի «Մովսէս Խորենացի եւ Նահապետաց ազգաբանութիւնք»-ն երկին առաջին մասին մէջ բոլոր «ծանրակշիռ խնդիրները համառօտիւ միայն շօշափուած են, ինչպէս կը խոստովանի նոյնիսկ հեղինակը»: Իսկ երկրորդ գրքին՝ «Անվաւերական թղթակցութիւն սրբոյն Պաւղոսի եւ կորնթացոց»-ին աշխատանքը Օ. Կարիէր «մեծ յաջողութեամբ» կատարած է:

Անտարակոյս, Օ. Կարիէր կարգացեր էր Հ. Տաշեանի դրական գրախօսականը եւ քաջալերուած՝ ղրկեց խորենացիագիտական առաջին յօդուածը «Հանդէս Ամսօրեայ»-ին, որ ասկէ վերջ նախապատուութիւնը պիտի ունենայ Օ. Կարիէրի ուսումնասիրութիւններուն համար, ինչպէս ան վերջը պիտի խոստովանի. «C'est le Hantes qui doit avoir la primeur de mon travail»:

Ի դէպ, Հ. Տաշեան, որ երկու տարի վերջ, 1893ին, կատարեց մատենախօսականը Օ. Կարիէրի հայերէն Քերականութեան դասագրքին, կը գովէ Օ. Կարիէրը իր «geistreiche Feder» եւ «geistreiche und ungemein interessante Artikel» յօդուածներուն համար, թէ եւ միշտ իր բոլոր պատասխան նամակներուն մէջ վերապահ, այո՛, լուռ մնացեր է ուսուցչապետին նորարար եզրակացութիւններուն նկատմամբ:

Հ. Տաշեան պատմաբանասէրին եւ գրաքննադատին համոզումը բոլորովին յստակ եւ ուղիղ է. «... Իմ եւ ամէնուն սկզբունքն այն է, որ ազատ է ամէն ոք գիտութեան մէջ իւր կարծիքն յայտնել» եւ «յերեւան հանել ազգին ճշմարիտ պատմութիւնը, ինչպէս ամէն զարգացեալ եւ հասուն ազգերն ըրած են»:

Այս տեսանկիւնէն, հոսկ, Հ. Տաշեան երախտապարտ զգացումներով պարուրուած էր նկատմամբ Փրանսացի հայագէտին՝ անոր կատարած աշխատանքին համար: Եւ այս կեցուածքը կը պահանջէ բոլորէն. «... Մանաւանդ, թէ պէտք էր երախտագէտ ըլլան անոնց նկատմամբ, որոնք անկեղծօրէն կ'աշխատին կատարել հայ ազգին պատմութեան քննութիւնը»:

Արդ, յառաջաբան խօսքին սկիզբը արտաբերած առաջադրանքին համաձայն՝ ընդհանուր ակնարկով ներկայացնեմ Օ. Կարիէրի եւ Հ. Տաշեանի թղթակցութեան առաջին մասին, այսինքն 15 Յուլիս 1892 - 30 Յուլիս 1893 ժամանակամիջոցին ձեռք բերուած խորենացիագիտական հոլանձքը:

Այս շրջանին ուսումնասիրութիւններով՝ Օ. Կարիէր դարձաւ, A. Meilletի բառերը փոխ առնելով, «այն առաջին հայերէնագէտ գիտնականը, որուն պատմաքննադատական գիւտերը պատճառ եղան նորանոր երկասիրութիւններու»: Եւ ասով, կ'եզրափակէ F. Macler, «Կարիէրի գործերէն պիտի մնայ բան մը՝ այն յեղափոխութիւնը, զոր յառաջ բերաւ Մովսէս Խորենացիին պատմական արժանահաւատութեան գրչապայքարին մէջ»:

Վերոյիշեալ ժամանակաշրջանէն կը քննեմ 37 նամակներուն (Օ. Կարիէր՝ 24, Հ. Տաշեան՝ 13) բովանդակութիւնը, որ ամբողջովին կը ցուցաբերէ, մէկ կողմէ, Օ. Կարիէր աշխատելակերպը եւ Հ. Տաշեանի աջակցող համագործակցութիւնը: Միւս կողմէ, նամակներուն քննութիւնը մեզի կը մատնանշէ Օ. Կարիէրի խորենացիագիտական մտահոգութիւնները նկատմամբ մեր Պատմահօր երկին վաւերականութեան, գրութեան ժամանակին եւ աղբիւրներու օգտագործումին:

Հոս զարմանալի թող չհնչէ մէկուն, երբ բացայայտեմ այս վաւերագրական իրողութիւնը, թէ Օ. Կարիէրի յիշեալ ժամանակամիջոցին ընթացքին հեղինակած եւ հրատարակած 5 ուսումնասիրութիւնները նախապէս իրենց գլխաւոր կէտերով նիւթ եւ բովանդակութիւն կազմեր էին անոր 24 նամակներուն, որոնց պատասխանած էր Հ. Տաշեան 13 նամակներով:

Ստուգիւ, Օ. Կարիէրի նամակները, սովորական իմաստով թղթակցութիւն ըլլալէն աւելի, են խորենացիագիտական նախարտակներ ու կը կազմեն անոր սեւագիր օրինակները, որոնց նկատմամբ Հ. Տաշեան տուած է իր թելադրանքներն ու սրբագրութիւնները:

Օ. Կարիէր - Հ. Տաշեան նամակագրութեան հարեւանցի ծանօթացողն իսկ պիտի անդրադառնայ այս նորայայտ ու ճշմարտապատում իրողութեան, թէ Օ. Կարիէրին գուցէ անկարելի պիտի ըլլար ուսումնասիրել ու շարադրել իր նիւթերը, առանց Հ. Տաշեանի ընձեռած հեղինակաւոր եւ հմտալից օգնութեան՝ մատենագիտական, աղբիւրագիտական, բառաքննական, սրբախօսական, վարքասրբագրային, պատմաբանասիրական, լեզուաբանական եւ թարգմանական մարգերէն ներս: Այս եզրայանգումս կրնայ ապացուցանել նախ՝ փոխադարձ նամակներուն խմբագրային համադրումով, ինչպէս նաեւ, երկրորդ՝ Օ. Կարիէրի նամակներուն եւ հրատարակութիւններուն քննաբնագրային բաղդատութեամբ:

Օ. Կարիէրի «Մովսէս Խորենացւոյ մէկ նոր աղբիւրը, Վարք Սեղբեստրոսի» անդրանիկ յօդուածը կը կրէ Փարիզ, 11 Յուլիս 1892 թուականը:

Մովսէս Խորենացիին պատմութեան մէկ հատուածին եւ Վարք Սեղբեստրոսի յունարէն մէկ հատակոտորին միջեւ Օ. Կարիէր իր կատարած համեմատութեանէն կը յանգի այս եզրակացութեան. «Վարք Սեղբեստրոսի գրութեան լատինական խմբագրութիւնը Ե. դարուն վերջին տարիներէն յառաջ չի կրնար ըլլալ. ուստի եւ յոյն թարգմանութիւնն ամէնէն կանուխ 2. դարուն առաջին տարիներն եղած պիտի ըլլայ»:

Հ. Տաշեան, որ թէեւ ստացած յօդուածին «կատարողական յօրինուած»

քը... բոլորովին դիպուկ» որակեց՝ հեղինակին ճայնակցելով նկատմամբ գրութեան «հանելիք մեծ հետաքրքրութեան», խորքին մէջ, սակայն, շատ համաձայն եղած չէր հայագէտին վերոյիշեալ տեսութեան, ինչպէս կ'իմանանք պատասխան նամակէն: Հ. Տաշեան զգուշացուց Օ. Կարիէրը գիտարարութեան մէջ: Իրեն համար անհրաժեշտ էր որոշել եւ ճշդել Վարք Սեղբեստրոսի (Acta Silvestri) երկին ծագման պատմութեան կամ աւելի ճիշդ՝ անոր լատիներէն խմբագրութեան եւ յունարէն թարգմանութեան ստոյգ թուականները:

Օ. Կարիէրի երկրորդ ուսումնասիրութեան՝ 20 Նոյեմբեր 1892ին տեղի ունեցած առաքումէն առաջ, մօտ չորս ամիսներու նամակագրութիւնը դարձաւ կարծիքներու փոխանակութիւն: Աւելի ուղիղ պիտի ըլլայի, եթէ իմացնէի, թէ հարցումներու տեղատարափ մը իջաւ Հ. Տաշեանի վրայ, որուն Ֆրանսացի հայագէտը կը խոստովանի. «Դուք մեզմէ աւելի ծանօթութիւն ունիք հայերէն բնագիրներուն եւ բառերու պատմութեան: Մենք երբեք չեն կրնար ակնկալել ձեռք ձգելու այդ ծանօթութիւնը»:

Բնագիրներու համեմատական, բառաքննական, հայրախօսական ու մատենագիտական եւ այլ խնդիրներու մասին Օ. Կարիէրի հարցումներուն Հ. Տաշեան պատասխանած է բծախնդրութեամբ: Մէկ կարեւոր օրինակ մը պատմելով կը գոհանամ:

Օ. Կարիէրը չարչարող հարցերէն մին էր ընդմիջարկութեան - interpolation - առեղծուածք: Հ. Տաշեանի լուսաբանութիւնն է հետեւեալը: Առաջին՝ թէ արդէն Ե. դարուն թարգմանիչներէն ոմանք ընդմիջարկութիւններ կատարած են, այդ ստոյգ է ապահովապէս: Երկրորդ՝ Սոկրատի պատմութեան առաջին թարգմանութեան մէջ կային Կոստանդիանոսի ծննդեան եւ յետագայ դէպքերուն ընդմիջարկուած տեղիքները: Երրորդ՝ թէ նոյն տեղիքները հաւանօրէն ընդլայնած է Փիլոն Տիրակացի, զոր Հ. Տաշեան կը նկատէ այս յիշեալ թարգմանութեան մշակողը:

Այս հարցերը եւ ասոնց նման ուրիշ հարցական կէտեր կը վերաբերէին Օ. Կարիէրի «Նորագոյն աղբերք Մովսիսի Խորենացոյ, Վարք Սեղբեստրոսի եւ Պատմութիւն Սոկրատայ» երկրորդ յօդուածին խմբագրումին, որ բաւականէն աւելի տաղտուկ պատճառեց հետազօտող հայագէտին, ինչպէս կ'իմացնէ իր 28 Հոկտեմբեր 1892 թուակիր նամակին մէջ:

Օ. Կարիէր կը համեմատէ «Վարք Սեղբեստրոսի» հայերէն թարգմանութեան Կոստանդիանոսի կտորը, որ կը գտնուի Ս. Ղազարի ձեռագրատունը պահուող ԺԲ. դարէն Սոկրատի ձեռագրին մէջ, Մովսէս Խորենացիին «Հայոց պատմութեան» Բ. գրքին թիւ 83 գլխուն նմանապատում հատուածին հետ, եւ կը հետեւցնէ, թէ Պատմահայրը օգտագործեր է Սոկրատի թարգմանութիւնը, որ կատարուած է 690 - 692 տարիներուն: Քսանուկեց տարեկան Հ. Տաշեան, որ Օ. Կարիէրէն 28 տարի աւելի փոքր էր, շատ զգուշաւոր եւ խոհեմ կերպով կը պատասխանէ հայագէտին՝ շեշտելով իր վերապահութիւնը՝ երկու յիշեալ հատուածներուն համեմատութեան անմիջապէս եզրակացնելու մէկուն կամ միւսին աղբիւրաբանագրային

առաջաւորութիւնը: Մանաւանդ որ, կ'առարկէ երիտասարդ վարդապետը, Սոկրատի ձեռագիրները սխալաշատ կ'երեւային: Այս պատճառով՝ կը պահանջէ Օ. Կարիէրէն, որ ուրիշ ձեռագիրներու բաղդատութեան աշխատանքները շարունակէ: Անոր համար անհրաժեշտ էր Սոկրատի պատմութեան գիտաքննական հրատարակութիւնը, որմէ առաջ, ինչպէս 7 Նոյեմբեր 1892 թուակիր նամակով կը յայտարարէ Օ. Կարիէր, խրատուած է. Տաշեանէն, անկարելի է որեւէ վերջնական եզրայանգում:

Հ. Տաշեան իր 3 Դեկտեմբեր 1892 թուակիր նամակին մէջ կրկին անգամ զգուշացուցած է Օ. Կարիէրը՝ անկէ պահանջելով աղբիւրագրային ապահովութիւնը՝ հանած կամ հանելիք եզրակացութիւններուն վաւերական մնայութեան եւ ճշմարտութեան համար: Այս պահանջը շեշտեց նաեւ երրորդ յօդուածին պատրաստութեան ընթացքին, որուն շարադրումը Հ. Տաշեան քաջալերեց նոյն նամակին մէջ: Անոր վերտառութիւնն է «Նորագոյն աղբիւր Մովսիսի Խորենացոյ, Վարք Ս. Բասիլիոսի», որ «27 Փետրուար 1893» տարեթիւով թուարկուած է:

Այս ուսումնասիրութիւնը շատ ժամանակ ու մեծ գլխացաւ պատճառուած է Օ. Կարիէրին, որ արդէն իր չորրորդ նամակէն (7 Հոկտեմբեր 1892) սկսեալ մինչեւ աշխատանքին աւարտումը, եւ նոյնիսկ անկէ ալ անդին, միշտ հարցումներ ուղղած է Հ. Տաշեանին, քանի կային լուսաբանուելիք կէտեր: Հոս հաւաստելու եմ, որ Օ. Կարիէր, հետազօտիչ եւ խորաթափանց գիտուն, կնճռոտ հարցերուն դիմաց չէր գիտեր ընկրկիլ եւ յուսահատիլ: Թէեւ պէտք ունէր Հ. Տաշեանին, որ 11 Հոկտեմբեր 1892ի նամակով մատնանշած է գոյութիւնը «Վկայաբանութիւն Սրբոյն Վասիլիոսի Ամասիոյ եպիսկոպոսի» թարգմանութեան հայերէն «Յայսմաուրք»ին մէջ: Նոյն նամակին մէջ հանճարեղ վարդապետը, որ լեզուաքննական դատողութեամբ կու տայ իր տեսութիւնը յիշեալ գրութեան հայերէնի հնագոյն, ցայտմ անգոյ, թարգմանութեան նկատմամբ, Օ. Կարիէրի ծայրայեղ ենթադրութիւններուն եւ տակաւին ոչ փաստուած եզրակացութիւններուն դիմաց գիտցած է վերապահ եւ գրեթէ լուռ մնալ, երբ հայագէտը իր թիւ 11, 13 Յունուար 1893 թուակիր նամակը կէս ինքնավստահութեամբ կը փակէ. «Ես կը կարծեմ հիմա, որ Վասիլիոսի վկայաբանութեան ներմուծուած կտորները առեր է Մովսէս Խորենացի իբր յաւելեալ մասեր Սոկրատի թարգմանութեան»:

Իսկ թիւ 13, 29 Մարտ 1983ի նամակով՝ Օ. Կարիէր կը հաղորդէ Հ. Տաշեանին, թէ վերջապէս հասած է իր դժուարին, երկարաձիգ հետազօտութիւններուն աւարտական հանգրուանին, որուն համար չափազանց գոհ է: Մովսէս Խորենացիին «Հայոց Պատմութեան» խմբագրումին հարցը լուծուած է իրեն համար, նոյնիսկ Սոկրատի պատմութեան հրատարակութեանէն առաջ: Ըստ իրեն, Պատմահայրը Ը. դարէն առաջ չի կրնար գրած ըլլալ իր երկը: Օ. Կարիէր ինքզինքն այնքան ապահով եւ զօրաւոր կը զգար իր նորագիտ վարկածին մէջ, որ ալ պէտք չունէր, ինչպէս կը շեշտէ Հ. Տաշեանին, նոր փաստերու եւ աղբիւրներու:

Հ. Տաշեան թէեւ Օ. Կարիէրի Խորենացիին «Հայոց Պատմութեան» շարադրումին նկատմամբ հետեցուցած ժամանակի մասին ուղղակիորէն չ'արտայայտուիր իր 17 Ապրիլ 1893ի նամակին մէջ, սակայն, կարծէք, անոր այս պատասխանը որոշ հաստատական մօտեցում մը կ'ուզէ ցուցաբերել. «Երրորդ յօդուածը մեծ հետաքրքրութեամբ կարդացի եւ շատ լաւ գտայ: Իմ կարծիքովս, յօդուածը չափազանց յաջող է եւ նպատակադրեալ ազդեցութիւնը պիտի ունենայ: Կը կարծեմ նաեւ, որ Սոկրատի Պատմութեան հրատարակութիւնը յօդուածին մէջ Ձեր յանգած եզրակացութիւնները միայն պիտի հաստատուէ»:

Օ. Կարիէրի այս վերտառութեամբ «Նորագոյն աղբերք Մովսիսի Խորենացուոյ, Վարք Սեղբեստրոսի, Պատմութիւն Սոկրատայ, Եւսեբիոսի ժամանակագրութիւնն ու եկեղեցական պատմութիւնն» իբր չորրորդ եւ (տարբեր) 14 Մարտ 1893 թուականի տակ հրատարակուած յօդուածի մասին հետեւեալ նամակագրային ու դիւանային նորութեան հանդիպեցայ:

Իբր չորրորդ տպուածը, իրականին, Օ. Կարիէրի սկզբնական մտադրութեան համաձայն, ինչպէս կ'իմանանք անոր 31 Մարտ 1893 թուակիր բացիկէն, երրորդ ուսումնասիրութեան երկրորդ մասը կը կազմէր, բայց իբր ամբողջութիւն: Ասոր փաստը կու տայ նաեւ մեր դիւանին մէջ պահուած Օ. Կարիէրի ձեռագիրը, որ մէկ ամբողջական պրակ է: «Հանդէս Ամսօրեայ»ի խմբագրապետը՝ Հ. Տաշեան, սակայն, որ 4 Մայիս 1893ի պատասխանով Օ. Կարիէրին՝ կ'իմացնէ իր երրորդ յօդուածին երկարութեան հարցը, բաժնելով երկուքի՝ հրատարակել է իբր երրորդ եւ չորրորդ ուսումնասիրութիւններ:

Այսօրուան բանախօսութեանս համար նկատի առնուած 15 Յուլիս 1892 - 30 Յուլիս 1893 ժամանակամիջոցին Օ. Կարիէր, հինգերորդ եւ վերջին ուսումնասիրութիւնն եղաւ «Մովսէս Խորենացի եւ Պարթեւաց ծագումը, որ, սակայն, «15 Փետրուար 1893» թուականը կը կրէ: Ուրեմն, երրորդէն եւ չորրորդէն առաջ հրատարակուած էր: Անոր պատրաստութեան մասին, սակայն, Օ. Կարիէր արդէն իր երրորդ, 17 Սեպտեմբեր 1892 թուակիր նամակին մէջ պատմած էր Հ. Տաշեանին, անոր յայտնելով իր նոր յղացած գաղափարը՝ երբեմն-երբեմն կարճ բացատրութիւններ՝ «բացարձակապէս նոր բաներ» գրելու հայ մատենագիրներու վրայ:

Հ. Տաշեանի հաւանութիւնն առնելու դիտաւորութեամբ եւ իր ծրագրին գործնական օրինակ տալու լրջութեամբ՝ յիշեալ երրորդ նամակին մէջ այս ուսումնասիրութեան նախափորձը ներկայացուցած էր «Հանդէս Ամսօրեայ»ի խմբագրապետին, որ առաջարկին համաձայն գտնուելով՝ իր 3 Հոկտեմբեր 1892ի պատասխանին մէջ Օ. Կարիէրէն խնդրած էր շուտափոյթ առաքումը «Մովսէս Խորենացի եւ Պարթեւաց ծագումը» երկասիրութեան:

Սակայն, երկու նամակագիրներուն փափաքն անմիջապէս չէր իրականացած երկար ժամանակ՝ մինչեւ Փետրուար 1893: Այս թուականին քանի տակաւին կ'ուշանար Օ. Կարիէրի երրորդ յօդուածին աւարտագրումը,

հայագէտը մէկէն որոշեր է զրկել այս փոքր ուսումնասիրութիւնը: Ան թիւ 12, 19 Փետրուար 1893 թուակիր նամակին վերջաւորութեան կը բացատրէ Հ. Տաշեանին. «Փոքրիկ կտոր մըն է մեկնաբանողական, որ ցոյց պիտի տայ, թէ ես կ'ուսումնասիրեմ բնագիրները ըստ բաւականին: Իմ կարծիքովս, կարելի է գայն միացնել Աղբիւրներու յօդուածներուս, որովհետեւ ասոր մէջ կը խօսիմ Մովսէս Խորենացիին, ինչպէս այն կերպի մասին, որով ան Աստուածաշունչը կ'օգտագործէ շարադրելու համար իր պատմութիւնը»: Հ. Տաշեան, որ շնորհակալութեամբ ստացեր էր «հետաքրքրական յօդուածը», ինչպէս կը բացայայտէ իր 10 Մարտ 1893ի պատասխանին մէջ: Յունիսի վերջաւորութեան՝ Օ. Կարիէրին, իբր հեղինակի իրաւունք, զրկեց քսան օրինակ՝ այսօր ներկայացուած հինգ զլուխներէն բաղկացած հատորին, որ կազմեց Մխիթարեան Միաբանութեան 1890-ին ստեղծած «Ազգային Մատենադարան» հայագիտական մատենաշարին թիւ ութը: Նաեւ Մխիթարեան գրավաճառանոցին պատասխանատու վարդապետը ձրի օրինակներ զրկեց ժամանակի ծանօթ հայ թէ օտար հայագէտներուն, ինչպէս ալ քանի մը գրադարաններու եւ ուսումնաթերթերու, որոնց անուանացանկը Հ. Տաշեան գրած է 3 Յուլիս 1893ի նամակին մէջ:

Տպագրութեան եւ առաքումի կատարուած աշխատանքներուն համար իր խոր շնորհակալութիւնը յայտնելէն յետոյ՝ Օ. Կարիէր գոհունակ սրտով կ'իմացնէ Հ. Տաշեանին 2 Յուլիս 1893ին, թէ «Փոքրիկ գիրքը հոս գիտաշխարհին մէջ լաւ ընդունելութիւն գտաւ»: Հայագէտը կը սպասէր նաեւ «զանազան յարձակումներու, որոնց պիտի ենթարկուին անոր եզրակացութիւնները», կը խոստովանի վարդապետին 6 Յուլիս 1893ին:

Սակայն, Օ. Կարիէր, ինչպէս թիւ 24, 30 Յուլիս 1893 թուակիր եւ այս բանախօսութեան ծիրին համար նկատի առնուած վերջին նամակին մէջ կը շեշտէ Հ. Տաշեանին, խոր համոզումն ունէր ոչ միայն իր փաստերուն զօրութեան, այլ նաեւ իր կատարած հայագիտական հետազօտութիւններուն շահակատութեան: Միայն այս գիտակցութեամբ գրեց իր յօդուածները եւ ի վերջոյ հասաւ «այնպիսի եզրակացութեանց, կը բացատրէ ան իր նորատիպ գրքոյկին յառաջաբանին մէջ, որոնց կարեւորութիւնը, յօթարութեամբ կ'ըռէի՝ ծանրութիւնը, ոե՛ւէ հայագէտի աչքէն պիտի չվրիպի»:

Հուսկ, անդրադառնալով Հ. Տաշեանին՝ Օ. Կարիէրի մեկենասին, անշուշտ թէ ան աչքին առջեւ ունէր միայն հայագիտութեան բարգաւաճումը եւ ասով հետապնդեց, ինչու չէ, նաեւ խորենացիագիտութեան իրենց ժամանակ տակաւին մնացած գրեթէ խոպան դաշտին մշակումը: Անոր Հ. Յ. Թորոսեանին գրած տեսակէտը յստակ եւ ճիշդ է. «... Իմ եւ ամէնուն սկզբունքն այն է, որ ազատ է ամէն ոք գիտութեան մէջ իւր կարծիքն յայտնել նաեւ ամենասիրելի բարեկամին դէմ, ինչպէս եւ օրինակներ քիչ չկան ծանօթ եւրոպական գիտնոց մէջ»:

Սակայն, Հ. Տաշեան բացարձակապէս կը մերժէ խնդիրը տանիլ անձնականի եւ անհատական վիրաւորանքի, այլ լոկ «կրկին ու կրկին քննել,

կշռել... մերժել կամ բարեփոխել. բայց միայն գիտնական անաչառութեամբ, առանց յուզման ոգևոյց եւ ցած կրից, ճշմարտութիւնը փնտռելով, ուր որ ալ գտնուի, յօգուտ թէ՛ ի ջրումն մեր սովորական եւ մեր ինքնահաւանութիւնը փայփայող աւանդութեան»:

ՎԵՐՋԱԲԱՆ

Հոսկ, բանախօսութեանս աւարտին՝ թոյլ տուի տրուպիս փակելու խորհրդածութեամբ եւ յիշեցումով, որոնք արդիւնք են կատարած դիւանային եւ աղբիւրագիտական պրպտումներուս:

Նախ՝ Զեգի առարկայական խորհրդածութիւնս կ'արտաբերեմ համեստօրէն:

Այսօր, երբ կը տօնակատարենք մեր Պատմահօր երկին 1500-ամեայ յոբելեանը, գիտակցելու ենք այս իրողութեան, թէ խորենացիագիտութիւնը ինչ եւ ո՛ր որ է ներկայիս, այդ մենք կը պարտինք հիմնականին մէջ, Օ. Կարիէրի եւ Հ. Յ. Տաշեանի հայագիտական համագործակցութեան եւ ասոր արգասիքին...:

Այս եզրայանգումը փաստեց միայն փոքր մասամբ այս բանախօսութիւնը, որուն կրնային յաջորդել վեցէն ութ բանախօսութիւններ՝ շրջագրծելու համար ամբողջական պատկերն այս երկու խորենացիագէտ անձնաւորութիւններուն եօթնամեայ թղթակցական յարաբերութեան աշխատանքին:

- Կը յուսամ եւ կը խոստանամ, որ մօտալուտ ապագային՝ այս պատկերացումը պիտի կատարէ «Դիւանագիտային պրպտումներ խորենացիագիտական մարզէն ներս» ուսումնասիրութիւնս...:

Շարժումը, ըլլայ խորենացիապաշտ կամ խորենացիագէտ, որուն ծնունդը տուաւ Օ. Կարիէր, ա'յնքան պիտանի եւ արդիւնաւէտ եղաւ հայ պատմագրութեան ու հայկաբանութեան, ընդհանրապէս, եւ խորենացիագիտութեան, մասնաւորապէս:

Ստուգիլ, անուրանալի՛ են այս շարժումին ներգործութիւնը, ազդեցութիւնն ու պտղաբերութիւնը: Հոս չմոռնանք, որ, ի վերջոյ, անոր առաջին ու գլխաւոր ազդակները հանդիսացան Օ. Կարիէր եւ Հ. Տաշեան:

Առաջինը, զոր Զեր «Պատմական Գիտութիւնների թեկնածու՝ դոցենտ» Լեւոն Շահինեան իրաւացիօրէն կ'որակէ իբր «նշանաւոր հայագէտ» եւ կը դասէ «խորենացիագէտների... պատկառագրու» անձնաւորութիւններուն մէջ, ըստ իս, թէ ինչ ըրաւ իր «գիւտարար» ու «նորասաց» աշխատանքով, եւ այսօր որքան ալ մեր ականջին հակասական հնչել ուզէ, յայտնի մնալու է դրական իմաստաւորումով եւ արժէքաւորումով, մանաւանդ երբ այդ նկատենք իր ժամանակին տեսանկիւնէն, որով կը ստանայ աննախընթաց տարողութիւն...:

Երկրորդը, Հ. Տաշեան, թէ ինչ, ինչպէս եւ ո՞րքան նպաստեց Օ. Կարիէրին, այդ լոկ ուրուագծուեցաւ այս բանախօսութեամբ: Հրատարակուե-

լիք ուսումնասիրութեանս մատնանշած մանրամասնութիւնները անակընկալի պիտի բերեն գիտաշխարհը՝ ի նպաստ Հ. Տաշեանի ընձեռած օգտակարութեան, ըլլայ այդ բարոյական աջակցութեամբ՝ գնահատանքի ցուցաբերում, խրախուսանքի արտայայտութիւն, քաջալերանքի դրսեւորում, եւ յատկապէս ըլլայ այդ նիւթական աջակցութեամբ՝ զգուշացում, քննադատում, ցուցմունք, աղբիւրներու մատուցում, յօդուածներուն հրատարակում, գրութիւններուն հայացում, գիրքերուն հրատարակութեան մեկենասութիւն...:

Հուսկ, յիշեցումս կը յանձնեմ Ձեր ուշադրութեան:

Թէեւ Հր. Աճառեան Հ. Տաշեանը խորենացիապաշտպան բանակին գլուխը կը դնէ ու թէեւ Լ. Շահինեան կը հաւաստէ, որ «խորենացիագիտութեան հարցերում (եւ ընդհանրապէս) իրենց խոր գիտակցութեամբ եւ բանավիճակին բնոյթով աչքի են ընկնում Հ. Յ. Տաշեանի ուսումնասիրութիւնները...: Այս ուսումնասիրութիւններում մեծավաստակ եւ հմուտ հայագէտը բազմիցս անդրադարձել է խորենացիագիտութեան հիմնահարցերին ու ենթահարցերին...», պարտաւոր եմ յիշեցնելու, թէ Միխիթարեան հայկաբանին իսկական, խոր ու համապարփակ տեսութիւններուն եւ խորենացիագիտութեան բերած օգտաշատ նպաստին տակաւին ամբողջապէս ծանօթ չէ գիտաշխարհը...:

Ամբողջութեան ներկայացումը կը պահանջէ հսկայական աշխատանք եւ հետեւողական ուսումնասիրութիւն, որոնց պէտք է ընդգրկեն Հ. Տաշեանի բոլոր անտիպ ու տպուած գրութիւններուն, ինչպէս նաեւ ամենափոքր մատենախօսականին ու յառաջաբանին, բովանդակութեան քննութիւնը:

Ամբողջացումին իր կենսական նպաստը անհրաժեշտօրէն պիտի բերէ նաեւ Հ. Տաշեանի քառասուն տարիներուն նամակագրութիւնը: Բնական է, որ մասնայատուկ տեղ ունին Օ. Կարիէրին անոր ղրկած թղթակցութիւնները: Բայց նաեւ բազմաթիւ նամակներ, զորոնք գրեր է Հ. Տաշեան մերազնեայ թէ օտարագգի հայագէտներուն, որոնց այս կամ այն առթիւ՝ այս կամ այն խորենացիական հարցին մասին արտայայտած է իր տեսակէտը, ենթադրութիւնը, կասկածը, վերապահութիւնը, եւայլն...:

– Շնորհակալութիւն:


ՄԵՍՐՈՊ ՀԱՅՈՒՆԻ

Երեւան, 1 Հոկտեմբեր 1991

ԳԵՐԱՊԱՅԾԱՌ

Հ. ՍԱՀԱԿ ԵՊՍ. ԿՈԳԵԱՆԻ

ՆՈՒԻՐՈՒԱԾ ԳԻՐՔԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒՄ



24 տարիներու աշխատանքէ ետք, 11 Յուլիս 2008-ին Գրէյմի տպարանէն լոյս ընծայուեցաւ Մեսրոպ Հայունի Վարդապետին «Գերապայծառ Դոկտ. Հ. Սահակ Եպս. Կոզեան. Դիւանային երկասիրութիւն»ը (Այնմար, 2008, 688 էջ): Սոյն մեծադիր, նկարազարդ հատորը, որ լոյս կը տեսնէ երջանկայիշատակ Կոզեան Գերապայծառին (1895-1963) վախճանումին 45-ամեայ տարելիցին առիթով, կը կազմէ թիւ 1-ը «ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ Մատենաշար»ին: Հայր Սահակ 13 տարի ծառայած է Հայ Կաթողիկէ Պատրիարքութեան, որպէս Ընդհանուր Փոխանորդ: Ստորեւ կու տամք գիրքին հեղինակ՝ Հ. Մեսրոպ Մ. Վ. Թոփալեանի «Բացատրական»ը:

«Վիեննայի Մխիթարեան Մայրավանքին ճոխ դիւանին մէջ կան լեփլեցուն 18 քարթոնէ տուփեր,

որոնք կը կրեն Գերպօ. Հ. Սահակ Եպս. Կոզեանի (1895-1963) մականունանունը:

Ամէն մէկ տուփին չափն է՝ 34 սմ. երկայն, 26 սմ. լայն, 9 սմ. խոր: Տուփերը թուարկուած են՝ «Կոզեան Հ. Սահակ 1-18»:

18 Տուփերուն թուարկումին համաձայն՝ սկսայ իմ ժամանակապահանջ աշխատանքս, այսինքն՝ ամէն մէկ տուփին պարունակը թուղթ առ թուղթ կամ էջ առ էջ ուսումնասիրելով՝ իւրաքանչիւրին բովանդակութիւնն առանձին ներկայացուցի:

Յայտնելու եմ, որ 18 տուփերուն մէջ նիւթերուն դրուած կարգը միշտ ժամանակագրական չէ: Նոյնը պահեցի բացի «Դիւանային յայտնաբերումներ»-ուն «Կենսագրական տուեալներ»-էն, զորոնք դասաւորեցի

իրենց թուականներուն համաձայն՝ անշուշտ պահպանելով տուփերուն թուարկումը:

Այս երկասիրութեանս գլխաւոր եօթ բաժանումներն են՝ «Դիւանային արժորոմներ», «Դիւանային մտորումներ», «Դիւանային յայտնաբերումներ», «Դիւանային փաստաթուղթեր», «Դիւանային վկայութիւններ», «Մամլային վկայութիւններ» ու «Վերլուծումներ եւ ուսումնասիրութիւններ»:

«Դիւանային արժեւորումներ»-ուն 22 գլուխներուն շարքը տրամաբանական թելադրանքն էր դիւանային աշխատելաձեւին, զոր կիրարկեցի «Կոզեան Հ. Սահակ» պիտակուած 18 տուփերուն ժիրաժիր պրպտումով ու հետեւողական ուսումնասիրութեամբ:

Այս գլուխները կրնան կազմել ենթահոդը աւելի համադրական ու համապարփակ գլխակարգութիւններու, որոնց ամբողջականութիւնն ինքնին կը լեցնէ հաստափոր երկասիրութիւն մը կոզեանական արտաքին ու ներքին «Փենոմենալ» բացառիկութեան...:

«Դիւանային մտորումներ»-ը հոգեւոր ու մտաւոր «թափառում»-ներն ըլլալէն աւելի՝ առօրեային պատկան ներքին եւ արտաքին արտայայտումներն են, զորոնք Հ. Կոզեան կատարեց ընդհատումներով, այսինքն՝ երբեմն երկար տարիներու, երբեմն ամիսներու, մերթ շարժութիւններու եւ մերթ օրերու ընդմիջումներով...:

«Դիւանային յայտնաբերումներ»-ուն 16 գլուխները այբբենական կարգով են, իսկ 8 «Դիւանային փաստաթուղթեր»-ը, 29 «Դիւանային վկայութիւններ»-ը, 6 «Մամլային վկայութիւններ» ու 5 «Վերլուծումներ եւ ուսումնասիրութիւններ»-ը կը ներկայացուին ժամանակագրականօրէն:

«Դիւանային յայտնաբերումներ»-ը արտաշխարհին, ընդհանրապէս, եւ գիտաշխարհին, մասնաւորապէս, լոյս կ'ընծայեն «Կոզեան Հ. Սահակ» պիտակուած լեցուն 18 տուփերուն բովանդակութիւնը, որ գրական ու ձեռագրային թողոնն է, թէեւ ոչ ամբողջական, քանի, ինչպէս անդադարձայ իմ պրպտումիս ընթացքին, բացականերուն քանակը շատ բարձր է, մանաւանդ ինչ որ կը հայի քարոզներու, եւ անոնց մէջ՝ մայիսեան ու մարեմեան ելոյթներու...:

«Դիւանային փաստաթուղթեր»-ը այսօր Վիեննական Միթիթարեան Մայրավանքին դիւանին մէջ պահուած անտիպ գրութիւններէն են, որոնք ուրիշներու հեղինակութիւններն ըլլալով՝ առարկայական մօտեցումով կը խօսին Հ. Կոզեանի մասին:

«Դիւանային վկայութիւններ»-ը ատոք արգասիքը կը կազմեն այն շրջաբերական խնդրագրին, զոր զանազան հոգեւորականներու ղրկեցի 17 Դեկտեմբեր 1984-ին, Վիեննայէն:

«Մամլային վկայութիւններ»-ը կը բխին Հ. Կոզեանի ժամանակակից, պաշտօնակից կամ վիճակակից աշխարհական ու հոգեւորական անձնաւորութիւններէ, որոնք անոր անակնկալ վախճանումէն բոլորովին անակրնկալահար՝ իրենց սրտին եւ մտքին խօսքը արտայայտեցին այս ձեռնար-

կին կամ այն հանդէսին ընթացքին:

«Վերլուծումներ եւ ուսումնասիրութիւններ»-ուն առաջին չորսերը հրատարակեցի Հայ Կաթողիկէ Պատրիարքարանի Պաշտօնաթերթին՝ «Աւետիք»-ին եւ «Մարիամ» մարեմագիտական ուսումնաթերթին մէջ: Բացի առաջինէն ու վերջինէն՝ մնացեալները մատնանշուած են իբր «Շարունակելի»...:

Յատուկ իմաստով, կենսագրութիւն մը չէ, այլ՝ ապագային պատրաստուելիք կենսագրականին համար ատաղձ հայթայթող աշխատասիրութիւնն է այս ստուար հատորը:

Նաեւ վարքագրական չէ եւ չ'ուզեր ըլլալ, այլ՝ հետագային անպայմանօրէն շարադրուելիք վարքագրութեան ելակէտը հանդիսանալու կոչուած է այս մատենանը դիւանային պրպտումներուն:

Ընդհանուր իրողութիւն է, որ Հ. Կոզեան բարձրագագաթ ու անհպելի մեծութիւն էր եւ է մինչեւ այս աշխատասիրութեան հրատարակումը, որ ոչ միայն հիմնաւորելու եւ հաստատելու կու գայ այս համայնատարած հռչակը, այլեւ ու մանաւանդ «կոզեանական» տիտանեան մեծութեան ուրոյն յատկանիչերն ու բազմերանգ փուլերը յայտնաբերելու պարտականութեամբ պարաւանդուած եւ կոչուած կը զգայ ինքզինքը, եւ այն՝ դիւանային ցայտմ մնացած անյայտ տարողութեամբ ու փաստական անհերքելիութեամբ...:

Հ. Կոզեանի հինաւուրց գոյացած ու ցայտմ գոյատեւած հսկայութեան հռչակումին եւ ժողովրդականութեան առկայումին շօշափելի փաստերը կը հայթայթեն նաեւ «Դիւանային վկայութիւններ»-ը, որոնց նամակագիր հեղինակներն այս կամ այն ձեւով, այս կամ այն առիթով, այս կամ այն հանգամանքով ծանօթած էին Հ. Ս. Կոզեանին. ոմանք ալ պաշտօնավարած են անոր հետ: Իրենց տեսանկիւնէն պատասխանեցին իմ խնդրագիր նամակիս:

Այսօր, պատասխաններն ունին իրենց արժէքն ու կշիռը, քանի՜ ականջալուրի եւ ականատեսի վկայութիւններն են: Պատասխանագիրներէն շատերն արդէն բռնեցին իրենց յաւերժերթը: Անոնց վկայող նամակները կը պահուին մեր Վիեննական Միութարեան Մայրավանքին դիւանին մէջ»:

ՍԱՐԿԱՒԱԳԻ ՁԵՌՆԱԳՐՈՒԹԻՒՆ ՐԱՖՖԻ ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆԻՆ

Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ - Ս. ԵՂԻԱ ԱԹՈՌԱՆԻՍՏ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԷՁ

20 Յուլիս 2008

Կիրակի 20 Յուլիս 2008-ի առաւօտեան ժամը 10:00-ին, սուրբ Գրիգոր Լուսաւորիչ - սուրբ Եղիա աթոռանիստ եկեղեցւոյ մէջ, Հանդիսաւոր սուրբ Պատարագի ընթացքին, Պէյրուսի թեմէն քահանայութեան թեկնածու՝ եղբայր Րաֆֆի Յովհաննէսեան ստացաւ սարկաւազութեան կարգ, ձեռամբ Արհի. Յովհաննէս Եպս. Թէյրուզեանի՝ Օգնական Եպիսկոպոս Պատրիարքական թեմին:

Սուրբ Պատարագին ընկերակցեցան սուրբ Գրիգոր - սուրբ Եղիա եկեղեցւոյ ժողովրդապետ՝ Գերյ. Հ. Եղիա Մ. Վ. Եղիայեան, Գերպ. Հայր Մեսրոպ Մ. Վ. Թոփալեան եւ Հայր Եղիա Վրդ. Դերձակեան:



Զեռնադրութեան ներկայ էին տարբեր եկեղեցիներու հոգեւոր ներկայացուցիչներ եւ բազմաթիւ հաւատացեալներ:

Սուրբ Պատարագի աւարտին, եղբայր Րաֆֆի Յովհաննէսեան, Արհի. Յովհաննէս Եպս. Թէյրուզեանի հետ ընդունեց շնորհաւորութիւններ, ապա տեղի ունեցաւ հիւրասիրութիւն:

Եղբայր Րաֆֆի Յովհաննէսեան եղած է նախկին նորընծայ Զմմառու սուրբ Միքայէլ ընծայարանի: Ան իր փիլիսոփայական եւ աստուածաբանական բարձր ուսումը ստացած է Հռոմի եւ Լիբանանի մէջ:

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ ՍԿԱՌՈՒՏԱԽՈՒՄԲԻ ՀԻՄՆԱԴՐՈՒԹԵԱՆ ՑՕԱՄԵԱԿԻ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ

20 Յուլիս 2008

Հովանավորութեամբ Տանն Կիլիկիոյ Կաթողիկէ Հայոց Ամենապատիւ Տէր Ներսէս Պետրոս ԺԹ. Կաթողիկոս Պատրիարքին, կազմակերպութեամբ սուրբ Գրիգոր Լուսավորիչ սկառտախումբի 80ամեակի յանձնախումբին, նախագահութեամբ Տէր եւ Տիկին Գրիգոր Թերզեանի (նախկին ընդհանուր խմբապետ), Կիրակի, 20 Յուլիս 2008-ի երեկոյեան ժամը 7:30-ին, ՀԿՄ-ի «Արարատեան» սրահին մէջ տեղի ունեցաւ սուրբ Գրիգոր Լուսավորիչ սկառտախումբի հիմնադրութեան 80ամեակի տօնակատարութիւնը, ներկայութեամբ հոգեւոր հայրերու, ներկայացուցիչներու, ծնողներու եւ ժողովրդային բազմութեան:

Արի-արեւունչներու կատարողութեամբ Լիբանանի, Հայաստանի եւ



«Ուլ Հայ Արի» քայլերգները ունկնդրելէ ետք, խօսք առաւ սուրբ Գրիգոր Լուսաւորիչ սկառտախումբի ընդհանուր խմբապետ Միհրան Այնեճեան, որ նշեց, թէ 80ամեակը առիթ մըն է նոր թափով շարունակելու սկառտական աշխատանքները:



Այնեճեան ըսաւ, թէ դժուարութիւնները պէտք չէ յուսահատութիւն պատճառեն, այլ յաւերեալ ճիգով շարունակելու գրաւականը պէտք է հանդիսանան:

Իր կարգին, հայր Վարդան վրդ. Գազանճեան հաստատեց, թէ սկառտութիւնը հիմնական միջոց մըն է՝ ծառայելու ազգին եւ եկեղեցիին:

Հոգեւոր հայրը նշեց նաեւ, որ սկառտութեան մէջ խմբային հասկացողութիւնը շարժառիթ է դուրս գալու անհատականէն՝ ապրելու համար հաւաքաբար:

Իսկ օրուան բանախօս Սարգիս Նաճարեան ըսաւ, որ հայ սկառտը արժանաւոր ժառանգորդն է Վարդանանց հերոսներուն, որոնք նահատակուեցան կրօնին եւ հայրենիքին համար:

Նաճարեան հաստատեց, որ սկառտութիւնը ապրելակերպ է, նկարագիր ու սկզբունք:

Լիբանանի Սկառտական Շարժումի ընդհանուր խմբապետ Ռոպին Ռիչա իր կարգին փոխանցեց շնորհաւորական խօսք մը, մատնանշելով, որ սուրբ Գրիգոր Լուսաւորիչ սկառտախումբը Լիբանանի սկառտական ընտանիքին մէջ ունի իր իւրայատուկ տեղը:

Ձեռնարկի ընթացքին սկառտները երգերով, կենդանի պատկերով, պարով ու կանչերով ստեղծեցին սկառտական առողջ մթնոլորտ: Իւրայատուկ էր արի-արեւունքներու երգչախումբին կողմէ Սայաթ Նովայի երգերուն ներկայացումը:

Բենեդիկտոս Ժ.Ս. սրբազան Քահանայապետի «Օրհնութեան Գիր»ին յանձնումէն ետք տեղի ունեցաւ յուշանուէրներու տուչութիւնը, որմէ ետք հանդէսին եզրափակիչ խօսքը արտասանեց Ամեն. Հոգեւոր Տէրը, որ հաստատեց, թէ սուրբ Գրիգոր Լուսաւորիչ սկառտախումբը միշտ պատրաստ է օգտակար հանդիսանալու իր շրջապատին:

Հոգեւոր Տէրը ողջունեց նաեւ սկառտախումբին 80ամեայ երթը՝ շեշտելով ծառայասիրութեան կարեւորութիւնը ու մաղթելով նորանոր ձեռքբերումներ:

Ապա տեղի ունեցաւ սկառտական խոստումի վերանորոգման արարողութիւն եւ հիւրասիրութիւն:

ՀԱՆԴԻՊՈՒՄ «ՎԵՐԱՊՐՈՂ ՎԿԱՆԵՐ» ԳԵՂԱՆԿԱՐԻ ՀԱՅԱՍՏԱՆ ՓՈԽԱԴՐՈՒԹԵԱՆ ԱՌԻԹՈՎ

Ներկայութեամբ Տանն Կիլիկիոյ Կաթողիկէ Հայոց Ամեն. Եւ Գերերջանիկ Տէր Ներսէս Պետրոս ԺԹ. Կաթողիկոս Պատրիարքին, հոգեւոր հայրերու եւ հրաւիրեալներու, Կիրակի 20 Յուլիս 2008-ի երեկոյեան ժամը 6:00-ին, Հայ Կաթողիկէ Պատրիարքարանի դահլիճին մէջ տեղի ունեցաւ հանդիպում մը լիբանանահայ արուէստագէտ Բաֆֆի Ետալեանի «Վերապրող վկաներ» գեղանկարի Ծիծեռնակաբերդի Հայոց Յեղասպանութեան Թանգարան փոխադրութեան առիթով:

Ձեռնարկին բացման խօսքը արտասանեց սրբոյ Կոստին Աւետման եկեղեցւոյ Ժողովրդապետ՝ հայր Վարդան վրդ. Գազանճեան, որ նշեց, թէ 23 Ապրիլ 2008-ին Հայոց Յեղասպանութեան 93ամեակին առիթով տեղի ունեցած հսկումի արարողութիւնը առիթ մըն էր արուեստի ճամբով արտայայտելու մեր ցաւն ու պահանջը: Ան աւելցուց, որ Բաֆֆի Ետալեանի հովանաւորութեամբ գեղանկար մը պատրաստելու գաղափարը իւրայատուկ էր. այդ գաղափարը որդեգրուեցաւ ու այսօր արդէն դարձած է իրականութիւն:

Ապա խօսք առաւ Բաֆֆի Ետալեան, որ ըսաւ, թէ «Վերապրող վկաներ» գործը կը կրէ 301 լիբանանահայերու մատնահետքերը, որոնք կենդանի վկայութիւնը կը հանդիսանան Հայոց Յեղասպանութեան:

Ետալեան յայտնեց, որ գեղանկարին հայրենիք փոխադրութեամբ կարելի պիտի ըլլայ Յեղասպանութեան անարգ ոճիրը դատապարտող վկաներուն կողքին աւելցնել նոր վկայ մը:

Իր խօսքի աւարտին Բաֆֆի Ետալեան նշեց, որ 93ամեակը իր արուեստի ուղղութեան տուաւ նոր դրոշմ, քանի որ ինք այդ ստեղծագործութեամբ կրցաւ բերել իր համեստ ներդրումը Յեղասպանութեան վկայութիւնը վառ պահելու աշխատանքին:

Ձեռնարկի աւարտին հայր Վարդան Գազանճեան ըսաւ, որ գեղանկարը ներկայացնող յատուկ բացիկներ պատրաստուած են, որոնց նիւթական եկամուտը պիտի օգտագործուի՝ ապահովելու համար գեղանկարի փոխադրութեան ծախսերը:

Հանդիպման աւարտին տեղի ունեցաւ հիւրասիրութիւն:

ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏԻ ՄԱՀՈՒԱՆ 73ՐԴ ՏԱՐԵԼԻՑԸ



17 Հոկտեմբեր 2008-ին, Զմմառու Վանքի դահլիճին մէջ, Միաբանութեան ժառանգաւորները նախաձեռնութեամբ Միաբանութեան մեծաւոր Գեր. Միքայէլ Թ.Մ. Վարդապետ Մուրատեանի, դասախօսական եւ գեղարուեստական երեկոյթով մը ոգեկոչեցին անմահանուն Կոմիտասի յիշատակը:

Կոմիտասի կեանքին ու վաստակին անդրադարձաւ ժառանգաւոր եղբայր Ֆատի-Պարգեւ

Պաշխաճեան: Ան հանգրուան առ հանգրուան ներկայացուց Կոմիտասի կեանքը, էջմիածնէն մինչեւ Պերլին, ապա վերադարձ հայրենիք, ուր ան ամբողջովին նուիրուեցաւ իր ժողովուրդի երաժշտական ժառանգութեան պահպանումին, մշակումին ու հարստացման, մինչեւ իր եղբրական աքսորն ու վախճանումը՝ Փարիզ: «Կոմիտաս Վարդապետ միահիւսուած է իր ժողովուրդին հետ, եւ այդ սերտացման շնորհիւ դարձած է իր ազգին խիղճն ու հոգին, ...իր մահուամբ իսկ դառնալով իր ժողովուրդին ցեղասպանութեան խորհրդանիշը», հաստատեց եղբայր Պաշխաճեան:

Բանախօսութենէն ետք ժառանգաւորները ներկայացուցին Կոմիտասեան երգերու փունջ մը: Հ. Միքայէլ գնահատելով ձեռնարկը, շեշտեց Կոմիտասի դերը հայ ժողովրդական եւ հոգեւոր երաժշտութեան ասպարէզին մէջ, յատկապէս կեդրոնանալով «մեր հոգեւոր հարստութիւններէն մին համարուող «Կոմիտասեան Պատարագ»ին վրայ:

Այնուհետեւ մեծաւոր Հայրը Կոմիտասեան «Հայր Մեր»ով եզրափակեց միջոցառումը:

ՃԻՆԻՇԵԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ ԽՈՐՀՐԴԱՏՈՒ ՄԱՐՄՆԻ ՆՈՐ ԱՆԴԱՄՆԵՐՈՒ

21 Նոյեմբեր 2008-ին, Տանն Կիլիկիոյ Կաթողիկէ Հայոց Տէր Ներսէս Պետրոս ԺԹ. Կաթողիկոս Պատրիարքը նամակ մը ստացաւ Ճինիշեան հիմնարկի տնօրէնուհի՝ տիկին Սեդա Փամպուքեանէն, որուն մէջ ան Ամենապատիւ Հոգեւոր Տիրոջ կը տեղեկացնէ, թէ Ճինիշեան Յիշատակի Ձեռնարկի նորընտիր Խորհրդատու Մարմնի նշանակումը կատարուած է Միացեալ Նահանգներու Խորհրդատու Մարմնին կողմէ, վաւերացումովը Միացեալ Նահանգներու Երիցական Եկեղեցւոյ: Նորընտիր կազմին մէջ, Հայ Կաթողիկէ եկեղեցին կը ներկայացնեն Տոքթ. Մինաս Գարամինասեան, Ժիլյէլ Քիւրքճի եւ Ռաֆայէլ Ումուտեան:

Ճինիշեանի տնօրէնութեան, անձնակազմին եւ Խորհրդատու Մարմնին անունով, տիկ. Փամպուքեան կը յայտնէ պատրաստակամութիւնը այս հիմնարկին, Աստուծոյ շնորհքով եւ հաւաքական ճիգով ամօքելու չքաւորին, տկարին, որբին եւ հիւանդին կարիքները:

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՄԱՍՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ ՔՐԻՍՏՈՆԵԱՅ ՄԱՄՈՒԼԻ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍԻՆ

Հայ Կաթողիկէ Պատրիարքարանը իր մասնակցութիւնը բերաւ Քրիստոնեայ Մամուլի ցուցահանդէսին, որ կազմակերպուած էր Կաթողիկէ Մամուլի Միջազգային Կազմակերպութեան (UCIP) կողմէ, հովանաւորութեամբ Մարոնիթ Պատրիարք կարգինալ Նասրալլա Սֆէյրի: «Հաղորդակցութեան Միջոցները եւ Կրօնական Երկխօսութիւնը» խորագիրը կրող այս ցուցահանդէսին բացումը տեղի ունեցաւ Հինգշաբթի 27 Նոյեմբեր 2008-ի կէսօրէ ետք ժամը 6:00-ին, «Մար Իլյաս» եկեղեցւոյ մէջ, Անթիլիաս: Ցուցահանդէսը շարունակուեցաւ մինչեւ 7 Դեկտեմբեր 2008:

«ԲԼԲՈՒԼ» ԵՐԳՉԱԽՈՒՄԻ 25ԱՄԵԱԿ

Կազմակերպութեամբ Հայ կաթողիկէ սուրբ Փրկիչ եկեղեցւոյ ժողովրդապետութեան, նախագահութեամբ Տանն Կիլիկիոյ Կաթողիկէ Հայոց Ամեն. եւ Գերերջանիկ Տէր Ներսէս Պետրոս ԺԹ. Կաթողիկոս Պատրիարքին եւ բարերարութեամբ Անթուան էմիրզեան ամուլին, Շաբաթ, 20 Դեկտեմբեր 2008-ի երեկոյեան ժամը 8:30-ին, «Յովհաննէս Պօղոսեան» թատերասրահին մէջ տեղի ունեցաւ սուրբ Ծննդեան համերգ՝ կատարողութեամբ «Բլբուլ» մանկապատանեկան երգչախումբին, անոր հիմնադրութեան 25ամեակին առիթով: Երգչախումբին գեղարուեստական ղեկավարն է Մանուէլ Քեչիչեան. համերգին դաշնամուրով կ'ընկերակցէր Ռուպինա Զաքարեան, իսկ սրինգով՝ Գէորգ Քեչիչեան:

Օրուան հանդիսավար Անայիս Կետիկեան յայտնեց, որ «Բլբուլ» մանկապատանեկան երգչախումբը հիմնուած է 1983-ին, Արհի. Յովհաննէս եպս. Թէյրուզեանի մտայղացումով եւ ղեկավար Մանուէլ Քեչիչեանի գործադրութեամբ:

Հայր Սարգիս վրդ. Դաւիթեան իր բացման խօսքին մէջ նկատել տուաւ, որ իր հիմնադրութեան թուականն է ի վեր, «Բլբուլ»ը չէ դադրած երգելէ հոգեւոր եւ ազգային երգեր: Երգչախումբը այն միջավայրը եւ բոյնն է, ուր պատանիին հոգիին մէջ կը զարգանայ սէրը, ինչպէս նաեւ արուեստի եւ գեղեցիկի գաղափարը, հաստատեց վարդապետը՝ աւելցնելով, որ այն ժողովուրդը, որ երգ չունի, լծացած եւ տխուր ժողովուրդ մը կ'ըլլայ՝ ենթակայ ամէն տեսակի վտանգներու, առանց հոգիի ազնուութիւն եւ վեհութիւն ունենալու:

«Բլբուլ»ի հիմնադիր անդամներէն Պեանքա Քեքեճատուրեան նկատել տուաւ, որ 12 տարեկան հասակին մաս կազմած է երգչախումբին, ուր սորված է հոգեւոր, ազգային եւ հայրենասիրական երգեր: Ան նաեւ ներկաներուն հետ բաժնեկցեցաւ կարգ մը յիշատակներ:

Յայտագիրը կը բաղկանար երեք բաժիններէ. առաջին բաժինով 47 հոգիէ բաղկացած «Բլբուլ» մանկական երգչախումբը ներկայացուց հայերէն, անգլերէն եւ արաբերէն երգերու փունջ մը, ինչպէս նաեւ չորս կարճ կենդանի պատկերներ (բեմադրութեամբ Յարութ Հարպոյեանի): Երկրորդ բաժինով «Բլբուլ» մանկապատանեկան երգչախումբը իր 52 անդամներով մեկնաբանեց հայերէն, արաբերէն եւ ֆրանսերէն երգեր: Եր-



րորդ բաժինով «Արծիւեան» երգչախումբի անդամներ, որոնք նախապէս մաս կազմած են «Բլբուլ»ին, ներկայացուցին երեք երգեր:

Աւարտին յուշանուէրներ յանձնուեցան Ամեն. Հոգեւոր Տիրոջ, Արհի. հայր Յովհաննէս եպս. Թէյրուզեանի, Սարգիս վրդ. Դաւիթեանի, եւ երգչախումբի ղեկավար Մանուէլ Քեչիշեանի:

Երգչախումբի հիմնադրութեան 25ամեակին առիթով սրբազան Քահանայապետ Պենետիկոսոս ԺԶ. պապը շնորհաւորագիր մը ուղարկած էր, որ ընթերցուեցաւ Արհիւպատիւ հայր Յովհաննէս եպս. Թէյրուզեանի կողմէ:

Ձեռնարկի աւարտին սրտի խօսք ուղղեց Արհի. Տէր Յովհաննէս եպս. Թէյրուզեան, որ նկատել տուաւ, թէ հակառակ նիւթական եւ այլ բնոյթի զանազան խօչընդոտներու, «Բլբուլ» երգչախումբը գոյատեւած է եւ գոհունակութիւն յայտնեց համայնքին մէջ նման երգչախումբի մը գոյութեան համար, որովհետեւ անիկա իր ղեկավարով եւ անձնակազմով կ'ամբողջացնէ տան եւ դպրոցի դաստիարակութիւնը՝ ջամբելով քրիստոնէական եւ ազգային հոգի:

Եզրափակիչ պատգամը փոխանցեց Ամեն. Հոգեւոր Տէրը, որ կոչ ուղղեց բոլոր ծնողներուն իրենց զաւակները վստահելու «Բլբուլ» երգչախումբին, որովհետեւ հոն կը կազմաւորուի անոնց նկարագիրը, եւ կը սորվին քրիստոնէական եւ ազգային սկզբունքներ, հոն կը զօրանայ իրենց հայրենասիրական եւ հայկական ինքնութեան զգացումը. «Ձեր զաւակները «Բլբուլ» երգչախումբին մաս թող կազմեն ոչ միայն երգի կամ ժամանցի համար, այլեւ՝ քրիստոնէական եւ ազգային դաստիարակութիւն ստանալու համար», եզրափակեց Ամեն. Հոգեւոր Տէրը:

Ձեռնարկը փակուեցաւ «Պահպանիչ»ով եւ Տէրունական աղօթքով:

ՄՈՆԹՐԵԱԼԻ ՏԻՐԱՄԱՅՐ ՆԱՐԵԿԻ ԵԿԵՂԵՑԻՈՅ 25ԱՄԵԱԿ

Կիրակի Սեպտեմբեր 21-ին, Մոնթրեալի Տիրամայր Նարեկի Հայ Կաթողիկէ եկեղեցին տօնեց իր օծման 25ամեայ արծաթեայ յոբելեանը: Այս առթիւ Հայր Գէորգ Մ.Վ. Զապարեան մատուցեց սուրբ Պատարագ եւ փոխանցեց օրուան պատգամը, որմէ ետք տեղի ունեցաւ քօղազերծում Գերպօժ. Եղուարդ Գորդիքեանի կրանխոխայ դիմանկարին:

Հայր Զապարեան իր պատգամին մէջ տուաւ պատմականը Տիրամայր Նարեկի եկեղեցւոյ, որ հիմնուած է 25 տարի առաջ Գերապայծառ Եղուարդ Թ.Մ.Վ. Գորդիքեանի եւ իր գործակիցներուն, բարերարներու եւ հաւատացեալներու ջանքերով, որոնք «Աստուծոյ շնորհքով, խոր գիտակցութեամբ, վեհանձնութեամբ, առատաձեռնութեամբ եւ բազում զոհողութիւններով ու տքնաջան աշխատանքով, յաջողեցան իրենց տարիներու երազը իրականացնել»:

Հայր Զապարեան այս առթիւ յայտնեց թէ Տիրամայր Նարեկի ժողովրդապետական եկեղեցւոյ օծումը կատարուած է 15 Մայիս 1983ին, ձեռամբ վաստակաւոր Կաթողիկոս Պատրիարք՝ Ամենապատիւ Տէր Յովհաննէս Պետրոս Գասպարեանի եւ մինչեւ այսօր հիմնադիրներու յաջորդները կը ջանան պահել եւ պահպանել եկեղեցին, որպէսզի «մնայ վայրը ուր կը համախմբուին համայնքի հաւատացեալները աղօթելու, Աստուծոյ պաշտամունքը ընծայելու եւ կենարար խորհուրդներն ընդունելու իրենց ամբողջ կեանքի տեւողութեան»:

Իսկ ժողովրդապետական եկեղեցին, Գերպօժ. Զապարեան կը համարէ այն վայրը՝ որ կը համախմբէ բոլոր հաւատացեալները մասնակցելու կիրակնօրեայ Պատարագին եւ կը վարժեցնէ քրիստոնեայ ժողովուրդը ծիսական կեանքի, ինչպէս նաեւ կը սորվեցնէ «Քրիստոսի փրկարար վարդապետութիւնը եւ կը կիրարկէ նաեւ Տիրոջ սէրը՝ բարի եւ եղբայրական գործերով»:

Իր պատգամի աւարտին, Հայր Զապարեան խորին շնորհակալութիւն յայտնեց Աստուծոյ, ապա եկեղեցւոյ շինարարներուն որ կառուցեցին «այս նիւթական տաճարը, իբրեւ խորհրդանիշ միասիրտ հաւատացեալներու ձայնակցութեան, փառք եւ պատիւ ընծայելու Արարիչին»:

Յոբելեանական յիշատակութեան առթիւ, նոյն օրը երեկոյեան ժամը 7:00ին, մեծ հանդիսութեամբ ելոյթ ունեցաւ «Գառնի» պարային համոյթը, գեղարուեստական ղեկավարութեամբ՝ Լուդվիկ Բուլղազարեանի:

360°

Լ ՈՒՐ Ե Ր

ԵՊԻՍԿՈՊՈՍ ԹՈՒՎԼ ՆՈՐ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՐՈՒՍԱԴՆԵՄԻ ԼԱՏԻՆ ԵԿԵՂԵՑՒՅՑ

Ուրբաթ 20 Յունիս 2008-ին, Երուսաղէմի սուրբ Յարութիւն եկեղեցւոյ մէջ, Երուսաղէմի Լատին Եկեղեցւոյ նոր պատրիարք ձեռնադրուեցաւ Ֆուատ Թուալ եպիսկոպոս, յաջորդելով Պատրիարք Միշէլ Սապպահի, ներկայութեամբ՝ տարբեր եկեղեցիներու ներկայացուցիչներու եւ անձնաւորութիւններու:

Սապպահ վաստակաւոր Պատրիարք, իր մատուցած վերջին պատրիարքական Պատարագին, հայրապետական գաւազանը փոխանցեց իր յաջորդին՝ Թուալ եպիսկոպոսին, նշանակուած՝ Բենեդիկտոս ԺԶ. Քահանայապետի կողմէն:

Պատրիարք Թուալ ծնած է 23 Հոկտեմբեր 1940-ին, Յորդանան: Սեպտեմբեր 2005-էն սկսեալ, ան փոխանորդն էր Պատրիարք Սապպահի, որ պատրիարք նշանակուած էր Յովհաննէս Պօղոս Բ-ի կողմէ Դեկտեմբեր 1987-ին:

Ներկայիս, պաղեստինեան շրջաններուն մէջ կ'ապրին շուրջ 180 հազար քրիստոնեաներ, որոնց կէսը կաթողիկէ համայնքին կը պատկանին (30 հազար լատիններ): Լատին պատրիարքի իշխանութիւնը կը տարածուի Պաղեստինեան հողերուն, Իսրայէլի, Յորդանանի ու Կիպրոսի վրայ:

ՍՐԲ. ՊԱՊԸ ԿԸ ՎԱԲԵՐԱՑՆԷ ՍԱՐԵՄԵԱՆ ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ՍԱՐՈՆԻԹ ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ ԿԱՆՈՆԱԳԻՐԸ

Բենեդիկտոս ԺԶ. Պապը վաւերացուց 1678-ին հիմնուած Մարոնիթ

Մարեմեան Միաբանութեան նոր օրէնքները, որոնք օրհնուած էին Պատրիարք Նասրալլա Մֆէյրի կողմէ:

Այս առիթով, 20 Յունիս 2008-ին, միաբանութեան մեծաւոր՝ հայր Ապու Ապտօ Պատարագ մատուցեց, իր քարոզին մէջ անդրադառնալով Միաբանութեան պատմութեան տարբեր հանգրուաններուն:

Յիշեցնենք, որ Միաբանութեան առաջին օրինագիծը հրատարակուած է 1700 թուականին, Պատրիարք Տուէյհի օրով, իսկ սուրբ Աթոռը 1732-ին վաւերացուցած է այդ օրէնքները: Յետագային նոր բաժիններ աւելցուած են Միաբանութեան օրինագիրքին մէջ, մինչեւ որ 1938-ին՝ միաբանական նոր օրէնքը հաստատուած է:

Ներշնչուելով Եկեղեցւոյ բարենորոգումի մթնոլորտէն, մանաւանդ Վատիկանի Երկրորդ Ընդհանուր Ժողովի տրամադրութիւններէն (1962-1965), եւ անկէ յառաջացած առաքելական որոշումէն «Perfectae Caritatis», ինչպէս նաեւ Պօղոս Զ. Պապի «Ecclesiae Sanctae» առաքելական նամակէն (1966), Մարոնիթ Մարեմեան Միաբանութեան արտակարգ ընդհանուր ժողովը իր առաջին նիստին՝ 1968-ին, կազմած էր հինգ անդամներով յանձնախումբ մը, վերամշակելու համար Միաբանութեան օրէնքները:

40 տարուայ աշխատանքներէ ետք, 2008-ին, սուրբ Աթոռը վաւերացուց Միաբանութեան վերջնական օրինագիծը, «Մարոնիթ Մարեմեան Միաբանութեան Օրէնքներ» անունին տակ:

ՊԱՏՐԻԱՐՔ ՏՈՒԵՅԻՒ՝ «ԱՍՏՈՒԾՈՅ ԾԱՌԱՅ» ՀՈՉԱԿՈՒԵՑԱԻ

Բենեդիկտոս ԺԶ. Պապը Մարոնիթ Եկեղեցւոյ Պատրիարք՝ Տուէյհին (1630 - 1704) հռչակեց նոր նուիրեալ Կաթողիկէ Եկեղեցւոյ, ունկնդրութեան մը ընթացքին, ուր յիշուեցաւ, թէ Սուրբերու Խորհուրդի նախագահ կարգինալ Մարգինէս տեղեկացուց այս առաջարկը Սրբ. Քահանայապետին, 3 Յուլիս 2008-ին: Այս առիթով Մարոնիթ Պատրիարք կարգինալ Մֆէյր շնորհակալութեան պատարագ մատուցեց Պքերքէի մէջ, ինչպէս նաեւ Էհտէնի ժողովրդապետութիւնը (նուիրեալին ծննդավայրը) այս առիթիւ յատուկ Պատարագ մը մատուցեց Յուլիս 6-ին:

Պատրիարք Տուէյհիի մասին:

- Ծնած է Լիբանանի Էհտէն գիւղաքաղաքը, 2 Օգոստոս 1630-ին, սուրբ Ստեփանոսի տօնին:

- Անցած է Հռոմ՝ 1655 թուին, ուսումը հոն շարունակելու համար:

- Քահանայ կ'օծուի 25 Մարտ 1656-ին, սուրբ Կուսի Աւետման տօնին:

- Կը նորոգէ սուրբ Յակոբ Ահպաշի վանքը, ուր կը հիմնադրէ պատանիներու համար նոր դպրոց մը:

- Կը ծառայէ Լիբանանի մէջ տարբեր ժողովրդապետութիւններու, ինչպէս նաեւ, զանազան անգամներ պատրիարքին կողմէ կ'ողբերուի Հա-

լէպ, հիմնելով մասնաւորապէս տեղւոյն Մարոնիթ վարժարանը:

- Եպիսկոպոս կը ձեռնադրուի Նիկոսիա, Կիպրոսի մէջ իր ծառայութեան շրջանին, 8 Յուլիս 1668-ին:

- Պատրիարք կ'ընտրուի 20 Մայիս 1670-ին: Պատրիարքութեան ամբողջ շրջանին կ'ունենայ մտաւորական գործունէութիւն, հրատարակելով աւելի քան 30 պատմական, աստուածաբանական ու եկեղեցական-ծխական գիրքեր:

- Հոգին կ'աւանդէ 3 Մայիս 1704-ին, եւ կը թաղուի պատրիարքներու գերեզմանատան մէջ, Քաննուպին:

ԲԵՆԵԴԻԿՏՈՍ ԺԶ. ՍՐԲԱԶԱՆ ՔԱՅԱՆԱՅԱՊԵՏԻ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՃԱՄԲՈՐԴՈՒԹԻՒՆԸ ԱԲՍՏՐԱԼԻԱ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐՈՒ ՅԱՄԱՇԽԱՐՅԱՅԻՆ 23ՐԴ ՕՐՈՒԱՆ ԱՌԹԻ

Աւստրալիոյ Սիտնէյ քաղաքը տօնական մթնոլորտ ապրեցաւ, որովհետեւ այս տարի հոն տեղի ունեցաւ Երիտասարդներու Համաշխարհային 23րդ Օրուան տօնախմբութիւնները:

12 Յուլիսին, տասնեակ հազարաւոր քիլոմետրեր կտրելէ ետք Երիտասարդութեան Համաշխարհային Օրուան խաչը հասաւ Սիտնէյ:

13 Յուլիս 2008ին, Աւստրալիան ընդունեց Բենեդիկտոս ԺԶ. Սրբազան Քահանայապետը: Աւստրալիացիները եւ համայն աշխարհէն եկած ուխտաւորները գրաւեցին Սիտնէյ քաղաքը, որուն կեդրոնը զարդարուած էր կարմիր, նարնջագոյն եւ դեղին գոյներով:

15 Յուլիսին, Երիտասարդութեան Համաշխարհային 23րդ Օրուան տօնակատարութիւնը սկիզբ առաւ հանդիսաւոր Պատարագով: Սիտնէյի Կաթողիկէ Եկեղեցւոյ առաջնորդ կարտինալ Ճորձ Փէլ իր քարոզին մէջ ըսաւ. «Քրիստոս իրեն կը կանչէ բոլոր անոնք որոնք կը տառապին, ոչ միայն կաթողիկէները եւ քրիստոնեաները, այլ մասնաւորապէս անոնք որոնք անկրօն են»: Սրբազան արարողութիւնը սկսաւ 168 երկիրներու դրօշակներու տողանցքով, ապա անոր յաջորդեց Ս. Աւետարանի թափօրը: Պատարագի ընթացքին զանազան լեզուներով կարդացուեցան աղաչանքներ եկեղեցւոյ միութեան, աշխարհի խաղաղութեան, բարոյապէս եւ նիւթապէս աղքատներու համար, ինչպէս նաեւ հաւատքի նահատակներու եւ երիտասարդութեան հաւատքի աճման եւ հզօրացման համար: Կարդ. Փէլին հետ համապատարագեցին 30 կարդինալներ եւ 300 եպիսկոպոսներ:

3 օրուայ հանգիստէ ետք հոգեւոր կրթութեան կեդրոնի մը մէջ, 17 Յուլիսին Նորին Սրբութիւնը պաշտօնապէս սկսաւ առաքելական ճամբորդութեան՝ տեսակցութիւններ ունենալով Աւստրալիոյ պետական եւ եկեղեցական իշխանութիւններուն հետ: Սրբազան Քահանայապետը պաշտօնապէս ընդունուեցաւ երկրի կառավարիչին պալատին մէջ առաւօտ-

եան ժամը 9:00-ին: Իր արտասանած առաջին ճառին մէջ Սրբազան Քահանայապետը ըսաւ. «Ուրախ եմ Աւստրալիոյ մէջ տօնախմբելու Երիտասարդութեան 23րդ Օրը, քանի որ Աւստրալիոյ Եկեղեցին բոլոր ցամաքամասներու ամէնէն երիտասարդ Եկեղեցին է եւ ամէնէն բազմացեղայինը»: Բենեդիկտոս ԺԶ. Քահանայապետը ըսաւ, թէ կաթողիկէ հասարակութիւնը Աւստրալիոյ մէջ կը շարունակէ բերել իր սատարը մասնաւորապէս դաստիարակութեան ու առողջապահութեան մարզերուն մէջ: Արարչագործութեան սքանչելիքները մեզ կը կանչեն պահպանելու բնութիւնը եւ իմաստութեամբ մատակարարելու հողին բարիքները: «Այդ ուղղութեամբ կը նշմարեմ,- ըսաւ Նորին Սրբութիւնը,- թէ Աւստրալիան լրջօրէն ու յանձնառութեամբ կը գործէ բնապահպանութեան ի խնդիր»: Ան ապա մատնանչեց թէ Աւստրալիոյ մէջ կ'ապրին զանազան կրօններու պատկանող համայնքներ. «այս ամէնը բարեբեր առիթ մըն է զարգացնելու համամիութենական երկխօսութիւնը եւ ուրախ եմ իմ այս կեցութեանս ընթացքին հանդիպում ունենալու կրօններու ներկայացուցիչներու հետ, քաջալերելու այս երկխօսութիւնը ճշմարտութեան ու սիրոյ մէջ»: Շարունակելով, Սրբազան Քահանայապետը ըսաւ, « Ես ձեր մէջ կը գտնուիմ հանդիպում ունենալու աշխարհի զանազան երկիրներէ եկած երիտասարդներու հետ: Կ'աղօթեմ սուրբ Հոգւոյն, որպէսզի իջնէ այս երկրին վրայ ու բարենորոգէ անոր բնակիչները: Թող Ս. Հոգին իմաստութիւն տայ երիտասարդներուն լաւագոյն ճամբան կարենալ ընտրելու համար: Սիրեցեալ Աւստրալիացի բարեկամներ, անգամ մը եւս շնորհակալ եմ ձեր ջերմ հիւրընկալութեան համար: Թող Տէրը օրհնէ ամէնքդ, օրհնէ ուխտաւորները եւ երկրին բնակիչները»:

Բենեդիկտոս ԺԶ. Սրբազան Քահանայապետը երիտասարդներու հետ հանդիպումէն առաջ այցելեց Երանուհի Մէրի Մաքքիլօփի սրբավայրը, որ ներկայիս ուխտավայր եղած է բոլոր աւստրալիացիներուն: Երանուհի Մաքքիլօփ իր ամբողջ կեանքը նուիրած է ի սպաս աղքատներուն եւ անգլերագէտներուն:

Քահանայապետին Երիտասարդութեան Համաշխարհային 23-րդ Օրունան առաքելութեան 2-րդ օրը սկսաւ սուրբ Պատարագի մատուցումով: Ապա Սրբազան Հայրը յաջորդաբար ընդունեց Սիտնէյ քաղաքի կառավարիչը, քաղաքապետը եւ անոնց ընտանեկան պարագաները: Իսկ առաջնորդանիստ եկեղեցւոյ մէջ տեղի ունեցաւ համամիութենական հանդիպում մը քոյր եկեղեցիներու հետ: Եկեղեցւոյ կից գտնուող սրահին մէջ, Սրբազան Պապը ընդունեց զանազան կրօններու ներկայացուցիչները: Յետմիջօրէին, Սրբազան Քահանայապետը գլխաւորեց Ճանապարհ Խաչի բարեպաշտութիւնը, իսկ երեկոյեան Յիսուսի Սրտի նուիրուած մատրան մէջ հանդիպում ունեցաւ անկար երիտասարդներու հետ:

Երիտասարդները յաճախ կ'ոգեկոչեն Երիտասարդներու Համաշխարհային Օրը որպէս իրենց հաւատքի կեանքին կարեւոր մէկ դէպքը

տարւոյն ընթացքին: Երջանկայիշատակ Յովհաննէս Պօղոս Բ. Պապը եղաւ նախաձեռնողը եւ հեղինակը այդ Օրուան եւ եթէ երիտասարդները կը շարունակեն մեծ թիւով մասնակցել այդ Օրուան, կը նշանակէ, որ անիկա այլեւս իր բնականոն ընթացքին մէջն է:

«ԱՌՕՐԵԱՅ ԱԷՏԱՐԱՆ»Ը ԲՈԼՈՐ ՀԱՅԵՐՈՒՆ ՀԱՄԱՐ

Արդէն համացանցի վրայ է «Առօրեայ Աւետարան» կայքէջի հայերէն բաժինը, որ 10 այլ լեզուներու կողքին, պիտի փոխանցէ Աւետարանի պատգամը նաեւ հայերէնով:

Այս նախաձեռնութեան նպատակն է տարածել Աստուծոյ խօսքը այն բոլոր հայերուն, որոնք համացանցը կ'օգտագործեն:

11 լեզուներով տարածուող այս կայքէջին անդամակցութեան թիւը աշխարհի տարբեր երկիրներէն կը հասնի 300.000-ի: Մաղթենք որ լիբանանահայու թիւը, ինչպէս նաեւ համայն աշխարհի հայ այցելուները կ'անդամակցին կայքէջին, որպէսզի օգտուին Աստուծոյ խօսքէն եւ օժանդակեն կայքէջին զարգացման եւ բարելաւման:

«Առօրեայ Աւետարան» համացանցային էջի յանձնախումբը կը բաղկանայ աշխարհական երիտասարդներէ եւ երիտասարդուհիներէ, որոնցմէ եղբայր Մաթոսեան ստանձնած է հայերէն բաժնի համադրումը եւ կը վայելէ օժանդակութիւնը Կաթողիկէ Եկեղեցւոյ ծիրանաւորներուն, ինչպէս Ընկերային Հաղորդակցութեան Միջոցներու պատասխանատու՝ Գերապայծառ Ճօն Ֆօլէյին եւ այլ հաստատութիւններու:

Այցելեցէ՛ք www.aroriaavedarane.org հասցէն:

Առօրեայ Աւետարանը կը գտնուի նաեւ www.armeniancatholic.org-ի ծիսական բաժնի ծիսական օրացոյցին սկիզբը:

ՍՈՒՐԲ ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԾՆՆՌԵԱՆ 2000ԱՄԵԱԿԻ ՀԱՆՌԻՍՈՒԹԻՒՆՆԵՐ

Անատոլը սուրբ Պօղոսի առաջին առաքելավայրը ըլլալով, «Պօղոս Առաքեալի Տարի»ին բացման հանդիսութիւնները կատարուեցան Տարսոնի քաղաքի սուրբ Պօղոս թանգարան եկեղեցւոյ մէջ, 21 - 22 Յունիս 2008-ին, միջեկեղեցական արարողութեամբ եւ սուրբ Պատարագով:

Հանդիսութիւններուն ներկայ եղան Մերսինի կուսակալը եւ Տարսոնի բարձրաստիճան պաշտօնատարներ, Վատիկանի պատուիրակութիւնը, յոյներու եւ հայոց պատրիարքական աթոռներու ներկայացուցիչները, ինչպէս նաեւ ասորի եւ մարոնիթ եկեղեցիներէն ներկայացուցիչներ:

Վատիկանի հովանաւորութեամբ եւ Անատոլի լատին առաջնորդ Լուի-ճի Եպս. Բատովէզէի նախաձեռնութեամբ կազմակերպուած այս հանդիսութիւններուն իր կարեւոր ներդրումը ունեցաւ Տարսոնի քաղաքապետարանը:

Նոյն ծիրէն ներս, Հռոմի սուրբ Պօղոս Առաքեալի Պազիլիքային մէջ տեղի ունեցաւ սուրբ Պօղոսի ծննդեան 2000ամեակի տօնակատարութիւնը, որուն ընթացքին Բենեդիկտոս ԺԶ. Սրբազան Քահանայապետին հովանաւորութեամբ բաց հռչակուեցան «Պօղոս Առաքեալի Տարի»ին հանդիսութիւնները: Այս առիթով, Կիրակի 29 Յունիս 2008-ին, Պոլսոյ Պուլյուքտերէի սուրբ Պօղոս Հայ Կաթողիկէ եկեղեցւոյ մէջ, Արհ. Գէորգ Արք. Խազումեան հանդիսաւոր սուրբ Պատարագ մատուցեց եւ փոխանցեց օրուան պատգամը հաւատացեալ ժողովուրդին:

Յաւարտ սուրբ Պատարագին ժողովուրդը մասնակցեցաւ սիրոյ սեղանին, որ պատրաստած էին տեղւոյն թաղական խորհուրդի հոգաբարձուները:

«Սուրբ Պօղոսի Տարի»-ին առթիւ:

ՍԱԽՈՒՂ... ՍԱԽՈՒՂ...

Ո՛վ բարեկամ, լսած ես
Քրիստոսի կանչը՝ «Սաւուղ... Սաւուղ...»,
Սաւուղ, որ Պօղոս դարձած՝
եղաւ աշխարհակալ Առաքեալը
իր յիսուսասէր սիրագործութիւններով:

Սաւուղ կտրիճ էր, պայքարող
եւ սպաննիչ՝ ի սէր իր մովսիսական կրօնին,
ի սէր Աստուծոյ «նախընտրեալ» ժողովուրդին...:
Ծայրայեղ եւ արիւնռուշտ հոգիով՝
դէմ էր Քրիստոսի կրօնին,
որուն հետեւորդները կը հալածէր,
անգթօրէն կը քարկոծէր,
կը ձերբակալէր, կը բանտէր,
կ'առաջնորդէր սպանութեան
եւ անոնց հաւաքատեղիները կը քանդէր...:

- Այսպէ՛ս մինչեւ հրաշքին դիպումը,
որով Սաւուղ դարձաւ Պօղոս...:
Հրեայ քահանայապետերը քաղաքներ ղրկեցին Սաւուղը՝
քրիստոնեաներու հալածանքին ու սպանդին համար,
ամենուրեք եւ աւելի վայրագօրէն...:
Ղրկեցին Դամասկոս,
որուն ճանապարհին,
յանկարծակի, այդ խաղաղ երկինքը,
փայլատակեց ու շանթահարեց...:
Կարաւանի ձիերն ընդոստացան,
մարդերը զարհուրեցան,
միշտ անաս եղած Սաւուղ սարսափեցաւ,
գետին փռուեցաւ,

եւ աչքերը բաց էին, բայց չէին տեսներ...:
Եւ ահա, խաղաղ ձայնը հնչեց լոյսի մէջէն,
« Սաւո՛ւղ..., Սաւո՛ւղ..., ինչո՞ւ կը հալածես զիս»...:
Սաւուղ, գրեթէ անզգայ, պատասխանեց,
- Ո՛վ ես, Տէ՛ր...:
- Ես եմ Յիսուս:
- Տէ՛ր, ի՞նչ կ'ուզես, որ ընեմ...:
- Ոտքի ե՛լ եւ քաղաք գնա՛:
Հոն պիտի ըսուի քեզի, թէ ի՛նչ պիտի ընես...:

Եւ հրաշքը պատահեցաւ, ո՛վ Բարեկամ,
հրաշքն յեղափոխումի՛, հոգեփոխումի՛..., մարդափոխումի՛...:
Սաւուղէն Պօղոս, Հալածիչէն Սուրբ՝
այդ անձը կը դառնայ մոռնետիկը նոր կրօնին,
կը դառնայ պաշտպանը նոր հաւատաւորներուն,
կը հանդիսանայ մարդկայնօրէն մտածող ու գործող
եւ կ'ըլլայ սիւնը Տիեզերական Եկեղեցիին:
Ազատարարը ստրուկներու՝
կ'աւետէ փրկութիւնը մարդուն
եւ կը քարոզէ արդարութիւնը բոլոր մարդերուն՝
Խաչեալ Մեսիայով:

Սուրբ Պօղոս, ո՛վ Բարեկամ,
տարբերութիւն չի դներ ո՛չ սեռի եւ ո՛չ գոյնի,
ո՛չ աստիճանի եւ ո՛չ մակարդակի,
քանի բոլորս գաւակներն ենք Աստուծոյ
եւ քոյր-եղբայրներ Տէր Յիսուսի,
որ յեղափոխեց, հոգեփոխեց ու մարդափոխեց Սաւուղը:
Սուրբ Պօղոս, ո՛վ Բարեկամ, կը սորվեցնէ,
թէ Յիսուս Քրիստոս, Խաչեա՛լը, Աստուծոյ Որդին է,
եւ կը քարոզէ Անոր հաւատքը հրաշունչ,
որ, սակայն, առանց սիրոյն, ոչինչ է...:
Մէրը տիեզերակալ Պօղոս Առաքեալին
է՛ ան ընկերային ու մարդկայնական:
Ուստի, կը յայտարարէ, որ
«եթէ մարդերու բոլոր լեզուները խօսիմ...,
եթէ բոլոր մարգարէութիւններն ունենամ...,
եթէ ամբողջ հաւատքը ցուցադրեմ...,
եթէ զիս մատնեն կրակի ու հալածանքի...,

բայց սէրը չունենամ,
ոչի՛նչ եմ..., ոչի՛նչ եմ..., ոչի՛նչ եմ...:
Սէրը մեծագոյնն է»:

Այո՛, ո՛վ Բարեկամ, իմացար
էութիւնը Պօղոս Առաքեալին,
եւ որոչ չափով ըմբռնեցիր
ուսուցումը, գիտակցութիւնն ու կենցաղավարումը այն անձին,
որ յանդգնեցաւ ելլել կայսրին առջեւ, ու Հռոմի մէջ,
այդ քարոզած սիրոյն մէջ եւ այդ սէրէն՝ գլխատուեցաւ
Քրիստոսի՝ աշխարհի Փրկիչ-Ազատարարին համար...:

Արդ, ո՛վ Բարեկամ, այսօր,
երկու հազարամեակէն վերջ,
այսօր կը լսես խօսքերը,
գրեթէ ամէն օր,
կամ կը կարդաս գրութիւնները
այդ տրուպ, բայց նաեւ այդ հզօր Առաքեալին...:
Այո՛, այսօր, երկու հազար տարիներ վերջ,
Դո՛ւն ի՞նչ կ'ըսես այդ Առաքեալին մասին...:
- Դեռ ան բռնկող է,
հրապուրիչ է,
արծարծող է,
հրահրող է,
ինչպէս էր ժամանակին,
երկու հազար տարիներ առաջ,
ինչպէս էր կեսարներու,
արքաներու,
քահանայապետներու,
իմաստուններու եւ փրկիչութեաներու ղիմաց...:

Այսօր, երբ Եկեղեցին հռչակած է
«ՊՕՂՈՍԵԱՆ ՏԱՐԻ»-ն,
Քեզի, ո՛վ Բարեկամ,
Սուրբ Պօղոսի խօսքը
խորհրդանի՞չ է Քու բնաբանիդ...,
հրդեհո՞ղ Քու գաղափարներուդ...,
իտէա՞լ է Քու կեանքիդ...:
Եթէ «այո՛» է պատասխանդ,

երանի՛ր՝ Քեզի... , Քեզի՛ երանի,
 որովհետեւ այն ատեն
 Պօղոսի Խաչեալը,
 Փրկիչն աշխարհին,
 է՛ Քո՛ւ Խաչեալը, Քո՛ւ Փրկիչը... :
 Թէեւ ցաւալի եւ ողբալի է,
 որ Պօղոսի Խաչեալը,
 Փրկիչն աշխարհին,
 երէկ եւ այսօր,
 յիմարութիւն է հեթանոսներուն,
 հին ու նոր՝ հեթանոսներուն... :
 Դուն, ո՛վ Բարեկամ,
 ապրի՛ս Խաչով,
 Խաչելութեամբ,
 Խաչեալով... :
 Մանաւանդ այսօր,
 Պօղոսի նման,
 որ ապրեցաւ ու շնչեց
 Խօսքը Քրիստոսի՝
 համայն աշխարհին պատգամելու համար... :
 Այո՛, ո՛վ Բարեկամ,
 այն ատեն կ'ըլլաս դուն քրիստոնեայ,
 յատուկ իմաստով եւ գործօն առօրեայով,
 քրիստոնեայ, քրիստոսական՝
 սիրո՛վ ընկերոջ,
 սիրո՛վ թշնամիին
 եւ սիրո՛վ աստուածային Գաղափարին ու Գաղափարականին... :
 Ո՛վ Բարեկամ,
 յարգա՛նք ու մեծարա՛նք
 Սաւուղ-Պօղոսին՝
 մինչեւ այսօր մեծագոյն աշխարհակալ Քարոզիչին... :

Հ. Յովսէփ Վրդ. Թոփալեան Կ. Մ.

ԱԶԳ ԻՄ ՀԱՅԿԱԶԵԱՆ

Պիտի ուզէի
Անարդարութեան
Զէնքերը բոլոր
Հաւաքել, այրել
Մեծ խարոյկին մէջ
Սիրոյ միութեան
Բոցերով վառուած:
Ապա վերստին
Գարնան վարդաբոց
Արչալոյսներու
Ժպիտով պայծառ
Ողջունել քու հեզ
Սիրտդ վիրաւոր,
Եւ Քու յաղթական
Ճակատդ պայծառ՝
Ազգ իմ Հայկազեան:

Պիտի ուզէի
Քեզ տեսնել առողջ,
Քեզ տեսնել ամբողջ,
Ո՛չ անդամատուած
Երկիր հայրենի:
Պիտի ուզէի
Հզօր ազգերու
Կողքին կանգնած

Համահաւասար
Իրաւունքներով,
Տեսնել քեզ ուրախ:
Մահուան դիմաց միշտ
Կանգնած յաղթական՝
Դրօշիդ ներքեւ
Ազգ իմ հայկազեան:

Եւ այդ յաղթական
Բարձունքէն վսեմ՝
Խանդակաթ սիրով
Ողջունէիր քու
Աշխարհացրիւ
Որբ զաւակներուդ
Տուն դարձը Բարի:
Եւ ազատօրէն
Եւ ճակատաբաց
Ըսէիր խօսքեր
Դուն եղբայրական
Հանուր մարդկութեան,
Ու արդարութեան
Եւ իրաւունքի
Դրօշիդ դիմաց
Ազգերը բոլոր
Կենային Պատուի:

ՅԱԿՈՒԲ ԲԱՄՊԱԿԵԱՆ

ՔՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԽՄԲԵՐԱՆ

ՀԱՅՐ ՄԵՍՐՈՊԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ 91

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ

ԹՈՒՂԹ ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ
ՔԱՀԱՆԱՆԵՐՈՒ ՍՐԲՈՒԹԵԱՆ
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՂՕԹՔԻ ՕՐՈՒԱՆ ԱՌԹԻՒ 93

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՏԳԱՄ
ՄԱՅԻՍ ԱՄՍՈՒԱՆ ՈՒԽՏԱԳՆԱՅՈՒԹԵԱՆ
ՕՐՈՒԱՆ ԱՌԹԻՒ 101

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՏԳԱՄ
ՊԱՅԾԱՌԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ ՏՕՆԻՆԲԱՐԵՐԱՐՆԵՐՈՒՆ
ԵՒ ՀԱՄԱՅՆ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ
ԴԻՏԱՒՈՐՈՒԹԵԱՆ 104

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՏԳԱՄ
ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹԵԱՆ ԱՌԹԻՒ 107

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՏԳԱՄ
ՎԵՐԱՓՈԽՄԱՆ ՏՕՆԻՆ ԱՌԹԻՒ 110

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՏԳԱՄ
ԽԱԶՎԵՐԱՅԻ ՏՕՆԻՆ ԱՌԹԻՒ 114

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՏԳԱՄ
Ս. ԾՆՆԴԵԱՆ ՏՕՆԻՆ ԱՌԹԻՒ 118

ԵՊԻՍԿՈՊՈՍԱՅ ՍԻՒՆՀՈԴՈՍ	122
ԱՅՑ ՀԱՅԱՍՏԱՆ ԵՒ ՎՐԱՍՏԱՆ	130
ԸՆԴՄԻՋՈՒՄ ԿԱԹՈՂԻԿԷ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՅ ՍԻՒՆՀՈԴՈՍԻՆ	135
ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏԱԿԱՆ ՄԻՋ-ԿՐՕՆԱԿԱՆ ԵՐԿԽՕՍՈՒԹԵԱՆ ԺՈՂՈՎ	137
ԼԻՔԱՆԱՆԻ ՀՈԳԵՒՈՐ ՊԵՏԵՐՈՒ ԺՈՂՈՎ	138
ԱՅՑ ՆԱԽԱԳԱՀ ՍԼԷՅՄԱՆԻՆ	140
ԱՐԵՒԵԼՔԻ ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐՔՆԵՐՈՒ 18-ՐԴ ՀԱՄԱԺՈՂՈՎ	142
ՇՆՈՐՀԱՒՈՐԱԳԻՐ ՏԻԿԻՆ ՀՐԱՆՈՒՇ ՅԱԿՈԲԵԱՆԻՆ	143
ՌՈՒՄԱՆԱՀԱՅ ՆԱԽԱՐԱՐԸ ԱՅՑԵԼԵՅ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆ	144
ՀԱՆԴԻՊՈՒՄ ՖՈՔՈԼԱՐԻ ՇԱՐԺՈՒՄԻ ԱՆԴԱՄՆԵՐՈՒ ՀԵՏ	144

ԳԱՐԵԳԻՆ Բ. ՎԵՀԱՓԱՌԻՆ ԱՅՑԸ ՎԱՏԻԿԱՆ	145
ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ԱՅՑԸ ԼԵՒՈՆԵԱՆ ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՅ ՎԱՐԺԱՐԱՆ	146

Ս. ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՒԹԻՒՆԸ	148
ՀԱՄԱՌՕՏՈՒԹԻՒՆ ՍՈՒՐԲ ԳՐՔԻ ՍԻՒՆՀՈԴՈՍԻ ԱԻԱՐՏԻՆ	153

ՄՈՎՍԷՍ ԽՈՐԵՆԱՅԻՆ «ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ»
ԵՐԿԻՆ 1500ԱՄԵԱՅ ՅՈՒԵԼԵԱՆԻՆ ԱՌԹԻԻ
ՄԵՍՐՈՊ ՀԱՅՈՒՆԻ 157

ԳԵՐԱՊԱՅԾԱՌ Հ. ՍԱՀԱԿ ԵՊՍ. ԿՈԳԵԱՆԻ
ՆՈՒԻՐՈՒԱԾ ԳԻՐՔԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒՄ 171

ԼՈՒՐԵՐ ԹԵՄԵՐԷՆ

ՍԱՐԿԱԽԱԳԻ ՉԵՌՆԱԴՐՈՒԹԻՒՆ
ՐԱՖՖԻ ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆԻՆ 174

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱԻՈՐԻՉ ՍԿԱՈՒՏԱԽՈՒՄԲԻ
ՀԻՄՆԱԴՐՈՒԹԵԱՆ 80ԱՄԵԱԿ 175

ՀԱՆԴԻՊՈՒՄ «ՎԵՐԱՊՐՈՂ ՎԿԱՆԵՐ»
ԳԵՂԱՆԿԱՐԻ ՀԱՅԱՍՏԱՆ ՓՈԽԱԴՐՈՒԹԵԱՆ
ԱՌԻԹՈՎ 177

ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏԻ ՄԱՀՈՒԱՆ
73ՐԴ ՏԱՐԵԼԻՑԸ 178

ՃԻՆԻՇԵԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ
ԽՈՐՀՐԴԱՏՈՒ ՄԱՐՄԵԻ ՆՈՐ ԱՆԴԱՄՆԵՐՈՒ 179

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ
ՄԱՄՆԱԿՅՈՒԹԻՒՆԸ ԶՐԻՍՏՈՆԵԱՅ ՄԱՄՈՒԼԻ
ՅՈՒՅԱՀԱՆԴԵՍԻՆ 179

«ԲԼԲՈՒԼ» ԵՐԳՉԱԽՈՒՄԲԻ 25ԱՄԵԱԿ 180

ՄՈՆԹՐԵԱԼԻ ՏԻՐԱՄԱՅՐ ՆԱՐԵԿԻ
ԵԿԵՂԵՅԻՈՅ 25ԱՄԵԱԿ 182

360° ԼՈՒՐԵՐ

183

ԳՐԱԿԱՆ

ՍԱԽՈՒՂ... ՍԱԽՈՒՂ...
Հ. Յովսէփի Վրդ. Թովալեան Կ. Մ. 189

ԱԶԳ ԻՄ ՀԱՅԿԱԶԵԱՆ
ՅԱԿՈՒԲ ԲԱՄՊԱԿԵԱՆ 193

«Աւետիք»ը պաշտօնաթերթն է Հայ Կաթողիկէ Պատրիարքութեան. կը հրատարակուի պարբերաբար: Կ'ընդգրկէ Ամենապատիւ Հոգեւոր Տիրոջ պատգամը, զանազան յօդուածներ եկեղեցին հետաքրքրող միւթերուն շուրջ. պարունակելով նաեւ Հայ Կաթողիկէ եկեղեցւոյ թեմերուն լուրերը, եւ ընդհանուր արձամբ Կաթողիկէ եկեղեցւոյ լուրերն ու համաշխարհային կարեւորագոյն եղելութիւններուն:

* * *

« أفيدك » مجلة بطريركية الأرمن الكاثوليك الرسمية تصدر دوريا . تتضمن رسالة صاحب الغبطة البطريرك، ومقالات عديدة تهتم الكنيسة. وتشر أخبار أبرشيات الكنيسة الارمنية الكاثوليكية، الى جانب نشر أخبار الكنيسة الكاثوليكية بشكل عام. هذا بالإضافة الى التطرق لأهم الأحداث العالمية المهمة.

* * *

Revue "Avedik", propriété du Patriarcat Arménien Catholique, publiée périodiquement.

Comprend le message de S.B. le Patriarche, certaines écrites ecclésiastiques, les nouvelles des éparchies et des communautés de l'Église Arménienne Catholique, et les neuves de l'Église Catholique en général. Voire les événements mondiaux importants.

Président de la commission patriarcale de la Revue "Avedik"

Son Excellence Mgr. Vartan Ashkarian

adresse:

Patriarcat Arménien Catholique

Rue Hôpital Orthodoxe - Geitawi

2078-5605 Beyrouth-Liban

telephone: fax:

(00961).1.570.555/6/7/8

website: www.armeniancatholic.org

e.mail: info@armeniancatholic.org

